

449

2 (075)  
U-15  
1895

442001

2010

2(075)  
U-15 ԱՐ (Փ ո փ ո ի ա ծ)

# ՄՐԲԱԶԱՆ ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

## ՀԻՆ-ՌԻԽՏԻ

«Եկայք որդեակը իմ  
«Եւ լուարուք ինձ  
«Եւ զերկիւղ Տեառն  
«Ուսուցից ձեզ»:

Սաղմոս

1006  
1045  
1046  
(

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխատասիրեց

ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆ

(Միաբան Մողնոյ Սուրբ Գէորգ եկեղեցոյ)



Մրա նիւթի մշակութիւնը տպուած է առանձին՝ «Դասագիրք  
կրօնի» ուղեցոյց հայ կրօնուսոյցների համար:

Տ Փ Խ Ի Ս  
Տպար. Մ. Շարաձէի եւ Ընկ. || Տիպ. Մ. Շարաձե և Կ°.  
Նիկոլ. ուլ. № 21.

1895

205-21-60

34077 - սեհ-

Բագրատ  
Հայոց Տառական

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

S. S. ՄԿՐՏՉԻ Ա.

Սըբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սըբրոյ Կաթողիկէ Հշմիածնի:

Ընթերցեալ զալս գրքուկ «Սըբազան պատմութիւն Հին-Ռւխտի» չգտի ինչ ընդդէմ ուղիղ վարդապետութեան եկեղեցւոյ, ուստի թուլատը երկրորդ տպագրութեամբ ի լոյս ընծառել: Ի 27 Ապրիլի 1890 ամի ի Ս. Եշմիածնի:

Նախադահ տպարանական Ժողովոյ՝ Աշխատակէս Կպիսկոպոս:

S. Կ.

## Ա Զ Գ

«Սրբազն պատմութիւն» հին-ուլստի նիւթի մշակութիւնը տպագրուած է առանձին—«Դասագիրք կրօնի» անունով:

Մեր կարծիքով աշակերտաց ձեռը սրբազն պատմութեանմի առանձին դասագիրք տալն աւելորդ է, ամենաընտիր և նպատակայարմար դասագիրքը հէնց Սուրբ գիրքը՝ բնագիրն է։ Բայց որովհետև մեր մէջ այդ բանը մի քանի դժուարութիւններ ունի, չասեմ անկարելիութիւններ, մանաւանդ ստորին գոտատանց համար—զորորինտկ լեզուն, զըքի ստուարութիւնը, զինը, հազուագիւտ լինելը, ուստի ի հարկէ ստիպեալ՝ մեր նըգիրը, հազուագիւտ լինելը, ուստի ի հարկէ ստիպեալ՝ մեր ապատակին հասնելու համար՝ այսինքն մեր ցանկացած կրօնական-բարոյական խմաստները սաներին հազորդելու համար, բական-բարոյական սիմոնական կամաց այս նիւթերը՝ ըստ կարելոյն պահպանով բնագրի ոճը։

Տայ Աստուած, որ հասակով և սրտով մանուկները նոյնաշափ սիրեն այս գրքոյից՝ որչափ և սրա բնագիրը։

Ա. Ք. Ա.

Տիկիս 1888

## Ա. ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐ

1. ա.

ԱՃԽԱՐՀԻՍ ԱՐԱՐՉԱԳՈՒԹՈՒԹԻՒՆԸ

Ա. Աստուած սկզբում ստեղծեց Երկինքն ու երկիրը։ Երկիրն անպատճառատ էր և խաւարով ծածկուած։ Աստուած ասաց. «Թո՛ղ լոյս լինի» և խկոյն լոյս եղաւ։ Աստուած բաժանեց լոյսը խաւարից. լուսոյ անունը զըքաւ ցերեկ, իսկ խաւարինը՝ գիշեր։ Այսպէս ցերեկից և գիշերից կազմեց առաջին օրը։

Բ. Աստուած ասաց. «Թո՛ղ հաստատութիւն լինի ջրերի մէջ, որպէսզի բաժանէ նրանց միմեանցից։ Աստուած ստեղծեց հաստատութիւնը և բաժանեց նրա վերևի և ներքևի ջրերը միմեանցից։ Հաստատութեան անունը դրաւ Երկինք։ Այսպէս անցաւ էլի մի ցերեկ և մի գիշեր ու դարձաւ մի օր՝ Երկրորդ օր։

Գ. Աստուած ասաց. «Թո՛ղ Երկնքի ջրերը մի տեղ հաւաքուեն և ցամաքը բաժանուի ջրերից»։ Այսպէս էլ եղաւ։ Աստուած ցամաքի անունը դրաւ Երկիր, իսկ ջրերինը՝ ծով։

Աստուած ասաց. «Թո՛ղ Երկրիս վրայ կանանչեն խոտեր, ծաղիկներ, պտղատու ծառեր և ամենքն էլ իրանց տեսակի նման պտղուղ տան։ Այսպէս էլ եղաւ։ Անցաւ էլի մի գիշեր և մի ցերեկ ու դարձաւ մի օր՝ Երրորդ օր։

**Պ.** Աստուած ասաց. «Թող երկնքի վրայ լուսաւոր-ներ երևան ու երկիրը լուսաւորեն»: Աստուած պատ-րաստեց մի մեծ լուսաւոր՝ ցերեկը և մի փոքր լուսա-ւոր՝ գիշերը կառավարելու համար: Բացի դրանցից ստեղծեց նաև շատ աստղեր: Այսպէս անցաւ էլի մի ցե-րեկ և մի գիշեր ու դարձաւ մի օր՝ չորրորդ օր:

**Ե.** Աստուած ասաց. «Թող ջրերը լցուեն ձկներով, իսկ օդը՝ թռչուններով»: Այն ժամանակ ջրերը լցուե-ցան բազմաթիւ կենդանիներով, իսկ օդի մէջ թռչում էին ամեն տեսակ թռչուններ: Այսպէս անցաւ էլի մի գիշեր և մի ցերեկ ու դարձաւ մի օր՝ հինգերորդ օր:

**Զ.** Աստուած ասաց. «Թող երկրիս վրայ լինին չոր-քոտանի կենդանիներ—գազաններ և զեռուններ»: Այս-պէս էլ եղաւ:

«Զի նա ասաց՝ եւ եղեն, ինքն հրամայեաց՝ եւ հաստա-տեցան»:

Ինչպէս որ Աստուած ասաց, այնպէս էլ եղաւ, հրամա-յեց ու կատարուեց:

«Ուրակէսպի մեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ իմաս-տութեամբ արարեր, եւ լցաւ երկիր ստեղծուածովք քովք»:

Ի՞նչպէս մեծ են քո գործերն, Աստուած, դու ամենայն քան իմաստութիւնով ստեղծեցիր ու երկիրը լցուեց քո ստեղ-ծուածներով:

## 1. Բ.

### ՄԵՐԴՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

**Ա.** Աստուած ասաց. «Եկէք մարդ էլ ստեղծենք, որ իշխէ ծովի ձկներին, երկնքի թռչուններին և երկ-րիս կենդանիներին»:

**Բ.** Աստուած ստեղծեց մարդուն իւր պատկելի նման—վեր առաւ երկրից հող ու նրան կենդանի շունչ փշելով՝ անմահ հոգի տուաւ և անունը Աղամ դրաւ:

**Գ.** Աստուած ասաց. «Լաւ չէ մարդու համար, որ մենակ լինի, ստեղծենք Աղամի նման մէկը, որ նրան օգնական լինի»: Այն ժամանակ Աստուած Աղամին քը-նացրեց. հանեց կողերից մինն ու նրա համար մի օգ-նական՝ կին ստեղծեց և անունը դրաւ Եւա: Աստուած օրհնեց նրանց և ասաց. «Աճեցէք, բազմացէք և լցրէք երկիրն ու տէր եղէք բոլոր անասուններին, թռչուններին և զեռուններին»:

**Դ.** Այսպէս Աստուած երկինքն ու երկիրը իւր բո-լոր պատկանելիքներով վեց օրում ստեղծեց, իսկ եօթ-ներորդ օրում հանդստացաւ և սրբեց ալդ օրը:

«Խոստովան եղէց քեզ, Տէր, զի ահեղ եւ սքանչելի ես. սքանչելի են գործք քո, եւ անձն իմ սիրեաց յոյժ»:

Խոստովանում եմ քեզ, Աստուած, որ դու մեծ ես և հրա-շալի, զարմանալի են քո գործերն և ես շատ սիրեցի քեզ:

«Մեք սիրեացուք զԱստուած, վասնզի նախ նա սիրեաց զմեզ»:

Մենք պէտք է սիրենք Աստուածուն, որովհետև նա ինքն առաջ սիրեց մեզ:

## 2.

### ԴՐԱԽԵՑ

Աստուած Եղեմի մէջ մի պարտէզ տնկեց և անու-նը դրախտ դրաւ: Պարտէզը զարգարեց ամեն տեսակ ծառերով: Ծառերը շատ գեղեցիկ էին և համով պատուզներ ունեին: Աստուած բնակեցրեց Աղամին ու

Եւալին այդ պարտիզի մէջ, որ մշակեն նրան և պահպանեն:

Երբ Աստուած ամեն տեսակ կենդանիներ և թըռչուններ ստեղծեց, պատուիրեց Ադամին ու Եւալին, որ խնամք տանեն նրանց: Ագամը տէսնելով բոլոր կենդանիները, ամեն մինին յարմարաւոր անուններ տուաւ:

Պարտիզի մէջ տեղում երկու ծառ կար՝ մինի անունն էր «ծառ կենաց», իսկ միւսինը՝ «ծառ գիտութեան բարւոյ և չարի»:

Աստուած պատուիրեց Ադամին ու Եւալին և ասաց. «Պարտիզի բոլոր ծառերի պտուղներից կարող էք ուտել, բացի «ծառ գիտութեան բարւոյ և չարի» ծառի պտղից. հէնց որ նրանից ուտէք, իսկոյն կմեռնէք:

«Բանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»:

Նրանով կարող ենք ցոյց տալ Աստուծուն, թէ իրան սիրում ենք, եթէ նրա պատուիրանները պահենք, իսկ նրա պատուիրանները ծանը բաներ չեն:

### 3.

#### ՊԵՏՈՒԻՐԱՆԱԶԱՆՑՈՒԻԹԻՒՆ

Ա. Օձը երկրս բոլոր կենդանիներից իմաստունն էր. նա եկաւ Եւալի մօտ և ասաց. «Ուզի՞ղ է, որ Աստուած ասել է ձեզ, թէ պարտիզի բոլոր ծառերի պըտուղներից չուտէք»: Կինը պատասխանեց օձին. «Պարտիզի բոլոր ծառերի պտուղներից իրաւունք ունինք ուտելու՝ բացի այն մէկ ծառի պտղից, որ պարտիզի մէջ տեղումն է, եթէ նրանից ուտենք, կմեռնենք»: Օձը նորից խօսեց կնոջ հետ և ասաց. «Դուք չէք մեռնի,

ընդհակառակն, եթէ ուտէք, Աստուած կդառնաք և կիմանաք չարն ու բարին:

Բ. Կինը հաւատաց օձին, նա կարծեց թէ դա մի նշանաւոր ծառ պիտի լինի, որի պտուղն ուտողը իմաստուն է դառնում, ուստի և կերաւ: Կինը մարդուն ևս տուաւ այդ պտղից. նա էլ առաւ և կերաւ:

Գ. Այս բանից յետոյ լսեցին Աստուծու ոտի ձայնը պարտիզի մէջ. վախեցան և ամաչում էին, դրա համար էլ թաք կացան: Երբ Աստուած այս բանը տեսաւ, ձայն տուաւ Ադամին և ասաց. «Ո՞րտեղ ես»: Ադամը պատասխանեց. «Վախենում եմ, դրա համար էլ թաք կացայ»: Աստուած ասաց. «Չլինի՞ թէ այն ծառի պտղիցը կերար»: Ադամը պատասխանեց. «Այս կինը, որ դու տուիր, նա տուաւ ինձ, ես էլ կերայ»: Աստուած կնոջն ասաց. «Այդ բնչ ես արել»: Կինը պատասխանեց. «Օձը խարեց ինձ, ես էլ կերայ»:

Դ. Այն ժամանակ Աստուած ասաց օձին. «Անիծեալ լինիս բոլոր կենդանիների մէջ. փորիդ վրայ սոզաս և հող ուտես քո ամբողջ կեանքում»: Յետոյ դարձաւ դէպի կինն և ասաց. «Քո հոգսերը կշատացնեմ. ցաւով որդի ծնես»: Վերջն Ադամին ասաց. «Որովհետեւ ինձ չլսեցիր, այդ պատճառով այն կտոր հացը, որ պիտի ուտես, երեսիդ քրտինքովը ձեռք բերեա՝ մինչև որ նորից հող դառնաս, որտեղից ստեղծուեցար»:

Սրանից յետոյ Աստուած Ադամին ու Եւալին դրախտից դուրս արաւ. նրանք սկսեցին հողագործութիւնով պարապել: Դրախտի դրանը սուրը ձեռին մի պահապան հրեշտակ նշանակեց:

«Ոչ թէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն, և ոչ բնա-

կին առ քեզ չարք, մի անօրէնք բնակեսցին առաջի աչաց քոյ:

Դու անօրէնութիւն կամեցող Աստուած չես, չարերը չեն կարող բնակուիլ քեզ մօտ, անօրէնները քո աչքի առաջ չպիտի բնակուեն:

Աստուած հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց:

Աստուած ամեն մարդու էլ իւր գործի համեմատ է հատուցանում:

#### 4.

### ԿԱՅԵՆ ԵՒ ԱԲԵԼ

Ա. Աղամ և Եւան երկու որդի ունեցան—առաջինի անունն էր Կայէն, իսկ երկրորդինը՝ Աբէլ: Աբէլը խաշնարած էր, իսկ Կայէնը՝ երկրագործ: Մի անգամ երկու եղբայրներն Աստուծուն զոհ բերին—Կայէնը իւր մշակած դաշտի պտուղներից, իսկ Աբէլը՝ խաշների անդրանիկ գառներից: Աստուած Աբէլի մատաղը սիրով ընդունեց, իսկ Կայէնինը՝ ոչ: Այս բանի վրայ Կայէնը խիստ բարկացաւ: Աստուած ասաց. «Կայէն, ի՞նչու ես տրտմել. ի՞նչու է քո դէմքը փոխուել. եթէ բարի բան գործես, Աստուած կսիրէ քեզ, իսկ եթէ ոչ՝ մեղաւոր կլինիս:

Բ. Զնալելով Աստուծու այս խօսքերին, Կայէնը դարձեալ ոխը սրտից չհանեց և մի անգամ դաշտումը խրփեց Աբէլին ու սպանեց:

Այն ժամանակ Աստուած ասաց Կայէնին. «Ուր է Աբէլ եղբայրդ: Կայէնը պատասխանեց. «Չգիտեմ, միթէ ես նրա պահապանն եմ»: Աստուած ասաց. «Քո եղբօր արիւնի ձայնը գանգաւում է ինձ. երկրիս վրայ անծեալ լինիս. քո մշակած ագարակը ոչինչ պտուղ չի տայ. երերեալ և տատանեալ թափառես:

Այնուհետև Կայէնն իսկոյն հեռացաւ այնտեղից և ուրիշ երկիր գնաց: Աստուած Աղամին ու Եւալին մի ուրիշ որդի պարզեց, որին անուանեցին Սէթ: Սրայածորդները բարեպաշտ մարդիկ էին:

Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է»:  
Ով իւր եղբօրն ատում է, մարդասպան է:

#### 5.

### ՃՐՃԵՂԵՂ

Ա. Մարդիկ երկրիս վրայ կամաց-կամաց բազմանում էին, ուստի և երկիրը նրանց բնակութեան համար բաւական չէր լինում: Այս մարդիկը հետ զհետէ աւելի և աւելի վատանում էին—նրանք Աստուծուն բոլորովին մոռացան, նրա ասածներն այլ ևս չէին կատարում: Աստուած երկար ժամանակ համբերեց այս բաներին, բայց երբ նրանց չարութիւնը չտիրիցն անցաւ, Աստուած ասաց. «Այդ մարդկանց պէտք է ջնշեմ երկրիս երեսից»: Այդ ժամանակ Սէթի ցեղից՝ նոյ անունով մի մարդ էր ապրում. նա շատ բարեպաշտ էր և դրա համար էլ Աստուած սիրում էր նրան:

Բ. Այն ժամանակ Աստուած նոյին ասաց. «Ես կամենում եմ ջրհեղեղով ոչնչացնել այդ չար մարդկանց. դու քեզ համար մի տապան շինիք՝ բազմաթիւ սենեակներից բաղկացած. կպրով ծեփիք թէ դրսից և թէ ներսից: Այդ տապանի մէջ կմտնես դու և քո որդիքը. հետդ կվերցնես տեսն տեսակ կենդանիներից մի-մի զոյդ. նոյնպէս ամեն տեսակ կերակուր՝ թէ քեզ և թէ կենդանիների համար»: Նոյն էլ ալնպէս արեց, ինչպէս որ Աստուած հրամայել էր:

Պ. Երբ նաւը պատրաստ էր, Աստուած ասաց Նոյին.  
«Մտիր տապան դու և քո ընտանիքը»: Նոյն էլ մտաւ  
տապան իւր երեք որդիներով, կնոջով և հարսներով.  
ներս առաւ նաև ամեն տեսակ կենդանիներ:

Սրանից յետոյ սկսեց սաստիկ անձրեւ գալ. բոլոր  
աղբիւրների ակները բացուեցան և քառասուն գիշեր  
շարունակ անձրեւ էր գալիս: Զուրը մեծացաւ. ատապանն  
սկսաւ բարձրանալ և լողալ: Զուրն այնքան բարձրա-  
ցաւ՝ որ ամենաբարձր լեռների գագաթներն անգամ ծած-  
կուեցան. ոչ մի կենդանի, ոչ մի մարդ չմնաց, ամեն-  
քըն էլ խեղդուեցան:

Պ. Հարիւր լիսուն օր շարունակ ջուրը ծով դառած՝  
երկրիս երեսին կանգնած մնաց: Աստուած տեսնելով  
Նոյի վիճակը, հրամայեց քամիներին փչել. փակուեցան  
աղբիւրները և անձրեներն սկսեցին դադարել. ջուրն  
իջաւ՝ ցածրացաւ: Տապանը լողալով եկաւ և Արարատ  
(Մասիս) լերան վրայ հանգստացաւ: Նոյը բաց արաւ  
տապանի պատուհանը և մի ագռաւ բաց թողեց: Ագ-  
ռաւուր յետ չեկաւ: Դրանից յետոյ մի ազաւնի արձակեց,  
բայց որովհետեւ նա ոչ մի հանգստանալու տեղ չգտաւ,  
ուստի յետ դարձաւ: Նոյը մեկնեց ձեռը և ներս առաւ:

Եօթն օրից յետոյ Նոյը կրկին անգամ մի աղաւնի  
բաց թողեց. աղաւնին երեկոյեան դէմ վերագարձաւ՝ բե-  
րանին ձիթենու շիւղ բռնած: Նոյն էլի Եօթն օր սպա-  
սեց և նորից աղաւնուն տրձակեց: Այս անգամ աղաւ-  
նին յետ չեկաւ: Նոյն իմացաւ, որ երկրիս երեսից ջու-  
րը ցամաքել է:

Ե. Նոյը դուրս եկաւ տապանից իւր ընտանիքով.  
այնտեղ նա սեղան շինեց ու զոհ արաւ:

Այս բանն Աստուծուն դուր եկաւ, ուստի ասաց.

«Այս օրուանից սկսած այլ ևս երկիրը չեմ անիծիլ մար-  
դոց չարութեան համար: Քանի որ երկիրս կայ, թող  
ցանքն ու հունձն անպակաս լինին, նոյնպէս ցուրտն  
ու տաքութիւնը, ձմեռն ու ամառը, ցերեկն ու գիշերը  
թող շարունակուեն»:

Աստուած Նոյին օրհնեց և նրա հետ դաշը կա-  
պեց, որ այսուհետեւ էլ ջրհեղեղ չի լինի: «Այս աղեղը  
նշանակում եմ երկնքի վրայ, սա թող նշան լինի իմ և  
քո ուխտին և եզր ամպերը երկրիս վրայով տանեմ, ա-  
ղեղն իսկոյն կերեալ ու ես կիշեմ իմ և քո ուխտը»:

Նոյն սկսաւ երկրագործութիւնով պարապել և այգի  
տնկել: Նա երեք որդի ունէր — Սեմ, Քամ և Յաբէթ:  
Դրանց որդիքը բազմացան և լցրին երկրը:

«Պահէ տէր զամենեսին, ոյք սիրեն զնա, եւ զամենայն  
մեղաւորս սատակէ տէր»:

Աստուած իրան սիրողներին պահպանում է, իսկ մեղաւոր-  
ներին ջնջում է:

«Նուազեցուցանեն զազդս մեղք»:

Մեղքը կործանում է մարդկանց:

## 6.

ԲԱՐԵԼՈՆԻ ԱՃՏԱՐԱԿԱՃԻՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Նոյի թոռները բազմանալով չուեցին գէպի ա-  
րեւելք — Եփրատ ու Տիգրիս գետերի միջում պատահե-  
ցան մի ընդարձակ դաշտավայրի, որի անունն էր Սե-  
նաար: Սլդ մարդիկն ամենքն էլ մի լեզուով էին խօ-  
սում. որանք ասում էին միմեանց. «Եկէք աղեւս պատ-  
րաստենք և այնպիսի մեծ աշտարակ շինենք, որի մի  
ծալը երկինք հասնի, իսկ միւսը՝ երկրիս վրայ լինի»:

Երնութիւնն սկսեցին։ Աստուած վերևից նալում էր՝ թէ մարդիկ ինչ են անում։ Նա ասաց. «Ես կիառնեմ այն մարդկանց լեզուները, որոնք շինութեան մասնակից են և մի լեզուով են խօսում—նրանք մէկ մէկու այլ ևս չպիտի կարողանան հասկանալ»։

Բ. Այսպէս էլ եղաւ։ Եինութիւնը դադարեց. մարդիկ սկսեցին Բարելոնից հեռանալ ու նորից ցըռել երկրիս գանազան կողմերը։

«Զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ»։  
Աստուած ամբարտաւան մարդկանց հակառակ է։

## Բ. ՆԱԿԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՐ

Ա. Ա. Բ. Բ. Ա. Մ.

7.

### ԱՅՏՈՒԾԾ ԿԱՆՉՈՒՄ Է ԱԲՐԱՀԱՄԻՆ

Ա. Միջագետքի Խառան քաղաքում, Սեթի ցեղից, մի մարդ էր ապրում անունն Աբրահամ։ Նրա հայրը կուռք էր պաշտում, իսկ ինքը ճշմարիտ Աստուծուն։ Աստուած ասաց Աբրահամին. «Թո՛ղ քո հայրենիքը, բարեկամներդ, հօրդ տունը և գնա այն երկիրը, որ ես քեզ ցոյց կտամ. ես քեզ մեծ ազգ կգարձնեմ և կօրհնեմ. քո անունը ամեն տեղ կատրածեմ։ Քո ձեռով պէտք է օրհնուին երկրիս վրայի բոլոր ազգերը»։

Բ. Արանից լետու Աբրահամը դուբս եկաւ Խառանից. հետն առաւ իւր կին Սառալին, եղբօրորդի Ղովտին, բոլոր ստացուածքը և հեռացաւ գէպի Քանան։

Երբ Քանանանոց երկիրն եկաւ ու Սիւքէմ հովիտը հասաւ, Աստուած երևեցաւ Աբրահամին և ասաց. «Այս երկիրը տալիս եմ քեզ և քո որդւոց»։ Աբրահամն այնտեղ սեղան շինեց և Աստուծու անունը փառաբանեց։

«Յայտնեա առաջի Տեառն զամապարս քո և յուսա ի նա։ Աստծուն յանձնիր քո ճանապարհը և յոյսդ նրա վրայ դիր։ «Զի օրհնեցես դու զարդարն Տէր։ Դու արդարներին օրհնում ես, Աստուած։

8.

### ԱԲՐԱՀԱՄԾ ԵՒ ՂՈՎՏԾԾ ԲԱԺՄՆԻՌԻՄ ԵՆ ԻՐԱՄԻՑ

Աբրահամը մի հարուստ մարդ էր. ունէր բազմաթիւ խաշներ, շատ սոկի, արծաթ։ Ղովտն ևս հարուստ էր, ունէր բազմաթիւ խաշներ և անդէաներ։ Նրանց բնակութեան երկիրը շատ փոքր էր, այնպէս որ նրանց խաշներին բաւականութիւն չէր տալիս, դրա համար ևս շարաւճակ կոիր էր պատահում Ղովտի և Աբրահամի հովիւների մէջ։

Մի անգամ Աբրահամն ասաց Ղովտին. «Ի՞նչու պէտք է մեր հովիւների մէջ կոիր պատահի. չէ՞ որ մենք ազգականներ ենք. աւելի լաւ է որ բաժանուենք — եթէ դու ձախ գնաս, ես աջ կերթամ, իսկ եթէ դու աջ գնաս, ես ձախ կերթամ»։

Ղովտն ընտրեց ջրերով հարուստ Յորդանանի պըտղաւէտ հովիտը, որ նման էր մի սիրուն պարտիգի։ Այսպէս երկուսն էլ բաժանուեցան միմեանցից—Աբրահամը բնակուեցաւ Քերոնի մօտ գտանուող Մամբէի անտառում, իսկ Ղովտը՝ Յորդանանի հովտում։ Արա վը-

բանները հասնում էին մինչև Սոդոմ քաղաքը, որի բը-  
նակիչները շատ վատ մարդիկ էին—նրանք Աստուծու  
Ճանապարհով չէին գնում:

Երանի խաղաղարարաց:  
Երանի խաղաղութիւն սիրող մարդկանց:

9.

### ԱԲՐԱՀԱՄՆ ԱԶԱՑՈՒՄ Է ՂՈՎՏԻՆ

Մի անգամ չորս թագաւոր Աղի ձորի վրայ լարձակ-  
ուեցան: Սոդոմ և Գոմոր քաղաքների թագաւորները  
դուրս եկան նրանց դէմ պատերազմելու: Երկու թագա-  
ւորները յաղթուեցան. ժողովուրդը փախաւ լեռները:  
Թշնամին աւար առաւ Սոդոմ և Գոմոր քաղաքների հարըս-  
տութիւնը: Ղովտն ևս գերի ընկաւ իւր խաշներով:

Այդ պատերազմից մի մարդ ագատուեցաւ. եկաւ  
Աբրահամին յայտնեց, որ Ղովտը գերի է ընկել: Աբրա-  
համն՝ երբ այս իմացաւ, հաւաքեց իւր հարիւր տասն  
և ութ ծառաներին, ընկաւ թշնամու ետևից. գիշեր  
ժամանակ յարձակուեց նրանց վրայ, ջարդեց թշնամուն  
և լետ առաւ բոլոր աւարը. դրանց հետ ազատեց Ղով-  
տին և նրա կանանցը:

Երբ Աբրահամը պատերազմից վերադառնում էր,  
Սոդոմի թագաւորը նրա առաջը դուրս եկաւ և ասաց.  
«Դերի առած մարդիկն ինձ, իսկ աւարը քեզ լինի»:  
Աբրահամը պատասխանեց. «Երդւում եմ Աստուծու  
անունով, որ ես քո ունեցածի վրայ աչք չունիմ, մի  
տրեխի թել անգամ չեմ վերցնիլ քո հարստութիւնից»:  
Աբրահամը վերադարձաւ տուն:

Աիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո:  
Քո ընկերին պէտք է քեզ պէս սիրես:

10.

### ԱՍՑՈՒԾՈՒ ԽՈՍՑՈՒՄՆ ԱԲՐԱՀԱՄԻՆ

Ա. Աստուծած երեաց Աբրահամին և ասաց. «Մի  
վախենար, Աբրահամ, ես քո պահապանն եմ. ես քեզ  
կվարձատրեմ»: Սբրահամը պատասխանեց. «Տէր, ինչ  
պիտի տաս ինձ, ես ծերացել եմ. մահս մօտ է. անոր-  
դի պիտի մեռնեմ, իսկ իմ ծառայ Եղիազարի որդին ժա-  
ռանգս պիտի լինի»:

Աստուծած ասաց. «Եղիազարի որդին ժառանգդ չի  
լինի, այլ քո՞ որդին պէտք է քեզ ժառանգ լինի»: Աս-  
տուծած հրամայեց Աբրահամին դուրս գալ վրանից ու  
ասաց. «Նայիր Աբրահամ, համարիր այդ անթիւ աստ-  
ղերը, այսպէս էլ քո զաւակները պէտք է բազմացնեմ»:  
Աբրահամը հաւատաց Աստուծու ասածներին:

Ա. Աստուծած ասաց. «Ես քո Աստուծած եմ. ես կամե-  
նում եմ քեզ հետ դաշն կապել և քո զաւակները բազ-  
մացնել. ես կամենում եմ դաշը կապել այլև քո ժա-  
ռանգների հետ և Քանանացւոց աշխարհը նրանց տալ,  
ուր դու իբրև օտարական ապրում ես:

Բ. Մի անգամ կէսօրուայ խիստ շոգի ժամանակ՝  
Աբրահամը նստած էր վրանի դրանը՝ Մաբրէի անտա-  
ռում: Յանկարծ Աբրահամը վեր նայեց և տեսաւ որ  
երեք անցուրական հեռուից գէպի ինքն են գալիս,  
իսկոյն վազեց նրանց առաջ. Երկրպագութիւն տուաւ  
և ասաց. «Տէր, եթէ քո ծառալին յարգում ես, առանց  
նրա վրանը մտնելու մի անցնիր. հանգստացիր փոքր

ինչ այս ծառի տակ. ես ջուր կբերեմ և ձեր ոտները կլուանամ. փոքր ինչ նախաճաշիկ կանէք և ձեր ճանապարհը կշարունակէք»: Նրանք պատասխանեցին. «Թողարկած լինի»:

Աբրահամը մտաւ վրանը Սառալի մօտ և ասաց. «Ես արա, նկաններ թիմիր շարմաղ ալիւրից»: Իսկ ինքը գնաց հանդը, մի մտաղ երինջ բերաւ. տուաւ ծառաներին, որ մորթեն և հիւրերի համար կերակուր պատրաստեն: Աբրահամը բերաւ կարագ, կաթն և հորթի մսից պատրաստած կերակուր, դրաւ հիւրերի առաջ ծառի տակ և նրանք էլ կերան:

Այն ժամանակ հիւրերն ասացին Աբրահամին. «Ուր է քո կին Սառան»: Նա պատասխանեց: «Վրանումն է»: Հիւրերից մինն ասաց. «Եկող տարի այս ժամանակ Սառան մի որդի կունենալ»: Սառան, որ վրանի դրան ետևում կանգնած էր, մտքում ծիծաղեց այս խօսքերի վրայ: Աստուած հարցրեց Աբրահամին. «Սառան ի՞նչու է ծիծաղում, միթէ Աստուծու համար անկարելի բան կայ: Օտարականները վեր կացան և գնացին»:

Երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն,  
Երանի նրանց, որոնք չեն տեսել, բայց հաւատում են:  
Ուղիղ են պատգամք Տեառն, եւ ամենայն գործք նորահաւատուք են»:  
Աստուծու խօսքերը ճշմարիտ են, ինչ որ նա ասում է,  
Կատարում է

11.  
ԱԲՐԱՀԱՄԸ ԲԱՐԵԽՈՍՈՒԻՄ Է ԱՍՈՒԾՈՒ ՍՈՒԾ ՍՈՒԾՈՄ  
ԵՒ ԳՈՄՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օտարականները գնացին դէպի Սոդոմ: Աբրահամն էլ ճանապարհ ձգելու համար հետները գնաց: Աստուած ասաց. «Միտքս ինչ ծածկեմ իմ ծառալ Աբրահամից— Սոդոմ և Գոմոր քաղաքների մարդկանց անկարգութիւնը չափեցն անցել է, գնում են տեսնելու, արգելու ուղիղ է այդ բոլորը թէ ոչ»:

Երկու ճանապարհորդները գնացին դէպի Սոդոմ, իսկ Աբրահամն Աստուծու առաջ կանգնեց և ասաց. «Միթէ գու արդարներին մեղաւորների հետ միասին պիտի ոչնչացնես. եթէ քաղաքի մէջ լիսուն արդար լինի, միթէ չես ների միւսներին էլ. քաւ լիցի, գու արդարներին մեղաւորների հետ միասին չես պատժի»: Աստուած պատասխանեց. «Եթէ քաղաքի մէջ լիսուն արդար գտնեմ, միւսներին էլ նրանց համար կներեմ»:

Աբրահամը նորից խօսեց ու ասաց. «Ես այժմ Աստուծու հետ եմ խօսում. ես նրա ոտի հողն ու մոխիրն եմ, թերևս այնտեղ քառասուն արդար լինի»: Աստուած պատասխանեց. «Քառասունի համար էլ չեմ կործանի»: «Ո՞սկ եթէ երեսուն հոգի գտնուին»: Եթէ երեսուն հոգի գտնուին, դարձեալ կներեմ»: Աբրահամը նորից ասաց. «Եթէ քսան հոգի գտնուին»: Աստուած պատասխանեց. «Քսանի համար ես չեմ պատժի»:

Աբրահամը կրկնեց. «Մի բարկանար, Տէր, եթէ մի անգամ էլ խօսեմ, իսկ եթէ տասն հոգի լինին»: Աստուած պատասխանեց. «Տասնի համար ես չեմ պատժի»: Երբ այս խօսակցութիւնը վերջացաւ, Աստուած

աներեռութացաւ. Հրեշտակները գնացին դէպի Սոդոմ,  
իսկ Աբրահամը տուն դարձաւ:

Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն՝ առնել աղօթս,  
խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդ-  
կան։

Այժմ աղաչսմ եմ ամեն բանից առաջ աղօթք, իսրանդ-  
րուածք և աղաչանք անել ամենայն մարդու համար։

«Բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին։»

Ոչ թէ իմ կամքը, այլ քոնը թող լինի։

Մերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա։

Աստուած մօտիկ է ամենին, որոնք կանչում են նրան։

## 12.

### ՍՈԴՈՄ ԵՒ ԳՈՄՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ

Երկու հրեշտակները երեկոյեան ժամանակ Սոդոմ  
քաղաքը հասան։ Ղովտը նստած էր քաղաքի դրան ա-  
ռաջ։ Հէնց որ ճանապարհորդներին աեսաւ՝ տեղից վեր  
կացաւ. առաջ գնաց. գլուխ տուաւ ու խնդրեց, որ իւր մօտ  
գիշերեն. իսկ առաւօտեան ճանապարհը շարունա-  
կեն։ Նրանք պատասխանեցին. «Ո՛չ, մենք գիշերը  
փողոցում պէտք է անցկացնենք։» Ղովտը շատ խնդրեց։  
Վէրջապէս համաձայնեցան նրա տուն գնալ և նա հիւ-  
րասիրեց նրանց և ընթրիք պատրաստեց նրանց համար։

Երեկոյեան ժամանակ՝ Սոդոմ քաղաքի բնակիչնե-  
րը՝ ծեր և մանուկ Ղովտի տունը շրջապատեցին, պա-  
հանջում էին օտարականներին՝ ասելով. «Մեզ յանձնիր  
քեզ մօտ եկող օտարականներին։» Ղովտը տանից դուրս  
գնաց. կողպեց բակի դուռը և լորդորում էր քաղաքա-  
ցիներին հեռանալ։ Նրանք բարկացան և ասացին. «Դու-

ինքդ այստեղ օտարական ես, հէրիք չէ, ուզում ես  
մեղ վրայ դատաւոր ևս լինել. չէ, մենք քեզ էլ նը-  
րանց հետ կպատճենք։ Քաղաքացիներն իսկոյն յար-  
ձակուեցան Ղովտի վրայ։ Այդ ժամանակ հրեշտակները  
դուրս եկան տանից, Ղովտին ներս տարան ու դուռը  
կողպեցին։ Սոդոմի բնակիչները կատաղութիւնից իրանք  
իրանց միսն էին ուտում, բայց ոչ մի կերպ չկարողա-  
ցան ներս մտնել։

Հրեշտակներն ասացին Ղովտին. «Ո՞վ ունիս քա-  
ղաքում, նրանց էլ իմաց տուր և ի միասին դուրս ե-  
կէք, որովհետև Աստուած ուղարկել է մեզ այս քաղա-  
քը կործանելու։» Ղովտն շտապեց իւր փեսալացուների  
մօտ և խօսեց նրանց հետ. «Վէր կացէք, շտապեցէք,  
դուրս եկէք քաղաքից, որովհետև Աստուած վճռել է  
այս քաղաքը կործանել։» Նրանք ծիծաղեցին Ղովտի  
այս խօսքերի վրայ։ Առաւօտը լուսաբացին հրեշտակ-  
ներն ստիպեցին Ղովտին շտապելու. նմանակէս նրա  
կնոջն և երկու դուստրներին։ Հրեշտակներն ասացին  
Ղովտին. «Նտապիր, ազատիր գլուխդ, յետ չնայես, փա-  
խիր դէպի լեռները։» Նրանց հեռանալուց յետոյ Աս-  
տուած ծծումք և կրակ թափեց երկնքից Սոդոմ և Հո-  
մոր քաղաքների վրայ, ոչնչացրեց, ջնջեց բոլոր մարդ-  
կանց, նոյնպէս և շրջակայ երկիրները։ Ղովտի կինը  
յետ նայեց և իսկոյն աղի արձան դարձաւ։ Աբրահամն  
առաւօտը վազ վերկացաւ և գնաց այն կողմը, ուր սը-  
րանից առաջ խօսում էր Աստուծու հետ. նայեց Սոդոմ  
Փոմոր քաղաքներին և ինչ տեսաւ—ամբողջ երկիրը  
ծխում էր, կարծես թէ հնոց լինէր։

«Ամբարիշտք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան,  
պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իրեանց։»

Ամբարիչտները յանկարծակի ոչնչացան, պակասեցին, սահտակեցին և կորան իրանց անօրէն գործերի համար:

«Պահէ Տէր գամենեսեան ոյք սիրեն զնա, եւ զամենայն մեղաւորս սատակէ տէր»:

Աստուած իրան սիրողներին պահպանում է, իսկ մեղաւորներին ոչնչացնում:

### 13.

#### ԻՍԱՀԱԿԻ ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԶՈՀՈՒԻԼՐ

Ա. Որոշեալ ժամանակն անցնելուց յետոյ, ինչպէս Աստուած խոստացել էր, Սառան մի որդի ունեցաւ, որի անունը Իսահակ դրին: Աբրահամն արդէն հարիւր տարեկան էր՝ երբ Իսահակը ծնաւ: Մանուկն աճում էր, իսկ Աբրահամն ուրախանում:

Բ. Մի քանի տարուց յետով Աստուած ասաց Աբրահամին. «Աբրահամ»: Նա պատասխանեց. «Այստեղ եմ»: Աստուած ասաց. «Վեր առ քո միակ որդի Իսահակին, որին դու շատ սիրում ես և գնա Մորէալի երկիրն ու այնտեղ մի լեռան վրայ, որ ես քեզ ցոյց կըտամ, զոհիր նրան»: Աբրահամն առաւօտը վաղ վեր կացաւ. համետեց էշը. փայտ պատրաստեց զօհի համար. հետն առաւ Իսահակին և երկու ծառայ ու գնաց Աստուածու ցոյց տուած երկիրը: Երեք օրից յետոյ Աբրահամը վեր նալեց և երբ տեսաւ հեռուից նշանակած երկիրը, ասաց իւր ծառաներին. «Մնացէք այստեղ, իսկ ես Իսահակի հետ պէտք է գնամ այնտեղ ազօթելու»:

Իսահակը մատաղի փայտը շալակեց, իսկ Աբրահամը ձեռին բռնած ունէր զօհի կրակն և դանակը: ծառապարհին Իսահակը հարցըեց հօրը. «Հայր, կրակն ու

փայտն այստեղ են, բայց ո՞ւր է մատաղացու ոչխարը»: Աբրահամը պատասխանեց. «Աստուած ինքը տեսնում է մատաղացուն»: Երբ նրանք լերան գագաթը հասան, Աբրահամը սեղան շինեց, փայտ դարսեց վրան. կապեց Իսահակի ոտներն ու ձեռները և դրաւ սեղանի փայտերի վրայ. յետոյ ձեռը մեկնեց. վեր առաւ դանակը, որ Իսահակին զոհէ:

Այն ժամանակ Աստուածու հրեշտակը ձայն տուաւ երկնքից ու ասաց. «Աբրահամ, Աբրահամ, ձեռդ յետքաշիր, ես իմացայ, որ դու Աստուածուն յարգում ես. դու քո միակ որդին չխնայեցիր նրա համար»: Աբրահամը վեր նալեց և տեսաւ, որ ծառից մի խոյի գլուխէ կախ արած. գնաց, վեր առաւ խոյն և զոհեց նրան իւր որդի Իսահակի փոխարէն:

Աստուածու հրեշտակը նորից ձայն տուաւ Աբրահամին ու ասաց. «Որովհետեւ քո միակ որդին չխնայեցիր, ուստի ես քեզ օրհնումեմ. քո զաւակները թողերկնքի աստղերի և ծովի ափի աւազի չափ բազմանան, քեզանով պէտքէ օրհնուին երկրիս վրայի բոլոր ազգերը»:

Աբրահամը դարձաւ ծառաների մօս և մշասին զնացին դէպի Բերսարէ, ուր և բնակւում էր:

«Երանեալ է այր, որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց»:

Երանելի է այն մարդը, որ փորձութեանը համբերում է, որովհետև եթէ փորձուելով ընտիր դուրս գայ, կենաց պսակին կարժանանայ, ինչպէս որ Աստուած իւր սիրելիներին խոստացել է:

«Տէր ետ եւ Տէր առ, եղիցի անուն Տեառն օրհնեալ»: Աստուած տուաւ, Աստուած էլ առաւ, նրա անունը թողօրհնուել:

14.

## ՍԱՌԱՅԻ ՄԱՀԻ

Սառան հարիւր քսան և եօթը տարեկան էր: Նա մեռաւ Քեբրոնում: Աբրահամն սկսաւ լալ և սուր անել: Երբ սպի օրերն անցան, վեր կացաւ դիակի վրայից ու ասաց այն երկրի բնակիչներին. «Միջնորդեցէք Եփրոնի առաջ, որ իմ ագարակի ծայրումը գտնուող կրկին այրն ինձ վաճառէ. ես կվճարեմ նրան, ինչ որ կահանջէ: Եփրոնն ինքն եկաւ և ասաց. «Ագարակն արժէ չորս հարիւր սատեր, թաղիր քո մեռեալին այնտեղ»: Մարդկանց առաջին Աբրահամը կշռեց արծաթը և տուաւ նրան. ագարակը կրկին այրի հետ միասին, որ Մաբրէի մօտ էր գտնուում, դարձաւ Աբրահամի սեպհականութիւն: Աբրահամը Սառային թաղեց Մաբրէի մօտ և այսպէս կրկին այրը դարձաւ նրա ժառանգական գերեզմանատունը:

«Եւ ի մեռելոց մի արգելուր զշնորհս»:  
Մեռելներին էլ պէտք է պատուել:

15.

## ԻՄԱՀԱԿԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻ ՄԱՀԻ

Աբրահամը հասել էր խորին ծերութեան. նա Աստուածանից ամեն տեսակ օրհնութիւն ստացել էր: Աբրահամը կանչեց իւր աւագ ծառայ Եղիազարին, որ նրա բոլոր հարստութիւնը կառավարում էր ու ասաց. «Երդուիր ինձ երկնքի և երկրի Աստուծու անունով, որ դու իմ Խամակ որդու համար քանանացի աղջիկներից կին չես ընտրել. այլ կգնաս իմ հայրենի Խառան քա-

դաքը և այնտեղից Խամակի համար կին կբերես: Տիրոջ հրեշտակն օգնական կինի և կառաջնորդէ քեզ»: Եղիազարը երդուեց և խոստացաւ տիրոջ պահանջը կատարել. առաւ իւր հետ մի քանի ծառաներ, տասն ուղտ և շատ ընծաներ ու ճանապարհ ընկաւ դէպի Մեշագետքի Խառան քաղաքը: Երբ Եղիազարը տեղ հահասաւ, ուղտերին հանգիստ տուաւ քաղաքից դուրս՝ մի ջրհորի մօտ:

Սըւը մտնելու ժամանակն էր: Կանալք այդ ժամին գալիս էին ջուր հանելու: Եղիազարն աղօթեց և ասաց. «Աբրահամի Աստուած, ողորմիր ինձ և յաջողիր իմ գործը. այս քաղաքի աղջիկներն ահա կգան ջուր հանելու եթէ մի կոյս աղջիկ գայ և ես նրան ասեմ, կուացրու սափորդ ու ինձ ջուր խմացրու և նա էլ պատասխանէ, խմիր, ես քո ուղտերի համար ևս ջուր կըհանեմ, նա կինի Խամակի կինը»:

Հազիւ թէ այս խօսքերը վերջացրել էր, եկաւ Բաթուէլի դուստր Ուերեկան՝ սափորն ուսին դրած: Նա մի գեղեցիկ աղջիկ էր: Իջաւ ջրհորը, լցրեց սափորը և կրկին բարձրացաւ: Եղիազարը վագեց նրա առաջ և ասաց. «Թոյլ տնւր ինձ, որ փոքր ինչ ջաւր խմես քո սափորեց»: Նա էլ պատասխանեց. «Խմիր»: Այս ասաց, շտապով սափորը կուան վրայ իցեցրեց և օտարականին ջուր խմացրեց. Սրանից յետոյ ասաց Ուերեկան. «Ես քո բոլոր ուղտերի համար ևս ջուր կհանեմ»: Յետոյ շտապեց դէպի նաւը, որտեղից կենդանիները ջուր էին խըմում ու այնտեղ թափեց իւր սափորի ջուրը: Նա կըրկին անգամ ջրհոր իջաւ և բոլոր ուղտերի համար ջուր հանեց: Եղիազարը լուռ ու մունջ, զարմացած դիտում էր աղջկա! արարքը: Երբ ուղտերին ևս ջուր

խմացրեց, Ուեբեկալին մի զոյգ ոսկեալ գինտ և երկու ապարանջան ընծալեց ու հարցրեց. «Ում աղջիկն ես դու, արդեօք այս գիշեր ձեր տանը կարելի է հիւր մը-նալ»: Նա պատասխանեց. «Ես Բաթուէլի դուստրն եմ. մենք շատ խոտ և դարման ունինք, այլև տեղ իջևա-նելու համար»:

Եղիազարը Աստուծուն շնորհակալութիւն արաւ և ասաց. «Օրհնեալ է Աբրահամի Աստուածը, նա ինձ յա-ջողութեամբ առաջնորդեց դէպի իմ տիրոջ եղբօր տունը»:

Ուեբեկան վազեց և պատմեց մօրն այս ամենը: Նա մի եղբայր ունէր՝ Լաբան անունով: Երբ սա տեսաւ քրոջ գնտերը և ապարանջանները, վազեց դէպի ջրհորն և ասաց այն օտարականին. «Ո՛վ Աստուծու օրհնեալ մարդ, ինչու ես մնացել դուրսը, եկ մեր տուն»: Նա առաջնորդեց Եղիազարին տուն. վեր առաւ ուղտերի բեռ-ներն ու կերակրեց նրանց, իսկ Եղիազարին և նրա հետ եղող մարդկերանց համար ջուր բերեց ոտները լուանա-լու, որից յետոյ կերակուր ևս բերաւ: Բայց Եղիազարը պատասխանեց. «Ես հաց չեմ ուտի մինչև իմ միտքը չյալտնեմ»: Նրանք էլ ասացին. «Ասա, ինչ քո մըտ-քինը»: Եղիազարը յալտնեց իւր ով լինելը. պատմեց թէ ով է իւր տէրը. թէ նա ինչ յանձնարարութւն է ա-րել իրան. թէ ինչ է աղօթել ջրհորի մօտ և թէ ինչ հետեանք է ունեցել նրա աղօթքը»:

Բաթուէլը և Լաբանը պատասխանեցին. «Ալդ Աս-տուծու կամքն է, մենք դրա դէմ ոչինչ չենք կարող ասել, վեր առ Ուեբեկալին և տար, թո՞ղ նա կին լինի քո տիրոջ որդուն, ինչպէս որ Աստուած կամեցել է»: Այս խօսքերը լսելուց յետոյ՝ Եղիազարը չոքեց Աստու-ծու առաջ և աղօթեց: Աբանից յետոյ ոսկեալ և արձա-

թեալ անօթներ հանեց, նմանապէս հանդերձներ և տուաւ Ուեբեկալին, Լաբանին, այլև նրանց մօրը: Այ-նուհետեւ կերան, խմեցին թէ ինքը և թէ իւր մար-դիկն և յետոյ քնեցին: Առաւօտը վեր կացաւ Եղիազա-րըն և ասաց. «Թոյլ տուէք ինձ, որ տիրոջս մօտ գը-նամ»: Բայց Ուեբեկալի մալրը և եղբայրը պատասխանե-ցին. «Թո՞ղ աղջիկը մի քանի օր ևս մնայ մեզ մօտ, յե-տոյ կարողես գնար»: Նա պատասխանեց. «Աստուած իմ գործը յաջողել է, մի ուշացրէք, թողէք որ ես գնամ»: Ծնողներն ասացին. «Կանչենք աղջկան, նրան էլ հարց-նենք, տեսնենք ինչ կասէ»: Կանչեցին Ուեբեկալին և հարցրին. «Կերթաս այս մարդու հետ»: Նա պատասխա-նեց. «Այո՛, կդնամ»: Այսպէս հեռացաւ Ուեբեկան իւր նաժիշտների և Աբրահամի ծառաների հետ: Նրանք օրհնեցին Ուեբեկալին ու ասացին. «Թո՞ղ քո ժառանգնե-ը հազարաւոր լինին»: Ուեբեկան իւր նաժիշտների հետ ուղտերի վրայ նստեց ու ճանապարհ ընկաւ:

Խսահակը երեկոյեան ժամանակ դաշտ էր դուրս եկել գրօննելու և ահա տեսաւ հեռուից, որ տասն ուղտ է գալիս: Ուեբեկան նկատեց Խսահակին, իսկոյն ուղտից վայր իջաւ և հարցրեց ծառային. «Ո՞վ է այն մարդը, որ դաշտի միջով դէպի մեզ է գալիս»: Ծառան պատասխանեց. «Նա իմ տէրն է»: Ուեբեկան քողն ա-ռաւ և ծածկուեց նրանով: Ծառան պատմեց Խսահակին ամեն բան: Այնուհետեւ Խսահակը և Ուեբեկան միասին էին ապրում:

Աբրահամը իւր բոլոր հարստութիւնն Խսահակին տուաւ և մեռաւ խորին ծերութեան մէջ: Նա հարիւր եօթանասուն հինգ տարեկան էր:

Խսահակը թաղեց նրան կրկին ալրի մէջ՝ Մամբրէի

կաղնու մօտ, ուր թաղուած էր Սառան: Աբրահամի  
մահուանից յետոյ Սստուած օրհնեց Իսահակին:

Յոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ, Տէր,  
ճամբարձի զանձն իմ:

Յոյց տնը ինձ այն ճանապարհն, Աստուած, որով ես պի-  
տի գնամ, որովնետև դրանով (ցոյց տուած ճանապարհով) միայն  
կարող են իմ ցանկութիւնները բաւականութիւն ստանալ:

Երանի՛ մեռելոցն, որք ի տէր ննջեցին:

Երանի՛ այն մեռելներին, որոնք տիրոջ յուսով ննջեցին:

### Բ. Խ Ս Ա. Հ Ա. Կ

#### 16.

### ԵՍԱԻ ԵՒ ՅԱԿՈՎՔ

Իսահակը երկու որդի ունեցաւ. մեծի անունը Ե-  
սաւ էր, իսկ փոքրինը՝ Յակովը:

Եսաւը թաւոտ էր և պարապում էր որսորդութիւ-  
նով ու հողագործութիւնով, իսկ Յակովը հանդարտ  
բնաւորութեան տէր էր՝ մնում էր տանը և մօրն օդ-  
նում ընտանեկան գործերում: Նա սիրում էր և հոգուա-  
կան կեանքը: Իսահակը Եսաւին էր սիրում և նրա բե-  
րած որսի միսը մեծ ախորժակով ուտում էր, իսկ Ուե-  
լեկան՝ Յակովին:

Մի անգամ Յակովը ոսպէ թան էր եփել: Եսաւը  
դաշտից դադրած տուն դարձաւ և ասաց Յակովին.  
«Թոյլ տնը ինձ, եղբայր, որ քո ոսպէ թանից ուտեմ»:  
Յակովը պատասխանեց. «Ծախի՛ր ինձ վրայ քո անդրան-  
կութիւնը, յետոյ կտանաս ոսպէ թանը»: Եսաւն ասաց

ինքն իրան. «Ես սովից մեռնում եմ, էլ ինչիս է պէտք  
անդրանկութիւնը»: Յակովը ասաց. «Ուրեմն երդուիր  
որ քո անդրանկութիւնից ձեռք ես վերցնում»: Եսաւը  
երդուեց և այսպէս վաճառեց իւր անդրանկութեան  
իրաւունքը: Այն ժամանակ Յակովը տուաւ նրան ոս-  
պէ թանից: Եսաւը կերաւ, խմեց, վերկացաւ և գնաց:  
Այսպէս ծախեց Եսաւը իւր անդրանկութիւնը:

«Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին»:  
Ի՞նչ գեղեցիկ, ինչ վայելուչ բան կլինի, եթէ եղբայրները  
միաբան ապրեն:

#### 17.

### ՅԱԿՈՎՔԻ ԽԱԲԵԲԱՑՈՒԹԻՒՆԸ

Իսահակը ծերացել էր—հարիւր երեսուն եօթը  
տարեկան էր: Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ուստի  
կանչեց Եսաւին և ասաց. «Որդի»: Եսաւը պատասխա-  
նեց. «Այստեղ եմ»: Իսահակն ասաց. «Ես արդէն ծերա-  
ցել եմ, ալսօր կամ վաղը գուցէ մեռնեմ, առ քո աղե-  
զը և կապարձը. գնա դաշտ. որսի միս բեր ին: Հա-  
մար. խորտիկ պատրաստիր, որ ուտեմ և օրհնեմ քեզ»:  
Ուելեկան լսեց այս խօսքերը: Եսաւը դաշտ գնաց, որ-  
սաց և տուն դարձաւ:

Ուելեկան կանչեց Յակովին իւր մօտ և ասաց.  
«Ես լսեցի այն ամենը, ինչ որ հալրդ Եսաւին պատուի-  
լեց: Նա ասաց, գնա դաշտ, որսի միս բեր, ուտեմ և  
օրհնեմ քեզ՝ քանի որ չեմ մեռել: Ուրեմն լսիր ինձ,  
շտապիր խաչների մօտ և երկու մատաղ ուլ բեր, որ  
հօրդ համար նրա սիրական խորտիկը պատրաստեմ: Այս  
կերակուրը կտանես նրան, կուտէ և կօրհնէ քեզ՝ մեռ-

նելուց առաջ»: Յակովը պատասխանեց. «Իմ եղբայր Եսաւը թաւամազ է, իսկ ես լերկ, դուքն հայրս շօշափէ և ես խարեբայ դուրս գամ նրա առաջ»: Մայրը պատասխանեց. «Դնա և այնպէս արա, ինչպէս քեզ ասացի»:

Յակովը դուրս գնաց, ուլերը բերաւ և մօրը տըւաւ: Նա էլ կերակուր պատրաստեց. վեր առաւ Եսաւի թանկագին շորերը. հագցրեց Յակովին. ուլի մորթին թեւերին ու պարանոցին փաթաթեց, ուր լերկ էր և կերակուրն էլ ձեռը տուաւ: Յակովը գնաց հօր մօտ և ասաց. «Հայր»: Նա պատասխանեց. «Այստեղ եմ. ով ես դու, որդեակ»: Յակովը պատասխանեց. «Քո անդրանիկ որդի Եսաւն եմ, պատուէրդ կատարեցի, վեր կաց, նստիր. իմ բերած խորտիկը կեր ու օրհնիր ինձ»: Իսահակը հարցրեց. «Բայց այդ ինչպէս շուտ գտար որսը»: Նա պատասխանեց. «Աստուած ինքն էր պատրաստել այդ»:

Այն ժամանակ Իսահակն ասաց. «Մօտ արի, որդեակ, որ քեզ շօշափեմ, տեսնեմ իմ որդի Եսաւն ես թէ ոչ»: Յակովը մօտեցաւ. հայրը շօշափեց և ասաց. «Զայնդ Յակովի ձայնն է, իսկ ձեռներդ Եսաւինը»: Հայրը չճանաչեց, որովհետեւ նրա ձեռները նոյնպէս թաւամազ էին, ինչպէս Եսաւինը: Բայց կասկածեց, ուստի մի անգամ էլ հարցրեց. «Դու իմ որդի Եսաւն ես»: Նա պատասխանեց. «Այո՛, ես եմ»: Իսահակն ասաց. «Ուրեմն մօտ բ' քո պատրաստած խորտիկը»: Յակովը մօտեցրեց նրան կերակուրը. գինի ևս տուաւ: Հայրը կերաւ և խմեց: Յետոյ ասաց Իսահակը. «Մօտ եկ և համբուրիր ինձ, որդեակ»: Նա էլ մօտեցաւ և համբուրեց նրան: Իսահակը հոտ առաւ նրա շորերից, օրհնեց և ա-

սաց. «Իմ որդւոյ հոտը նման է Աստուծու օրհնած դաշտի հոտին, թող Աստուծած քեզ համար առատ ցող ուղարկէ. քո արտերը և այդիները ցորենով և գինիով լցուեն. թող ազգերը քեզ ծառայեն, եղբայրներիդ վըրայ տէր եղիր»:

Իսահակը Յակովին օրհնեց, վերջացրեց: Յակովը՝ գեռ նոր էր հեռացել, որ Եսաւը որսից վերադաշտաւ: «Նա նոյնպէս խորտիկ պատրաստեց և հօրը բերաւ ասելով. «Հայր, վեր կաց և կեր քո որդու բերած խորտիկը և օրհնիր նրան»: Իսահակը հարցրեց նրան. «Ո՞վ ես դու»: Նա պատասխանեց. «Քո անդրանիկ որդի Եսաւն եմ»: Իսահակը շատ զարմացաւ այս բանի վրայ և ասաց. «Համար ով էր այն որսորդը, որ մի փոքր առաջ ինձ համար խորտիկ բերաւ. ես էլ կերայ ու օրհնեցի նրան»:

Երբ Եսաւը հօր այս խօսքերը լսեց, բարձր ձայնով աղադակեց և դառնացած սրտով ասաց. «Հայր, ինձ ևս օրհնիր», իսկ Իսահակը պատասխանեց. «Քո եղբայրը խորամանկ կերպով ինձ մօտ եկաւ և այն օրհնութիւնը, որը քեզ պիտի տալի, նա ստացաւ»: Եսաւը վշտացած սրտով ասաց. «Միթէ դու մի օրհնութիւն ունիս, հայր, ինձ ևս օրհնիր»: Նա բարձր ձայնով լաց էր լինում: Իսահակը պատասխանեց և ասաց. «Թող քո բնակած երկիրը ևս պտղաւէտ լինի, միայն Յակովին պիտի լսես»:

«Զար բիծ ի մարդ ստութիւն».

Սուտ խօսելը մարդու մէջ մի շար բիծ է:

Գ. Յ Ա Կ Ո Վ Բ

18.

ՅԱԿՈՎԲԻ ՓԱԽՈՒՍՏԸԾԸ

Եսաւը խիստ ատում էր Յակովին, որովհետեւ նա խորամանկութեամբ հօրեց իւր օրհնութիւնն ստացել էր: Նա ասում էր. «Հայրս ծերացել է, մահուան օրերը մօտեցել են. երբ մեռնի, ես կսպանեմ Յակովին»:

Այս խօսքերը Ուերեկայի ականջն ընկան: Յակովին իւր մօտ կանչեց և ասաց. «Քո եղբայր Եսաւը մտածում է քեզ սպանել, գնա Խառան իմ եղբայր Լաբանի մօտ՝ մինչև եղբօրդ բարկութիւնը կանցնի, յետոյ Ես մարդ կուղարկեմ քեզ իմաց անելու»: Ուերեկան խօսեց այդ մասին Խսահակի հետ. Նա էլ կանչեց Յակովին, որ արդէն եօթանասուն եօթը տարեկան էր՝ և դեռ չէր ամուսնացած ու ասաց. «Դնա Միջագետք՝ Բաթուէլի մօտ և ամուսնացիր Լաբանի աղջիկներից մէկի հետ, դու էլ իմ սրտին ցաւ չպատճառես, ինչպէս Եսաւը, որ քանանացւոց աղջիկներից իրան համար կին ընտրեց. թող ամենակարող Աստուածն օրհնէ քեզ. բազմացնէ քո ժառանգները և Արբահամի օրհնութիւնը քեզ վրայ թափէ»: Յակովը լսեց ծնողներին և գընաց դէպի Միջագետք:

«Դմ է վրէժինդրութիւն, եւ ես հատուցից՝ ասէ Տէր»:  
Վրէժինդրութեան իրաւունքն իմն է, ես պէտք է հատուցանեմ, ասումէ Աստուած:

«Զի արմատ ամենայն չարեաց՝ արծաթսիրութիւն է»:  
Բոլոր չարութիւնների պատճառը արծաթսիրութիւնն է:

«Զի բարկութիւն մարդոյ գարդարութիւն Աստուածոյ ոչ գործէ»:

Բարկացած մարդն Աստուածու նման արդար բան չի գործիլ:

19.

ՅԱԿՈՎԲԻ ՏԵՍԻԼՔԸ

Յակովը դուրս եկաւ Բերսաբէլից և գնաց Խառան: Արեւ մտնելու ժամանակ մի քար վեր առաւ, դրեց գլխի տակն և հանգստացաւ:

Այստեղ երազում մի սանդուխտ տեսաւ, որի մի ծայրը երկնքումն էր, իսկ միւսը՝ երկրիս վրայ և որի վը ըրալով Աստուածու հրեշտակները բարձրանում և իջնում էին: Աստուած սանդուխտի վերեւում կանգնած՝ ասում է. «Ես եմ Արբահամի և Խսահակի Աստուածը. այս երկիրը քեզ և քո ժառանգներին եմ տալիս. քո ժառանգները ծովի աւազի չափ կբազմանան և կտարածուին դէպի արևելք, արևմուտք, հարաւ և հիւսիս. քեզանով կօրհնուին բոլոր ազգերը երկրիս վրայ: Ես քեզ հետ կլինեմ և քեզ կպաշտպանեմ, ուր էլ դու գնալու լինիս. Ես քեզ նորից այս երկիրը յետ կբ' ըեմ»:

Երբ Յակովը քնից զարթնեց, ասաց. «Աստուած այստեղ է, իսկ ես այդ չգիտէի»: Նա վախեցաւ և ասաց. «Այս տեղը սուրբ է, Աստուածու տունն է, երկնքի դուռն է»: Յակովը վեր առաւ այն քարը, որի վը րայ քնել էր և արձան կանգնացրեց. իւղ ածեց նրա վրայ և այն տեղը անուանեց տուն Աստուածոյ:

Յակովն այստեղ ուխտեց և ասաց. «Աստուած ինձ հետ կլինի. Նա կպաշտպանէ ինձ և ճանապարհ ցոյց կտալ, ուր որ ես գնալու լինեմ. ինձ ուտելու հաց կը-

տայ, և հագնելու շոր. յաջողութեամբ և ողջ հայրենիք կվերադարձնէ. այն քարը, որ ես արձան կանգնացրի, կկոչուի Աստուծու տուն:

«Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ»:  
Գթած, համբերող և ողորմած է Աստուծ:

«Թէպէտ եւ գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու, Տէր, ընդիս ես: Ցուպ քո եւ դաւազան, նոքա միմիթարեսցեն զիս»:

Եթէ մութը հովիտների միջով էլ գնալու լինիմ, էլի չեմ վախենայ չարից, որովհետեւ դուինձ հետ ես Աստուծած, քո դաւազանն ինձ կալաշտպանէ:

20

### ՅԱԿՈՎՅԱՆ ՀԱՅՈՑ

Ա. Յակովյը վերկացաւ տեղից և գնաց դէպի արևելք՝ իւր մօրեզբայր Լաբանի մօտ: Դաշտում մի ջըրհոր տեսաւ, որի շուրջը երեք ոչխարի հօտ մակաղածէին: Ջրհորի բերանին ձգած էր մի մեծ քար «Յակովըն ասաց հովիւներին: «Որտեղացի էք, եղբայրներ»: Նրանք պատասխանեցին. «Խառանիցն ենք»: Յակովըն հարցրեց. «Ճանաչում էք Բաթուէլի որդի Լաբանին»: Նրանք պատասխանեցին. «Այո՛, ահա նրա աղջիկ Հոաքէլն էլ գալիս է իւր ոչխարների հետ»: Յակովյը Հոաքէլին տեսնելուն պէս, մօտեցաւ, վերառաւ ջրհորի վրայի քարն և ոչխարներին ջուր խմացրեց: Յակովյը համբուրեց Հոաքէլին, բարձր ձայնով լաց եղաւ և յայտնեց, որ ինքը Մելքեկայի որդին է: Հոաքէլը տուն վազեց՝ այս լուրը հօրը հաղորդելու

համար: Երբ Լաբանն իմացաւ իւր քեռորդի Յակովյի գալուստը, շտապեց նրա մօտ. գրկեց նրան, համբուրեց ու տարաւ իւր տուն: Յակովյը պատմեց Լաբանին իւր գլխովն անցածը:

Բ. Մի ամիս անցնելուց յետոյ՝ Լաբանն ասաց Յակովյին. «Թէւ դու իմ ազգականն ես, բայց և այնպէս չէի կամենալ, որ ինձ ձրի ծառայես. ասա՛, ինչ է քո աշխատանքի վարձը»: Լաբանը երկու աղջիկունէր—մեծի անունը Լիա էր, փոքրինը՝ Հուտքէլ: Լիան տգեղ էր, իսկ Հուտքէլը՝ գեղեցիկ: Յակովյը Հուտքէլին հաւանում էր, դրա համար էլ ասաց Լաբանին. «Ես քեզ եօթը տարի կծառայեմ, եթէ Հուտքէլին ինձ կտամ: Լաբանը պատասխանեց. «Նատ բարի, աւելի լաւ է քեզ տամ» քանիթէ մի ուրիշին. Յակովյը եօթը տարի ծառալեց Լաբանին: Այս երկար ժամանակն այնպէս շուտ անցաւ, կարծես թէ մի օր լինէր, որովհետեւ նա սիրում էր Հուտքէլին:

Երբ եօթը տարին անցաւ, Լաբանը կանչեց գիւղացիներին և հարսանիք արաւ, բայց փոխանակ Հուտքէլին՝ Լիալին տուաւ: Այն ժամանակ Յակովըն ասաց Լաբանին. «Ի՞նչու խաբեցիր ինձ, ես քեզ Հուտքէլի համար եօթը տարի ծառայեցի և ոչ թէ Լիալի»: Լաբանը պատասխանեց. «Մեր երկրում սովորութիւն չկայ, որ փոքր քոյրը մեծից վաղ մարդու գնայ, եթէ դու ինձ նորից եօթը տարի կծառայես, Հուտքէլին էլ կտամ»: Յակովյը եօթը տարի ևս ծառայեց ու Հուտքէլին էլ տուաւ:

Յակովյը շատ որդիք ունեցաւ: Նա Լաբանին էլի վեց տարի ծառայեց և փոխարէնն ստացաւ նրանից շատ

ոչխարներ, բացի դրանից ունէր բազմաթիւ ծառաներ,  
աղախիններ, ոչխարներ, ուղտեր և էշեր:

«Զի զոր սիրէ Տէր, խրատէ»:

Աստուած ումը սիրում է, նրան խրատում է (պատժումէ)»

21.

### ՅԱԿՈՎՔԸ ՓԱԽՀՈՒՄ Է ԼՍԲԱՆԻ ՄՕՏԻՑ

Լաբանի որդիքը տրտնջում էին Յակովից—նրանք  
ասում էին. «Յակովն իրան սեպհականեց մեր Հօր  
կայքը. նա մեր Հօր կայքով հարստացաւ»: Յակովին ինքը  
ևս նկատում էր այդ ներքին տրտունջը: Բացի դրանից՝  
Լաբանը վատ էր վարվում նրա հետ, դրա համար Աս-  
տուած ասաց Յակովին. «Դարձիր քո Հօր երկիրը. ես  
քեզ հետ կլինեմ. ես քեզ կպաշտպանեմ»: Յակովը  
պատմեց այս բանը Լիալին ու Հռաքէլին. նրանք էլ  
ասացին. «Արա, ինչպէս որ Աստուած հրամայելէ»: Այ-  
պէս Յակովը վեր առաւ իւր որդւոցն ու կանանցը-  
նստացրեց ուղտերի վրայ. առաւ խաշներն ու բոլոր  
հարստութիւնը և ճանապարհ ընկաւ դէպի Քանան:

Այդ միջոցին Լաբանը գաշտն էր գնացել ոչխար-  
ները խուզելու, երբ Յակովը ծածուկ, առանց աներոջն  
իմաց տալու, առաւ իւր ունեցած-չունեցածը, գետն  
անցաւ և գնաց դէպի Գաղատու լեռները:

Երրորդ օրը Լաբանն իմացաւ, որ Յակովը փա-  
խել է, առաւ իւր եղբայրներին և ընկաւ նրա ետևից-  
եօթն օրից լետոյ հասաւ նրան Գաղատու լեռան մօտ-  
Աստուած ճանապարհին երազի մէջ զգուշացրեց Լաբա-  
նին ու ասաց. «Զգո՞լ կաց, Յակովի հետ սիրով վա-

բուիր»: Լաբանը Յակովին հարցրեց. «Ի՞նչու համար  
այդպէս ծածուկ հեռացար ու ինձ ոչինչ չասացիր. ես  
քեզ երգով, թմբուկով և քնարով ճանապարհ կձգէի.  
ինչու համար իմ աղջիկներն ու թոռները առանց հրա-  
ժարական համբոլի հեռացրիր. Քո արածը լաւ բան չէ.  
Ես եթէ կամենալի, կարող էի քեզ վնասել, բայց Աս-  
տուած զգուշացրեց ինձ ասելով՝ զգո՞լ կաց, Յակովի  
հետ սիրով վարուիր»:

Յակովը խիստ բարկացաւ Լաբանի յանդիմանական  
խօսքերի վրայ և ասաց. «Ի՞նչ եմ արել քեզ, որ ե-  
տևիցս ես ընկել. քսան տարի քեզ ծառայեցի. այդքան  
այծ և ոչխար որ ունիս, բոլորն էլ իմ քրտնքի պտուղ-  
ներն են. ինչ որ գազանները յափշտակում, պատառում  
էին, այն էլ ինձանից էիր պահանջում. ցերեկներն ա-  
քեակեզ էի լինում, իսկ գիշերները ցրտից չորանում  
—աչքս երբէք քուն չէ մտել: Այս ձեռով ես քսան տա-  
քի քո տանը ծառայել եմ —տասն և չորս տարի քո  
աղջիկների, իսկ վեց տարի խաշներիդ համար: Այդ ժա-  
մանակամիջոցում դու իմ վարձի պայմանները տասն ան-  
գամ փոխեցիր: Եթէ Աբրահամի և Իսահակի Ասուուածն  
ինձ հետ չէր եղել, դատարկ ճանապարհ կդնէիր: Աս-  
տուած իմ քաշած նեղութիւնները տեսել է և քեզ  
զգուշացրել:

Լաբանը պատասխանեց. «Աղջիկներն իմ աղջիկներն  
են, թոռներն իմ թոռներն են և խաշներն իմ խաշներն են.  
այդ ամենն ինչ որ դու ունիս, իմն է: Ես ինչ կարող եմ աղ-  
ջիկներիս և թոռներիս անել. ամենից լաւն այն է, որ մենք  
դաշը կապենք»: Յակովն ու Լաբանն Աստուծու առաջ  
երդուեցին և դաշը կապեցին, որ այդ տեղից դէնը ոչ  
մէկն իրաւունք չունենալ անցնելու: Գաղատու լեռ-

որ սահման եղաւ։ Պայմաններից մէկն էլ այն էր, որ Յակովը Լաբանի աղջիկներին չպէտք է նեղացնէր։ Յակովը լերան վրայ զոհ արաւ և իւր եղբայրներին հացի հրաւիրեց։ Ամենքն էլ գիշերն այնտեղ մնացին։ Առաւօտը Լաբանը վեր կացաւ։ Համբուրեց աղջիկներին և թոռներին. օրհնեց նրանց և լետ դարձաւ տուն։ Յակովը շարունակեց իւր ճանապարհը։

«Զի արմատ ամենայն շարեաց՝ արծաթսիրութիւն է»։

«Զի տեսանես զշիւղ յական եղբօր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ տեսանես։»

Ի՞նչու քո եղբօր աչքի լիւղը տեսնում ես, իսկ քո աչքի գերանը՝ ոչ։

«Եւ թող մեզ զալարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»։

Մեր սիալանքը ների՛, ինչպէս մենք էլ մեր դէմ մեղան-չողներին ներում ենք։

22.

## ԵՍԸԻԻ ԵՒ ՅԱԿՈՎԲԻ ՀԱՃՏՈՒԹԻՒՆԸ

Յակովը դեսպաններ ուղարկեց Եղոմ (Սէիր) երկիր՝ Եսաւի մօտ։ Նա պատուիրեց նրանց այսպէս ասելու. «Քո ծառալ Յակովն այսքան ժամանակ Լաբանի մօտն էր. նա մեզ քեզ մօտ է ուղարկում և քեզնից շնորհ է խնդրում։ Դեսպանները դարձան և ասացին. «Մենք գնացինք քո եղբայր Եսաւի մօտ. նա չորս հարիւր մարդով քեզ զիմաներելու է գալիս»։ Յակովը շատ վախեցաւ այս բանից. իսկոյն ծառաներին և խաշները երկու մասնի բաժանեց՝ այն մտքով, որ Եթէ եղբայրը մի մասնի վրայ յարձակուի, միւսը կարողանայ ազատել։

Յետոյ Յակովըն աղօթեց և այսպէս ասաց. «Ով Աբրահամի և Խսահակի Աստուած, դու ինձ հրամայեցիր հայրենի երկիրս վերադառնալ. խոստացար ինձ պաշտպանել. քո ծառան, որին այսքան բարութիւն ես արել, արժանի չէ այդ շնորհին. մի գաւազան ունէի ձեռփս, երբ, սրանից քսան տարի առաջ, Յորդանանն անցալ, իսկ այժմ երկու ամբողջ հօտի տէր եմ։ Ազատիր ինձ, ով Աստուած, Եսաւի ձեռփս, վախենում եմ, մի գուցէ ինձ, կանանցս և որդւոցս սպանէ»։

Յակովըն ընծաներ որոշեց եղբօր համար—ջոկեց այծ, ոչխար, ուղտ, կով, յանձնեց ծառաներին ու ասաց. «Դուք առաջովս գնացէք. մի հօտը միւսի հետ մի խառնէք. միմեանցից փոքր ինչ հեռու քշեցէք։ Յակովըն առաջեցից գնացող ծառաներին պատուիրեց ու ասաց. «Եթէ Եսաւ եղբայրս հանդիպէ ու հարցնէ, ով ես դու, ուր ես գնում կամ ումն են պատկանում այդ կենդանիները, կպատասխանեո, որ այդ բոլորը քո ծառալ Յակովին է, նա ընծալ է ուղարկում իւր տէր Եսաւին ու ինքն էլ ետեւից գալիս է»։ Այսպէս էլ պատուիրեց միւսին, երրորդին և բոլորին, որոնք հօտի ետեւից գնում էին։ Յակովն այսպէս էր մտածում, Եթէ ես առաջուց ընծաներով նրա սիրտը շահեմ, լետոյ երբ կտեսնուենք, հետո քաղցը կվարուի։

Յակովըն առաւօտը վաղ վեր կացաւ, առաւ իւր կանանցն ու որդւոցը և գնաց Եսաւի առաջ։ Յակովըն վեր նայեց և տեսաւ, որ եղբայրը չորս հարիւր մարդով իւր առաջն է գալիս։ Խսկոյն որդիքը մալրերին յանձնեց, ինքն առաջ գնաց և մինչև Եսաւին հասնելը՝ եօթն անդամ ծնկաչոք գլուխ տուաւ։ Եսաւն այս տեսնելուն պէս՝ յառաջ վազեց. գրկեց Յակովին. վզովն

ընկաւ ու համբուրեց նրան—երկուսն էլ լալիս էին: Ես-  
աւը վեր նայեց, տեսաւ կանանցն ու որդւոցը և հար-  
ցրեց. «Ո՞վքեր են սրանք»: Յակովը պատասխանեց. «Իմ  
որդիքն ենք: Այն ժամանակ ամենքն էլ մօտեցան և  
գլուխ տուին Եսաւին: Եսաւը հարցրեց. «Ի՞նչու համար  
էին այդ խաշները, որ առաջովս անցան»: Յակովը պա-  
տասխանեց. «Որպէսզի քո ծառալ Յակովը կարողանալ  
շնորհ գտնել քո առաջ»: Եսաւն ասաց. «Ես իմ ունե-  
ցածովս գոհ եմ, կարիք չունիմ»: Բայց Յակովը այնքան  
ստիպեց Եսաւին, մինչև որ վերջինն ընդունեց:

Եսաւն ասաց. «Նտապենք միասին հեռանալ ալս-  
տեղից, ես քեզ հետ եմ կամենում գնալ»: Յակովը պատասխանեց. «Ծծկեր մանուկներ ունիմ, ոչխարները  
և արջառները ևս նոր են ծնել, եթէ ստիպեմ աւելի  
ճանապարհ կտրելու, բոլորն էլ կկոտորուին. դու առաջ  
գնա, իսկ ես կամաց-կամաց յետևիցդ կդամ մինչև Ե-  
դոմ»: Եսաւն ասաց. «Եթէ այդպէս է, իմ մարդկանցից  
մի քանիսը քեզ մօտ կթողնեմ»: Յակովը պատասխա-  
նեց. «Ի՞նչու ես այդքան նեղութիւն կրում. քո շնորհ  
բերելն էլ ինձ բաւական է»: Այսպէս Եսաւը Եդոմ դար-  
ձաւ: Յակովը չուեց դէպի Սիւքէմ. այնտեղից անցաւ  
Բեթէլ և Տիրոջ համար սեղան պատրաստեց: Նրանք մի  
փոքը ևս յառաջ գնացին. ալստեղ Հոաքէլը մեռաւ.  
Յակովը թաղեց նրան և վրան մի արձան կանգնեց:  
Յակովը եկաւ իւր հայր Իսահակի մօտ, որ բնակւում  
էր Մամբրէում՝ ոչ հեռի Քերբոնից: Իսահակը ծերացել  
էր—նա մեռաւ հարիւր և ութուուն տարեկան հասա-  
կում: Եսաւն ու Յակովը թաղեցին Իսահակին Սբրա-  
համի գնած կրկին այրի մէջ: Եսաւը բնակւում էր Ե-

գովմի լեռների վրայ, իսկ Յակովը Քանանում՝ իւր հօր  
երկրում:

«Եւ թող մեզ զպարտիս մեր որպէս եւ մեք թողումք մե-  
րոց պարտապանաց»:

Կարդացես առիս յաւուր նեղութեան քո. ես փրկեցից  
զքեղ, եւ դու փառաւոր արացես զիս»:

Նեղն ընկած ժամանակի, եթէ ինձ օգնութեան կանչես,  
ես քեզ կազատեմ և դու իմ անունը կփառաւորես»:

### Դ. ՅՈՎՍԵՓ

23.

### ՅՈՎՍԵՓՆ ԵՒ ԻԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ա. Յակովը տասն և երկու որդի ունէր: Վերջին  
երկուսի անուններն էին Յովսէփ և Բենիամին, որոնք  
Հոաքէլիցն էին ծնած: Յովսէփը տասն և եօթը տարե-  
կան էր, երբ Եղբայրների հետ ոչխարներ էր տրածաց-  
նում: Նա պատմում էր հօրն այն բոլոր սխալ բաները,  
որ Եղբայրները գործում էին: Յակովը Յովսէփին բո-  
լոր որդիկերանցից տեղի էր սիրում—նրա համար ծալ-  
կեալ պատմուծան կարել տուաւ: Եղբայրները, երբ նը-  
կատեցին, որ հայրը Յովսէփին իրանցից աւելի է սի-  
րում, սկսեցին նախանձել:

Յովսէփը մի անգամ երազ տեսաւ ու պատմեց Եղ-  
բայրներին: Նա ասում էր. «Մենք դաշտում որաներ  
էինք կապում. իմ կապած որաներն ուղիղ կանգնեցին,  
իսկ ձեր որաները իմերին երկրպագութիւն էին տալիս»:  
Եղբայրները պատասխանեցին. «Միթէ կամենում ես  
թագաւոր լինել մեզ վրայ»: Այս բանի համար Եղբայր-

ները աւելի սկսեցին ատել Յովսէփին։ Նա մի ուրիշ երազ ևս տեսաւ ու նմանապէս պատմեց եղբայրներին։ «Ես տեռայ երազումս, որ արեք, լուսինը և տասն ու մի աստղեր ինձ երկրպագութիւն կին տալիս»։ Երբ այս բանը նրա հայրն իմացաւ, բարկացաւ և ասաց. «Այդ ինչ երազ է, միթէ ես, մարդ, եղբայրներդ պէտք է գանք և քեզ երկրպագութիւն տանք»։ Եղբայրների ատելութիւնն աւելի և աւելի զօրացաւ. հայրը դիտում էր այդ ամենը և ծածուկ պահում էր իւր մէջ։

Բ. Մի անգամ Յովսէփի եղբայրները Սիւքէմ գընացին իրանց հօր խաշներն արածացնելու։ Յակովին ասաց Յովսէփին. «Գնա եղբայրներիդ մօտ և իմացիր, թէ ինչպէս է նրանց առողջութիւնը, ինչպէս են ոչխարները և ինձ համբաւ բեր»։ Յովսէփը գնաց. Եղբայրները հեռուից տեսան նրան, սկսեցին փսփսալ ու ասել. «Ահա երազատեսը գալիս է, եկէք սպանենք նըրան, ձգենք մի փոսի մէջ և ասենք մեր հօրը, թէ չար գաղանները պատառել են նրան, տեսնենք ինչ կըլինին նրա երազները»։ Մէծ եղբայր Ուուբէնը, երբ այս բանը լսեց, ասաց. «Մի սպանէք, արիւն մի թափէք, այլ ձգեցէք այս անապատի փոսերից մինի մէջ»։ Նրա միտքն այն էր, որ Յովսէփին ազատէ և հօրը տանէ։ Երբ երազատեսը եղբայրների մօտ եկաւ, հանեցին նրա ծաղկեայ պատմուճանը՝ ձգեցին մի անջուր փոսի մէջ և հացի նստեցին։

Այդ միջոցին մի խումբ իսմայէլացի վաճառականներ գալիս էին իրանց ուղտերով, խունկ, ստաշին և ռետին էին տանում Եղիպտոս։ Յուդան խօսեց եղբայրների հետ ու ասաց. «Մեզ ինչ շահ սրա սպանելաւց, եկէք ծախենք իսմայէլացի վաճառականներին. մեր ձեռ-

քը թող նրան չդիպչի»։ Այս մտքին ամենքն էլ հաւանեցան-Յովսէփին զուրս հանեցին փոսից և քսան դահկանով ծախեցին։ Ուուբէնն այդտեղ չէր։ Երբ փոսի մօտ եկաւ ու Յովսէփին այնտեղ չգտաւ, պատառեց շորերը, եկաւ եղբայրների մօտ և ասաց. «Պատանին փոսի մէջ չէ, ուր փնտռեմ նրան»։

Յետոյ եղբայրները մի ուղ մորթեցին, Յովսէփի շորերը արիւնի մէջ թաթախեցին ու հօրն ուղարկեցին ասելով. «Այս միայն գտանք, տես, սա է քո որդու պատմուճանը թէ ոչ»։ Հայրն իսկոյն ճանաչեց և ասաց. «Աս իմ որդու պատմուճանն է, չը գաղանը պատառել է նրան, չը գաղանը յափշտակել է նրան»։

Յակովիը պատառեց իւր շորերը, և հագաւ ու երկար ժամանակ սուր էր անում։ Բոլոր որդիքը գալիս էին հօրը միաթարելու, բայց նա չէր կարողանում միաթարուիլ ու ասում էր. «Այս ցաւովն էլ պէտք է գերեզման իջնեմ իմ որդու մօտ»։ Այսպէս էր ողբում նրան իւր հայրը։

Ամենայն որ ատեռյ զեղբայր իւր՝ մարդասպանէ»։

## 24.

### ՅՈՎՍԷՓԸ ՊԵՏԱՓՐԻԾԻ ՏԱՆՀ

Վաճառականները Յովսէփին Եգիպտոս տարան և վաճառեցին Փարաւոնի դահճապետ Պետափրէսի վրայ։ Աստուած Յովսէփի հետն էր—ինչ որ անում էր, յաջողում էր նրան, այնպէս որ շուտով Պետափրէսի սիրելին դարձաւ։ Նա իւր տան կառավարութիւնը նրան յանձնեց։ Աստուած օրհնեց եգիպտացու տունը Յովսէփի պատճառով։

Մի քանի ժամանակից յետոյ Յովսէփի և Պետափ-  
րէսի կնոջ մէջ անհամաձայնութիւն պատահեց. կինը  
գանգատուեց մարդուն երայեցի ծառայից և նա էլ  
հրամայեց նրան բանտ նստացնել:

«Զի ոչ են խորհուդք իմ իբրեւ զիսորհուրդս ձեր, եւ ոչ  
ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր»:

Իմ մտածմունքները ձեր մտածմունքների նման չեն և ոչ  
իմ ճանապարհները ձեր ճանապարհների նման»:

«Եւ յիշեա դու զծէր Աստուած քո զամենայն աւուրս կե-  
նաց քոց, եւ մի մեղանչիցես դու եւ կամ անցանիցես պատուի-  
բանօք նորա»:

Քո ամբողջ կեանքի ընթացքում Աստուծուն աչքիդ առաջ  
և սրտիդ մէջ ունեցիր. զգոյշ եղիր, որ յանցանք չգործես և Աս-  
տուծու պատուիրանից չանցնես»:

25

### ՅՈՎՍէՓԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Ա. Աստուած Յովսէփին պաշտպանում էր—բան-  
տապետին այնպիսի սիրտ տուաւ, որ նրան սիրում էր:  
Սա բոլոր յանցաւորներին և բանտը Յովսէփին էր յանձ-  
նել: Յովսէփին էր այնտեղ ամենայն բան կարգադրողը  
և ինչ որ կարգադրում էր, Աստուած էլ յաջողում էր:

Մի քանի ժամանակից յետոյ թագաւորի տակառա-  
պետը և մատակարարը յանցանք գործեցին իրանց տի-  
րոջ դէմ: Թագաւորը երկուսի վրայ ևս խիստ բարկա-  
ցաւ և հրամայեց բանտն ուղարկել: Մի գիշեր երկուսն  
էլ երազ տեսան: Հետևեալ առաւօտ Յովսէփը նրանց  
մօտ եկաւ. շատ տիսուր տեսաւ նրանց ու հարցրեց.  
«Ի՞նչ է ձեր տիսուրթեան պատճառը»: Նրանք պատաս-

խանեցին. «Երազ ենք տեսել, ոչ ոք չկայ, որ մեկնել  
կարողանայ»: Յովսէփն ասաց. «Երազի մեկնութիւնը  
Աստուծու գործն է, բայց և այնպէս պատմեցէք ինձ»:

Տակառապետը առաջինն սկսեց պատմել իւր երա-  
զը. «Ես տեսայ երազումս մի որթ. նրա վրայ երեք հա-  
սած ողկոյզ կար. Փարաւոնի բաժակը ձեռիս էր. ողկոյ-  
զի հատիկները ճմլում էի բաժակիս մէջ և Փարաւո-  
նին էի տալիս»: Յովսէփը պատասխանեց. «Քո երազի  
մեկնութիւնն այս է—երեք ողկոյզները երեք օր է նը-  
շանակում, որից յետոյ թագաւորը կրկին քեզ կյանձնէ  
քո պաշտօնը: Երբ քո գործը յաջող անցնի, չմոռանաս  
ինձ—միջնորդիք թագաւորին, որ ինձ բանտից ազատենա:»  
Ես յանցանք չունիմ. երբայլեցւոց երկրիցն եմ. ինձ գո-  
ղացան. Եգիպտոս բերին. այստեղ էլ ոչինչ յանցանք  
չեմ գործել. իզուր տեղը բանտ են ձգել ինձ:

Մատակարարը երբ տեսաւ, որ Յովսէփն իւր ընկե-  
րոջ երազին գեղեցիկ մեկնութիւն տուաւ, սկսաւ ինքն  
էլ պատմել. «Ես էլ տեսայ երազումս երեք խան գըլ-  
խիս դրած. վերին խանի մէջ հացագործի պատրաս-  
տած՝ թագաւորի սիրած ամեն տեսակ կերակուրներն  
էին. այս վերին խանի կերակուրներից գալիս և ու-  
տում էին թուչունները»: «Քո երազի մեկնութիւնն էլ  
այս է—երեք խանը երեք օր է նշանակում. երեք օ-  
րից յետոյ Փարաւոնը գլուխդ կտրել կտայ. մարմինդ  
փայտից կկախեն. թուչունները կգան և կուտեն քեզ»:

Իսկ երեք օր այդ բանից յետոյ՝ թագաւորի ծնըն-  
դեան տօնն էր. մեծ խնճոյք պատրաստել տուտւ ծա-  
ռաների համար: Թագաւորն ուրախութեան մէջ յիշեց  
տակառապետին և մատակարարին ևս—առաջինին նախ-  
կին պաշտօնը շնորհեց, իսկ երկրորդին՝ փայտից կա-

խել տուաւ։ Տակառապետը լիշեց Յովսեփին—մոռացաւ նրան։

Ք. Երկու տարուց լետոյ Փարաւոնը մի երազ տեսաւ, որպէս թէ ինքը կանգնած է գետի ափում, որտեղից դուրս եկան եօթը գեղեցիկ և գեր երինջ ու սկսեցին մարդագետնի վրայ արածել։ Սրանից լետոյ տեսաւ եօթն ուրիշ տգեղ և վտիտ երինջ, որոնք դուրս եկան և կուլ տուին այն եօթը գեղեցիկ և գեր երինջներին։ Փարաւոնը զարթնեց ու նորից քնեց։

Երկրորդ անգամ երազ տեսաւ, որպէս թէ մի փընջից եօթը գեղեցիկ ու ընտիր հասկ դուրս եկաւ։ Յետոյ տեսաւ եօթն ուրիշ՝ ազազուն և խորշակահար հասկ դուրս եկան ու նախկին եօթն գեղեցիկ և ընտիր հասկերին կուլ տուին։ Փարաւոնը, երբ զարթնեց, շփոթուեց։ Կանչել տուաւ Եգիպտոսի երազահաններին և պատմեց իւր տեսած երազները, բայց ոչ ոք չկարողացաւ մեկնել։

Այն ժամանակ թագաւորի տակառապետն ասաց. «Այսօր լիշեցի իմ յանցանքը—երբ թագաւորն ինձ և մատակարարին բանտարկել տուաւ, գիշերը երկուսս էլ երազ տեսանք։ Մեզ մօտ մի եբրայեցի տղայ եկաւ. մեր երազները մեկնեց և ինչպէս մեկնեց, այնպէս էլ կատարուեց—ես նորից իմ պաշտօնն ստացալ, իսկ մատակարարը փայտից կախուեց»։

Թագաւորը կանչել տուաւ Յովսեփին։ Բանտից դուրս բերին, ածիլեցին. նոր շորեր հազցըին, և Փարաւոնին ներկայացրին։ Թագաւորն ասաց. «Ես երազ եմ տեսել. ոչ ոք չէ կարողանում մեկնել. ինձ պատմեցին, եթէ դու երազս լսես, կարող ե, մեկնել։ Յով-

սէփը պատասխանեց. «Տէր արքայ, ինքս ոչինչ չեմ կարող անել. այդ Աստուծու գործն է»։

Փարաւոնը պատմեց Յովսեփին իւր երազները։ Յովսեփը պատասխանեց. «Երկու երազն էլ միւնոյն նըշանակութիւնն ունին—Աստուծ գրանով իւր անելիքը յայտնում է Փարաւոնին։ Եօթը տարի Եգիպտոսում լիութիւն և առատութիւն կլինի, դրանից լետոյ կգան եօթն սովի տարիները։ Առատութեան տարիները կանցնեն, սովի տարիներում մարդիկ կկերակրուեն առատութեան տարիների բերքերում։ Ինչ վերաբերում է նրան, որ թագաւորը միւնոյնը երկրորդ անգամն է տեսել, նշանակում է Աստուծ կամենում է յալտնել։ Որ այդ բանն անշուշտ կկատարուի և շուտով։ Ուրեմն թագաւոր, պէտք է մի խելօք մարդ գտնես և Եգիպտոսի կառավարիչ նշանակես, որպէսզի առատութեան եօթը տարում կերակրի պաշար հաւաքէ՝ եօթն սովի տարուայ համար և երկիրը սովի ձեռից ազատել կարողանար»։

Այս բանին թէ թագաւորը և թէ նրա բոլոր ծառայողները շատ հաւանեցան։ Յետոյ փարաւոնն ասաց. Յովսեփին. «Ել ով պէտք է լինի քեզնից խեցքը և իմաստունը. ամբողջ Եգիպտոսը քեզ եմ յանձնում—իմ բոլոր հպատակները քեզ կլսեն՝ միայն ես քեզնից մեծ կլշուիմ»։

Սրանից յետոյ Փարաւոնը հանեց մտանին իւր մատից և Յովսեփի մատը գրաւ. բեհեղեալ շորեր հազցնել տուաւ և ոսկեալ մանեակն էլ զգից կախեց։ Իւր կառքի մէջ նստացնել տուաւ և մունետիկների բերանով բարձրաձայն հրատարակեց՝ ասելով. «Ծունկ չոքեցէք»։ Քուրմերի աղջիկներից մէկի հետ էլ ամուսնաց-

ըեց: Յովսէփն երկու որդի ունեցաւ, մինի անունը Եփ-  
րեմ, իսկ միւսինը Մանասէ դրաւ:

Յովսէփն երեսուն տարեկան էր, որ այդ պաշտօնն  
ստացաւ: Լիութեան եօթը տարիներում երկիրը լցուեց  
ամեն տեսակ բարիքներով: Յովսէփը ժողովել տուաւ  
եօթն տարուալ բերքերը ամբողջ երկրի մէջ և նշանա-  
կեց մարդիկ, որոնք հսկում և ժողովում էին ցորենը  
Փարաւոնի շտեմարանների մէջ: Ժողոված ցորենը նման  
էր ծովի աւազին—անկարելի էր չափել:

Անցան լիութեան եօթ տարիները և եկան սովի եօթը  
տարիները. ամբողջ երկրի մէջ սով ընկաւ: Ժողովուրդն  
աղաղակում և հաց էր խնդրում թագաւորից: Փարա-  
ւոնը պատասխանեց Եգիպտացիներին: Գնացէք Յովսէ-  
փի մօտ և ինչ որ ձեզ կասէ, այն էլ արէք»: Յովսէփն  
իսկոյն բաց անել տուաւ շտեմարանների բերաններն  
ամենայն տեղ և ցորեն էր ծախում բոլոր Եգիպտացի-  
ներին: Հեռաւոր երկիրներից ևս Եգիպտոս էին գալիս  
ցորեն գնելու, որովհետեւ ամեն տեղ էլ սով էր:

«Աստուծու խորհուրդը սքանչելի է, ու նրա իմաստութիւ-  
նը գերազանց»:

«Զի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, եւ  
ոչ ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր՝ ասէ Տէք: Այլ որ-  
պէս հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են ճանապարհք  
իմ ի ճանապարհաց ձերոց»:

Իմ մտածմունքները ձեր մտածմունքների նման չեն և ոչ  
իմ ճանապարհները ձեր ճանապարհների նման, ասում է Աս-  
տուած, այլ ինչպէս երկինքը երկրիցը հեռի է, այնպէս էլ իմ  
ճանապարհները ձեր ճանապարհներից»:

26.

ՅՈՎՍԷՓԻ ԵՂԲԱՑՐՆԵՐԸ ԳԸԼԻՄ ԵՆ ԵԳԻՊՏՈՍ

Ա. Քանանացւոց երկրում ևս սով էր ընկել: Երբ  
Յակովը լսեց, որ Եգիպտոսում ցորեն կալ, կանչեց իւր  
որդւոց և ասաց. «Նտապեցէք, գնացէք Եգիպտոս ցո-  
րեն գնելու, որ սովից չմեռնենք»: Յովսէփի տասն եղ-  
բայրները Եգիպտոս գնացին ցորեն գնելու: Յակովը  
Բենիամինին չարձակեց միւսների հետ, որովհետեւ վա-  
խենում էր, թէ մի գուցէ փորձանք պատահի նրան:

Յովսէփի եղբայրները Եգիպտոս եկան և կամե-  
նում էին ցորեն գնել: Նրանք Յովսէփին ճանաչեցին,  
երկրագութիւն տուին և գլուխները քաշ՝ նրա առաջ  
կանգնած էին: Յովսէփն իսկոյն ճանաչեց և լիշեց իւր  
տեսած երազը: Նա իբրև օտարական ներկայացաւ,  
խիստ լեզուով խօսեց նրանց հետ և հարցընց. «Ո՞րտե-  
ղից էք գալիս»: Նրանք պատասխանեցին. «Քանանաց-  
ւոց երկրից, որ ցորեն գնենք»: Յովսէփն ասաց. «Դուք  
լրտեսներ էք, եկել էք իմանալու, թէ մեր երկիրն  
ինչ վիճակի մէջ է»: Նրանք ասացին. «Ոչ, տէր քո ծա-  
ռաները եկել են ցորեն գնելու. լրտեսներ չենք. մենք  
տասներկու եղբայր ենք, մի հօր որդի. մեր հայրը  
ապրում է Քանանացւոց երկրում. կրտսեր եղբայրներս  
տանն է՝ հօր մօտ, իսկ միւսը՝ այլ ևս չկայ»: Յովսէփը  
կրկնեց. «Դուք լրտեսներ էք» և երեք օր բանտարկեց  
նրանց:

Երրորդ օրը Յովսէփն ասաց նրանց. «Ձեզանից  
մէկը պէտք է բանտում կապուած մնալ, իսկ դուք ձեր  
գնած ցորենը տուն տարէք, որ սովը չնեղացնէ. վերա-

դարձին ձեր կրտսեր եղբօրն ինձ մօտ բերէք, այն ժամանակ ես կհաւատամ ձեր խօսքերին»։ Եղբայրներն սկսեցին միմեանց երեսին նալել և ասել. «Այս բոլորը որ մեր գլխին գալիս է, Յովսէփի պատճառովն է. մենք նրա պաղատանքին չլսեցինք, երբ նա մեզ աղաջում էր, դրա համար էլ Աստուած վրէժխնդիր է լինում մեզ»։ Այդ միջոցին Ոռուբէնը խօսեց. «Ես ձեզ չեմ ասում, թէ այդ մանկան գէմ չպիտի մեղանչել, դուք ինձ չլսեցիք, դրա համար էլ այս պատիժը մեր գլխին է գալիս»։

Նրանք այնպէս էին կարծում, թէ Յովսէփն իրանց խոստովանութիւնը չէ հասկանում, որովհետեւ թարգմանի բերանով էր խօսում։ Յովսէփն երեսը շուռ տուաւ և սկսեց լալ։ Յետոյ շուռ եկաւ և նրանց աչքի առաջ Շմաւոնին կապել տուաւ. հրամայեց նրանց տոպրակները ցորենով լցնել ու իւրաքանչիւրի ցորենի գինն էլ պարկի մէջ դնել. բացի դրանից հրամայեց ճանապարհի համար հի համար պաշար ևս տալ։ Ամենայն բան նրա հրամանի համաձայն կատարուեցաւ։

Բ. Եղբայրները ցորենը բեռնեցին էշերին և սկսեցին հեռանալ Եգիպտոսից։ Ճանապարհին եղբայրներից մէկը բաց արաւ պարկի բերանն իշին կերակուր տալու և տեսաւ իւր ցորենի գինը պարկի մէջն է դրած։ Իսկոյն իմաց տուաւ եղբայրներին և ասաց. «Իմ ցորենի փողը պարկիս մէջն է դրած»։ Երկիւղից ամենքը զարհուեցան ու ասում էին իրար. «Այս ի՞նչ փորձանք է, որ Աստուած մեր գլխին բերում է»։

Երբ տուն հասան՝ պատմեցին այս անցքը իրանց հօրն ու ասացին. «Այն երկիւ տէրը մեզ հետ խիստ լեզուով խօսեց. մեզ լրտեսների տեղ ընդունեց. մենք

նրան պատասխանեցինք, թէ արդարախօս մարդիկ ենք. մեզանից մէկն այլ ևս չկալ, իսկ կրտսերն էլ մեր հօր մօտն է։ Երկրի իշխանն ասաց մեզ. «Թողէք ձեր եղբայրներից մէկին ինձ մօտ, յետ դարձէք և ձեր կըրտսեր եղբօրն ինձ մօտ բերէք, թէ չէ ձեր խօսքին չես հաւատայ. այն ժամանակ կհաւատամ, որ դուք լրտեսներ չեք, այլ՝ արդարախօս մարդիկ և ձեր եղբօրն էլ կվերադարձնեմ»։

Երբ իրանց պարկերի ցորենները թափում էին, նրանցից իւրաքանչիւրը ցորենի գինը իւր տոպրակի մէջ գտաւ. ամենքն էլ զարհուրանքի մէջ էին Յակովբի հետ։ Հայրն ասաց. «Դուք ինձ անորդի արիք. Յովսէփը չկալ այլ ևս. Նմաւոնը նմանապէս. Հիմայ էլ Բենիամինին էք ուզում տանել—այս բոլոր անբախտութիւնն իմ գլխին է գալիս»։ Ոռուբէնը պատասխանեց հօրն ու ասաց. «Բենիամինին ինձ յանձնիր, ես յետ բերեմ նրան»։

Բայց Յակովը պատասխանեց. «Իմ որդուն չեմ թոյլ տայ, որ ձեզ հետ Եգիպտոս գնայ, որովհետեւ նրա եղբայրը չկալ, նա միայն է մնացել Հռաքէլից։ և թէ ճանապարհին մի վտանգ պատահի, ծերութեանս օրերում տրտմութեամբ և անմխիթար գերեզման կիշեցնէք ինձ»։

Գ. Սովը սաստկանում էր Քանանացւոց երկրում։ Երբ Եգիպտոսից բերած ցորենն սպառուեց, Յակովըն ասաց իւր որդւոց. «Ելի գնացէք այն երկիրն ու կերակուր գնեցէք»։ Յուղան պատասխանեց. «Այն երկրի իշխանը մեզ ասաց, եթէ ձեր եղբօրը հետներդ չէք բերի, իմ երեսը չտեսնէք. թոյլ տււր Բենիամինին, որ նա էլ մեզ հետ գալ, ոչինչ վտանգ չի պատահիլ նրան։ Ին-

ձանից պահանջիր, եթէ նրան մի բան պատահի, եթէ  
ես նրան չըերեմ և քս առաջ չկանգնացնեմ, թող ամ-  
բողջ կեանքիս մէջ յանցաւոր մնամ»:

Յակովը պատասխանեց: «Ուրեմն այնպէս արէք՝  
ինչպէս ուզում էք—վեր առէք հետներդ մեր երկրի  
ընտիր բերքերից. իշխանին ընծալ տարէք մեղր, խունկ,  
ստաշխն, բևեկն և ընկոյզ: Զմոռանաք ձեր պարկերում  
գտնուած փողը յետ տանել, թերևս մի սխալանք է այդ-  
ուրիշ փող ևս առէք հետներդ: Թող գթասիրտ Աստ-  
ուածը քաղցրացնէ իշխանի աչքը ձեզ վրայ, որպէսզի  
միւս եղբայրներիդ և Նմաւոնին արձակէ»: Եղբայրները  
վեր առան ընծաները, փողն և Բենիամինի հետ ճա-  
նապարհ ընկան դէպի Եգիպտացւոց աշխարհը:

¶. Երբ Յովսէփն իւր եղբայրներին և Բենիամի-  
նին տեսաւ, ասաց հազարապետին. «Տուն տար այս մարդ-  
կանց և հացի պատրաստութիւն տես, սրանք ինձ մօտ  
պէտքէ ճաշեն: Այն մարդը Յովսէփի տունը տարտա-  
նրանց: Եղբայրները երկիւղից սկսեցին խօսել և տանի:  
«Երեխ առաջին անգամ մեր պարկերումը փող գտնուե-  
լու համար են մեզ այստեղ բերում. նա ուզում է մեզ  
յանցաւոր դուրս բերել և ծառաներ դարձնել»: Սրա  
համար էլ եղբայրները մօտեցան հազարապետին և ա-  
սացին. «Ո՞հ, տէր, մենք առաջ եկել էինք այստեղ կե-  
րակուր գնելու, երբ տուն դարձանք և մեր պարկերի  
բերանները բաց արինք, մեզանից իւրաքանչիւրը վճա-  
րած փողը պարկի մէջ գտաւ: Մենք այդ փողը յետ ենք  
բերել և բացի դրանից էլի ուրիշ փող՝ կերակուր գնե-  
լու. մենք չգիտենք, թէ այդ փողն ո՞վ է դրել մեր պար-  
կերում»:

Հազարապետը պատասխանեց նրանց. «Մի վախե-

նաք, այդ փողն Աստուած է դրել ձեր պարկերի մէջ.  
Տա մեր փողն ստացել եմ: Նմաւոնին էլ դուրս հա-  
նեց ու միասին Յովսէփի տուն տարաւ և ջուր տուաւ,  
որ ոտները լուանան: Եղբայրները բերած ընծաները  
պատրաստ պահեցին, որովհետև լսել էին, թէ Յով-  
սէփն իրանց հետ պիտի ճաշէ:

Երբ Յովսէփը տուն եկաւ, եղբայրներն ընծաներն  
տառան և երեսների վրայ ընկան: Նա սիրով ողջունեց  
նրանց և ասաց. «Ի՞նչպէս է ձեր ծերունի հայրը, որի  
մասին ինձ առաջին անգամ պատմեցիք»: Նրանք պա-  
տասխանեցին. «Մեր հայրը՝ քո ծառան կենդանի է գեռ  
և առողջ ու գլուխ տուին նրան: Յովսէփը նայեց,  
տեսաւ Բենիամինին և ասաց. «Կարծեմ սա պէտք է  
լինի ձեր կրտսեր եղբայրը, որի մասին ինձ պատմեցիք»,  
յետոյ աւելացրեց. «Աստուած թող ողորմի քեզ, որ-  
դեակի: Յովսէփը հեռացաւ իւր սենեակն և սկսեց լաց  
լինել: Յետոյ երեսը լուաց. սիրտը պնդացրեց. դուրս  
եկաւ և պատուիրեց, որ հաց բերեն: Ամեն մէկի հա-  
մար առանձին—առանձին ճաշ բերին. Յովսէփին առան-  
ձին, եղբայրներին առանձին—առանձին, նոյնպէս և  
այնտեղ եղող Եգիպտացիներին: Եգիպտացիք իսրայէլա-  
ցիների հետ չճաշեցին, որովհետև նրանց պիղը էին  
համարում:

Յովսէփի եղբայրներին իրանց հասակի համաձայն  
նատացրին—առաջ մեծերին, յետոյ՝ կարգով փոքրերին  
և սկսեցին կերակուր բաժանել: Բենիամինի բաժինը  
հինգ անգամ աւելի էր լցրած՝ քան թէ միւսներինը: Այս  
քանի վրայ եղբայրները շատ զարմացան.

«Զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնաեսցէ:  
Ինչ կցանես, այն էլ կհնձես:

27.

ՅՈՎՍԵՓԸ ՅԱՅՑՆԻՈՒՄ Է ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

Ա. Յովսէփը հրամալեց հազարապետին և ասաց. «Թրանց պարկերը մինչև բերանները լցնել տուր ցորենով և իւրաքանչիւրի փողն իրա պարկի մէջ դէր, իսկ իմ սկիհը՝ կրտսեր եղբօր պարկի մէջ»։ Հազարապետը կատարեց Յովսէփի հրամանը։ Հետևեալ օրն եղբայրները ճանապարհ ընկան դէպի տուն։ Դեռ քաղաքից նոր էին դուրս եկել, որ Յովսէփն իւր հազարապետին կանչեց ու ասաց. «Նտապիր, հասիր այն մարդկանցն և ասա, ինչու համար դուք բարութեան փոխարէն չարութիւն արիք. ինչու իմ տիրոջ սկիհը, գողացաք. այդ ինչ չարութիւն է ձեր արարմունքը»։

Հազարապետն օտարականներին հասաւ և ալսպէս էլ ասաց նրանց։ Օտարականները պատասխանեցին և ասացին. «Այդ ինչ խօսք է որ ասում ես, Աստուած մի արասցէ, որ մենք այդպիսի բան արած լինենք. այն փողը, որ մենք մեր պարկերի մէջ գտանք, էլի յետ բերինք, ինչպէս կարելի է որ մենք քո տիրոջ տանից արծաթ կամ ոսկի գողանալինք։ Ում մօտ սկիհը գտնէք, թող նա մեռնի, իսկ միւսները քո տիրոջ ծառաները լինին»։ Նա պատասխանեց. Ոչ, ում մօտ սկիհը գըտնուի, թող նա լինի իմ ծառան, իսկ միւսներդ ազատ էք»։

Նտապով վեր բերին պարկերը և սկսեցին բերանները բացանել։ Հազարապետը նայեց՝ մեծից մինչև փոքրըն ու վերջը բենիամինի պարկի մէջ գտաւ սկիհը։ Եղայրներն սկսեցին իրանց շորերը պատառել, ամեն մէկն

իւր էշը բեռնեց ու նորից քաղաք վերադարձան։

Բ. Յուղան իւր եղբայրների հետ դարձաւ Յովսէփի տուն և երեսների վրայ գետին ընկան։ Յովսէփին ասաց նրանց. «Այդ ինչ արիք»։ Յուղան պատասխանեց. «Ինչ պատասխանենք կամ ինչպէս արդարանանք. ահա ալյսեղ ենք ամենքս և նա, որի մօտ սկիհը գտնուեց, ամենքս էլ քո ծառաներն ենք»։

Իսկ Յովսէփը պատասխանեց. «Այդպիսի բան ես չեմ անիլ, որի մօտ սկիհը գտնուել է, նա միայն կլինի իմ ծառան, իսկ միւսներդ ազատ էք, գնացէք խաղաղութեամբ ձեր հօր մօտ»։

Այն ժամանակ Յուղան մօտեցաւ նրան և ասաց. «Տէր, թոյլ տուր ծառայիդ քո առաջ մի խօսք ասելու, մի բարկանար նրա համարձակութեան վրայ, որովհետեւ Փարաւոնից լետոյ առաջին մարդն ես։ Մենք առաջ քեզ ասացինք, որ տանը ծերունի հայր և կրտսեր եղբայր ունինք և թէ մեր հայրը նրան շատ է սիրում։ Դու մեզ պատասխանեցիր, եթէ ձեր կրտսեր եղբօրն ինձ չբերէք, իմ երեսը չտեսնէք։ Մենք մեր հօրը հարցընք և կամենում էինք մեր կրտսեր եղբօրը քեզ մօտ բերել։ Նա ասաց մեզ. գիտէք որ Հռաքէլն եր՛ու որդի ծնաւ. մինից զրկուեցի, հիմա էլ սրան էք ուզում տանել. եթէ ճանապարհին հիւանդութիւն կամ մի անբաղութիւն պատահի, այն ժամանակ ինձ տրտութիւնով գերեզման կիցեցնէք։ Ես՝ քո ծառան երաշխաւոր եղայ հօրս և ասացի, որ եթէ ետ չբերեմ, իմ ամբողջ կեանքի մէջ պատասխանատու մնամ նրա առաջ։ Դրա համար ինձ ընդունիր մանկան փոխարէն որպէս ծառայ, իսկ նա թող եղբայրների հետ իւր հօր մօտ դառնայ, որովհետեւ առանց մանկան ինչպէս կարող եմ

Ես հօրս աչքին երևալ. բնչպէս տեսնեմ ես այն սըրտ-նեղութիւնը, որ ծերունի հայրս պիտի կըէ, երբ Բե-նիամինին մեզ հետ չտեսնի»:

Յովսէփն էլ երկար չկարողացաւ իրան պահել, հրամայեց բոլոր եգիպտացիներին դուրս գնալ և սկսեց ինքը բարձր ձախով այնպէս լաց լինել, որ եգիպտացիներն և Փարաւոնի ծառաները դրսում նրա ձախը լսեցին: Նա ասաց վերջապէս եղբայրներին. «Ես Յովսէփն եմ»: Նրա եղբայրները վախից չգիտէին, թէ ինչ պատասխանեն նրան, իսկ Յովսէփը շարունակեց. «Մօտ եկէք»: Նրանք էլ մօտեցան: Նա աւելացրեց. «Ես Յովսէփն եմ՝ ձեր եղբայրը, որին Եգիպտոս վաճառեցիք. մի վախէք. չմտածէք ամենեւին, թէ ես դրա համար կնեղանամ ձեզանից. ձեր բախտաւորութեան համար Աստուած ինձ այստեղ է ուղարկել: Շտապեցէք ուրեմն տուն և ասացէք հօրս, որ Աստուած ինձ ամբողջ Ե-գիպտոսի տէր է դարձրել, շտապի՞ր, արի? շուտով ինձ մօտ: Նա Գեսեմ երկրում կընակի և ինձ մօտիկ կլինի. այնտեղ կընակեն իւր որդիքը, թոռները, ոչխանըրերը, տաւարները և ինչ որ ունի, թո՞ղ բոլորն էլ հետը բերի: Ես նրա պակասութիւնը կհոգամ, որովհետև սովն էլլ հինգ տարի դեռ կշարունակուի. Ես չեմ թոյլ տայ որ նրա տունը կորչի: Պատմեցէք հօրս թէ ինչպիսի փառք ու պատիւ ունիմ այստեղ՝ Եգիպտոսում. պատ-մեցէք ինչ որ տեսաք»:

Նա ընկաւ Բենիամինի վզովն ու լաց եղաւ: Բե-նիամինն էլ նրա վզովն ընկաւ ու լաց եղաւ: Յովսէ-փը համբուրեց բոլոր եղբայրներին և շարուակ լաց էր լինում: Սրանից լետոյ եղբայրներն սկսեցին նրա հետ խօսել.

Գ. Երբ այս ձայնը Փարաւոնին հասաւ, թէ Յովսէփի եղբայրներն եկել են, շատ ուրախացաւ թէ ինքը և թէ իւր պաշտօնեաները: Նա Յովսէփի բերանով յալտնեց եղբայրներին, որ նրանք իրանց էշերը բառ-նան. Քանանացւոց երկիրն շտապեն և իրանց հօրը Եգիպտոս բերեն. Նա խոստացաւ նրանց շատ բարութիւններ անել:

Յովսէփը նրանց կառքեր տուաւ, նմանապէս ճա-նապարհի պաշար և ամեն մինին երկու ձեռք շոր, իսկ Բենիամինին երեք հարիւր դահնեկան և հինգ ձեռք շոր: Բացի դրանից հօր համար տասն էշն ուղարկեց՝ բարձած Եգիպտոսի բարեկներով, այլև տասն զորի ցո-րենով և հացով բարցած: Յովսէփն իւր եղբայրներին այսպէս ճանապարհ դրաւ:

Նրանք հեռացան Եգիպտոսից և եկան Քանանաց-ւոց երկիրը՝ իրանց հօր մօտ ու պատմեցին այս բոլո-րը—թէ Յովսէփը կենդանի է դեռ և ամբողջ Եգիպտո-սը նրա իշխանութեան տակն է: Յակովը զարմացաւ այս բանի վրայ և չէր հաւատում: Այնուհետև պատ-մեցին եղբայրներն ինչ որ իրանց գլխովն անցել էր: Երբ Յակովը կորած որդու ուղարկած կառքերը տե-սաւ, սթափեցաւ և ասաց. «Միթէ իմ որդի Յովսէփը կենդանի է, շտապեմ նրան տեսնել՝ քանի որ չեմ մեռել»:

«Որ ծածկէ զամբարշտութիւն իւր՝ ոչ յաջողեցի՝ իսկ որ պատմէ եւ յանդիմանէ, սիրելի եղիցի»:

Ով իւր յանցանքը կուրանայ, միշտ կյայտնուի, իսկ ով կիսուսովանէ, նրա գործը լաւ կլինի:

«Զբարերարութիւն և զհաղորդութիւն մի մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս հաճի Աստուած»:

Բարի անելն և տեղեկութիւն հաղորդելը մի մոռանաք, որովհետև այսպիսի զոհաբերութիւնը սիրում է Աստուած:

Աստուծու խորհուրդը սքանչելի է ու նրա իմաստութիւնը գերազանց:

28.

### ՅԱԿՈՎԻԾ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Ա. Յակովը չուեց դէպի Եգիպտոս իւր բոլոր ստացուածով: Երբ Բերսարէ հասաւ, Աստուած ասաց նըրան տեսիլքում. «Ես քո հօր ամենակարող Աստուածն եմ, մի վախեցիր, գնա Եգիպտոս. այնտեղ քեզ մեծ ազգ կդարձնեմ. ես քեզ հետ եմ գալիս Եգիպտոս. այնտեղ Յովսէփը պէտք է քո աչքերը խփէ»:

Այս խօսքերից յետոյ Յակովը հեռացաւ Բերսարէից: Նշա որդիքը լծեցին Յովսէփի ուղարկած կառքերն ու նստացրին նրանց մէջ իրանց որդւոցն և կանանցը. առան իրանց հետ կենդանիներն և կայքը, որ Քանանացւոց երկրումն էին աշխատել և ալսպէս Յակովը վաթսուն և վեց հոգուով Եղիպտոս տեղափոխուեց:

Յակովը Յուղալին առաջուց Յովսէփի մօտ ուղարկեց, որպէս զի իր գալուստը յայտնէ նրան: Յովսէփն այս լուրն առնելուն պէս՝ իսկոյն լծել տուաւ կառքն և եկաւ հօրն ընդունելու: Երբ Յովսէփը հօրը տեսաւ, զզովն ընկաւ ու երկար ժամանակ լաց էր լինում: Յակովըն ասաց. «Հիմա հանգիստ կմեռնեմ՝ քեզ տեսնելուց յետոյ»: Այն ժամանակ Յովսէփը խօսքը դարձրեց դէպի իւր հայրն ու Եղեալներն և ասաց. «Ես շտապում եմ Փարաւոնին իմաց տալու ձեր գալուստը»:

Բ. Յովսէփն եկաւ Փարաւոնի մօտ և ասաց. «Ի

Հայրը և իմ Եղեալներն եկել են Քանանացւոց երկրից իրանց ոչխարներով, տաւարներով և բոլոր ստացուածներով ու Գեսեմ երկրումն են»:

Յովսէփն առաւ իւր Եղեալներից Հնգին և ներկայացրեց Փարաւոնին: Թագաւորը հարցրեց Եղեալներին. «Ինչո՞վ էք պարապում»: Նրանք պատասխանեցին. «Քո ծառաները և մեր հայրը խաշնարածներ ենք: Մենք եկել ենք քո երկրում բնակուելու, որովհետև քո ծառաները արօտատեղի չունեն իրանց անասունների համար. սովը նեզում է մեզ Քանանացւոց երկրում, թույլ տո՛ւր մեզ Գեսեմում բնակուելու»: Փարաւոնն ասաց Յովսէփին. «Ըստրի՞ր քո հօր և քո Եղեալների համար իբրև բնակութեան տեղ իմ երկրի ամենալաւ տեղը՝ բնակեցրո՛ւ նրանց Գեսեմում: Եւ եթէ քո Եղեալների մէջ քաջ և զօրաւոր մարդիկ կան, նշանակիր խաշներիս վրայ վերակացու»:

Յովսէփը կանչեց իւր հօրն ևս ու ներկայացրեց թագաւորին: Փարաւոնը հարցրեց Յակովըին. «Քանի տարեկան ես»: Յակովը պատասխանեց. «Իմ պանդիստութեան տարիները հարիւր և ելեսուն են»: Յակովը օրհնեց Փարաւոնին և հեռացաւ:

Յովսէփը հօրն և Եղեալներին բնակեցրեց Եգիպտոսի ամենապտղաւէտ մասնում, ինչպէս թագաւորը հրամայել էր ու հոգս էր տանում ամենի համար:

Գ. Այսպէս Յակովի սերունդը բնակուեց Գեսեմ երկրում, ուր նրանք աճեցին և բազմացան: Յակովը Եգիպտոսում տասն և եօթն տարի ալլրեց: Երբ մահուան օրը մօտեցաւ, կանչեց Յովսէփին և ասաց. «Եթէ ինձ սիրում ես, մի թաղիր Եգիպտոսում. վերջին ցանկութիւնս է հայրերիս մօտ հանգստանալ. դուրս տան

ինձ այս երկրից և պապերիս գերեզմանի մէջ թազել տուր»։ Յովսէփը պատասխանեց. «Այնպէս կանեմ, ինչպէս քո կամքն է»։ Այնուհետև խոնարհեցրեց Յակովըն իւր գլուխը և աղօթում էր անկողնի մէջ։

Սրանից յետոյ իմաց տուին Յովսէփին, որ հայրը հիւանդ է։ Յովսէփն իսկոյն վեր առաւ իւր երկու որդւոց՝ Եփրեմին և Մանասէին ու գնաց հօր մօտ։ Յակովըն երբ իմացաւ, որ Յովսէփը գալիս է, զօրացաւ, տեղից վեր կացաւ. նստեց անկողնի մէջ և ասաց Յովսէփին. «Ամենակարող Աստուածը տեսիլքում երևաց ինձ Քանանացւոց երկում. օրհնեց և ասաց. Ես քեզ մեծ ազգ կդարձնեմ. այս երկիրը քո ժառանգներին պէտք է տամ։ Քո երկու որդիքն ևս՝ Եփրեմն ու Մանասէն իմն են, ինչպէս Ոռուբէնն ու Շմաւոնը»։

Յակովըն մեկնեց իւր ձեռներն և Յովսէփի երկու որդւոց գլխներին դնելով՝ օրհնեց և ասաց. «Իմ հայրերի Աստուածը թող օրհնէ այս մանուկներին, որպէսզի սրանք ամեն և բազմանան երկրիս վրայ»։

Յետոյ Յովսէփի հետ խօսեց ու ասաց. «Ահա ես մեռնում եմ, Աստուած ձեզ հետ կլինի ու կրկին ձեր հայրերի երկիրը կդարձնէ»։

Այնուհետև կանչեց Յակովըն իւր բոլոր որդւոցն և օրհնեց իւրաքանչիւրին յատուկ օրհնութիւնով։ Յուդային եղբարների վրայ մեծ նշանակեց և այսպէս օրհնեց. «Յուդա, զքեզ օրհնեսցեն եղբարք քո, ձեռք քո ի վերայ թիկանց թշնամեաց քոց. Երկիրպազցեն քեզ որդիք հօր քո։ Կորիւն առիւծաւ Յուդա, ի շառաւիզէ ելեր, որդեակ իմ, ելեր բազմեցար. ննջեցեր իբրեւ զառիւծ եւ իբրեւ զկորիւն առիւծու, ո յարուցանէ զնա։ Մի

պակասեսցէ իշխան ի Յուդա, եւ մի պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն եւ նա է ակնկալութեան հեթանոսաց։ Յակովըն խընդրեց իւր որդւոց և ասաց. «Ինձ թաղեցէք Քանանացւոց երկում, Մամբըէի մօտ գտանուող ալրի մէջ»։ Երբ իւր պատուէրը վերջացրեց, խիեց աչքերը և բաժանուեց ամենից։ Յովսէփն ընկաւ հօր վրայ, լաց էր լինում և համբուրում էր նրան։ Հրամայեց բժիշկներին, որ նրա մարմինը զմուեն։ Նրանք էլ կատարեցին այդ հրամանը։ Քառասուն օր այսպէս մնաց, որովհետև զմուսածներին այսքան օր էին պահում։ Եզիպտացիները սգում էին Յակովըն մահը եօթանասուն օր։

Երբ սգոյ օրերն անցան, Յովսէփը խօսեց Փարաւոնի հետ. «Իմ հայրն ինձ խնդրել է, որ նրան Քանանացւոց երկում թաղեմ. Ես գնում եմ և հօրս թաղելուց յետոյ՝ կվերադառնամ»։ Փարաւոնն ասաց. «Գնա՞և թաղիր քո հօրը, ինչպէս օր խոստացել ես»։

Այսպէս Յովսէփը ճանապարհ ընկաւ գէպի Քանան։ Փարաւոնի ծառաները, նոյնպէս Յովսէփինը, այլւեւ իւր եղբօր ու հօր ծառաները ուղեկցում էին նրան։ Նրանք կատարեցին այնպէս, ինչպէս օր Յակովըն էր հրամայել - դիակը տարան Քանանացւոց երկիրը և թաղեցին Մամբըէի մօտ՝ կրկին ալրի մէջ։ Սրանից յետոյ ամենքն էլ Եզիպտոս վերադառնամ։

«Պատուեա զհայր քո եւ զմայր քո, զի երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի»։

Պատուիր քո հօրն ու մօրը, որ երկրիս վրայ երկար կեանք կարողանաս վարել։

Երանի մեռելոց, որք ի Տէր ննջեցին»։

29.

### ՅՈՎԱԿԻՓԻ ՄԱՀ

Ա. Յակովի մահուանից յետոյ Յովսէփի Եղբայրները վախենում էին իրանց Եղբօրից—նրանք ասում էին. «Յովսէփը մեր դէմ ոխ կունենայ. նա մեր չարութեան փոխարէնն անպատճառ կհատուցանէ»։ Սրա համար եկան Յովսէփի մօտ և ասացին. «Ներիր մեր այն բոլոր յանցանքներն ու չարութիւնները, որ մենք գործել ենք քո դէմ»։ Այս բանի վրայ դառնացաւ Յովսէփի սիրտն և սկսեց լաց լինել։ Եղբայրները մօաեցան նրան. երեսի վրայ ընկան և ասացին. «Մենք քո ծառաներն ենք»։ Յովսէփն ասաց նրանց. «Մի վախենաք. ես էլ Աստուծու ծառան եմ. դուք իմ մասին չարութիւն մտածեցիք, իսկ Աստուած՝ բարի։ Մի վախենաք, ես ձեզ էլ և ձեր որդուոցն էլ կիերակրեմ»։ Նա միշտարեց Եղբայրներին և սիրով էր խօսում նրանց հետ։ Այսպէս Յովսէփը բնակում էր Եղիպտոսում իւր սերնդի հետ։

Բ. Երբ Յովսէփը հարիւր և տասն տարեկան դարձաւ, ասաց Եղբայրներին. «Ահա ես մեռնում եմ, Աստուած ձեզ պէտք է այցելութիւն անէ. նա ձեզ այս Երկրից կհանէ և կտանէ Քանանացւոց աշխարհը, որ Աստուած Աքրահամին, Խսահակին և Յակովին Երդուեց տալու։ Երբ դուք կտեղափոխուէք, չմոռանաք իմ ոսկորներն էլ ձեզ հետ տանելու»։

Այսպէս մեռաւ Յովսէփը։ Նրան զմռսեցին և թաղեցին Եղիպտոսում։

«Երանի խաղաղաբարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»։

Նրանի խաղաղասէրներին. որովհետև նրանք Աստուծու որդիք կինեն։

«Եթէ որոց սիրենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս»։

Նոքա, որոնք Աստուծուն սիրում են, բարին նրանցից անբաժան է։

ՅՈՎ.Բ ԵՐԱՆԵԼԻ. Հուս Երկրում մէկ մարդ կա՞ անունը Յովիք Նա արդար էր եւ Աստուածավախ ու հեռանում էր ամեն տեսակ չարութիւններից։ Յովին ունէր եօթն որդի եւ Երեք աղջիկ։ Նրա խաչներն էին 7,000 ոչխար, 3,000 ուղտ, 500 լուծ եղն եւ 500 մատակ էջ։ Բացի սըանցից ունէր բազմաթիւ ծառաներ—արևելցիների մէջ Յովին ամենից հարուստն էր։

Մի անդամ նրա որդիքն ու աղջիկները ուտում եւ գինի էին խմում իրանց անդրանիկ Եղբօր տանը։ Այս ուրախութեան միջոցին պատգամաբեր եկաւ Յովիք մօտ եւ ասաց. «Հերկելու ժամանակ սաբայեցիք յարձակուեցան մեզ վրայ, խեցին 500 լուծ եղները, այնտեղ արածող 500 մատաղ էշերը ու բոլոր ծառաներին էլ կոտորեցին։ Ես միայն ազատուեցայ եւ եկայ քեզ իմաց տալու։ Սա դեռ ես խօսքը չէ վերջացրել, որ մի Երկրորդ պատգամաբեր եկաւ ու ասաց. «Կրակ թափուեց Երկրնեց, այրեց եւ կոտորեց բոլոր խաչներն եւ ծառաներին. Ես միայն ազատուեցայ ու եկայ քեզ իմաց տալու։» Սա դեռ եւս խօսում էր, որ Երրորդ պատգամաբերն եկաւ ու ասաց. «Երեք գունտ քաղդէացիք յարձակուեցան 3,000 ուղտերի վրայ, քըշեցին, տարան եւ ծառաներին էլ կոտորեցին. Ես միայն ազատուեցայ ու եկայ քեզ իմաց տալու։ Սա դեռ եւս խօսքը չէր վերջացրել, որ չորրորդ պատգամաբերն եկաւ ու ասաց. «Որդիքու ու աղջիկներդ ուտում եւ գինի էին խմում իրանց մեծ Եղբօր տանը. սաստիկ փոթորիկ բարձրացաւ անապատի կողմից, կործանեց տունը եւ ամենքին էլ տակովն արեց ու սպանեց։

Ես միայն ազատուեցայ ու եկայ քեզ իմաց տալու:

Յովքը պատառեց իւր վերարկունք խուզել տուեց գլխի մազերը. վայր ընկաւ գետնի վրայ ու ասաց. «Մերկ եկայ մօրըս արգանդից եւ մերկ պիտի յետ դառնամ. Աստուած տուաւ, Աստուած էլ առաւ. նրա անունն օրհնեալ լինի»:

Սատանան հեռացաւ Աստուծու երեսից ու Յովքի մարմինը ծածկեց սև բորով՝ ոտքի թաթից սկսած մինչեւ գազաթը: Յովքը խեցին աւած քերում էր իւր վերքերը, որպէսզի փոքր ինչ մեղմէ իւր ցաւը—նա քաղաքից դուրս՝ նստած էր մոխրի մէջ: Կինը մօտ եկաւ եւ ասաց. «Ելի չես մուտանում քո աստուածպաշտութիւնը, հայհոյիր Աստուծուն եւ մեռիր»: Յովքը պատասխանեց իւր կնոջն ու ասաց. «Դու յիմար կանանց նըման ես խօսում. մենք Աստուածանից ցօրս շարունակ բարիք ենք ստացել, միթէ նրա ուղարկած չարիքը պէտք է մերժենք»: Յովքն իւր անտանելի ցաւերի մէջ չմեղանչեց Աստուծու դէմ: Երանելի է այն մարդը, որին Աստուած խրատում է եւ որն ամենակարողի խրատը չի մերժում:

Աստուած տեսնելով Յովքի համբերութիւնը, վերջ դրեց նրա թշուառ վիճակին ու կրկնապատիկ վարձատրեց: Այն ժամանակ նրա մօտ եկան նրա բոլոր եղբայրները, քոյրերը եւ ծանօթները. հաց էին ուտում նրա տանն ու մխիթարում էին:

Աստուած օրհնեց Յովքի վերջը—նա ունեցաւ 14,000 ոչխար, 6,000 մատակ է: Բացի այս հարսաւթիւնից Աստուած պարգեւեց նրան 7 որդի եւ 3 աղջիկ:

Սրանից յետոյ Յովքն ապրեց էլի 40 տարի եւ տեսաւիւր որդիքն ու թոռները մինչեւ չորրորդ սերունդը: Յովքը մեռաւ խորին ծերութեան մէջ:

## Գ. ԴԱՏԱԿՈՐՆԵՐԻ ԴԱՐ

### Ա. ՄՈՎՍԵՍ

30.

ԻՄՐԵՑԷԼԻ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Յովսէփը մեռել էր: Մեռել էին նրա բոլոր եղբայրները, բայց նրանց ժառանգներն այնքան բազմացել էին, որ Երկիրը լցուել էր նրանցով: Ալդ ժամանակ Եգիպտոսում նոր թագաւոր էր իշխում, որը Յովսէփին չէր ճանաչում. նա ասաց Եգիպտացիներին. «Խրայէլացիները չափից դուրս բազմացել են. նրանք վտանգաւոր կարող են լինել մեզ համար. Եթէ մի պատերազմ պատահի, կարող են թշնամու հետ միանալ և մեր դէմ պատերազմ մզել, ուստի պէտք է նրանց ոչնչացնել»:

Սրա համար թագաւորը վերակացուներ նշանակեց, որ չարչարեն նրանց: Եգիպտացիներն անգութիւնպով ստիպում էին իսրայէլացիներին աշխատելու. Նրանց կեանքը դառնացնում էին ամեն տեսակ ծանը աշխատանքներով՝ թէ աղիւսի գործարաններում և թէ գաշտում. Փարաւոնի համար ամուր քաղաքներ և շտեմարաններ պէտք է շինէին: Բայց որքան Եգիպտացիները ճնշում, նեղում էին իսրայէլացիներին, այնքան սրանք աճում և բազմանում էին: Փարաւոնը տեսաւ, որ այս միջոցով իւր նպատակին չէ հասնում, հրամայեց, որ Երաւեցւոց բոլոր նորածին արու գաւակները ջուրը ձգեն, իսկ աղջկանց խնայեն:

«Երանի՛ քեզ, երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է»:  
Երանի այն երկրին, որի թագաւորն ազնիւ է, բարի է:  
Դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն եւ Աստուած  
Խորհեցաւ վասն իմ ի բարութիւն»:  
Դուք ինձ համար չար բան մտածեցիք, իսկ Աստուած  
բարի:

31.

ՄՈՎՍԵՍԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Այդ ժամանակներում Ղեիի ցեղից մէկը՝ Ղեի ա-  
նունով մի մարդու աղջկայ հետ ամուսնացաւ և նրա-  
նից մի գեղեցիկ արու զաւակ ունեցաւ: Մայրը չափից  
գուրս ուրախ էր, երեք ամիս շարունակ ծածուկ էր  
պահում: Երբ այլ ևս անկարող եղաւ ծածուկ պահել,  
եղեգնից զամբիւղ հիւսեց. կպրածիւթով ծեփեց. տը-  
ղալին նրա մէջը դրաւ և նեղոսի եղեգնուտ ափը թո-  
ղեց: Մանկան քոյրը հեռուից դիտում էր՝ տեսնելու թէ  
եղբօրն ինչ կպատահի:

Թագաւորի աղջիկը նեղոսի ափն իշաւ լուացուե-  
լու: Նրա նաժիշտները գետի եզրում շրջում էին: Թա-  
գաւորի աղջիկը հեռուից նկատեց զամբիւղը, աղախին-  
ներից մէկին ուղարկեց, որ բռէ: Նրա հրամանը կա-  
տարուեցաւ—զամբիւղն իրան բերին, բաց արեց ու տե-  
սարուեցաւ—զամբիւղն իրան բերին, բաց արեց ու տե-  
սաւ, որ մէջը մի մանուկ լաց էր լինում: Թագաւորի  
գուստը գթաշարժուեց և ասաց. «Սա երբայեցւոց մա-  
նուկներից պիտի լինի»: Այն ժամանակ մանուկի քոյրը  
մօտեցաւ և ասաց Փարաւոնի աղջկան. «Արդեօք չես  
կամենայ մի երբայեցի մայր կանչեմ, որ մանկան կե-  
րակրէ»: Փարաւոնի աղջիկն ասաց. «Գնա և կանչիր»:  
Աղջիկն շտապեց հարազատ մօրը կանչելու: Մայրն

Հկաւ: Փարաւոնի աղջիկն ասաց. «Ա՛ռ այս մանուկը,  
մեծացրո՞ւ, ես քո վարձը կվճարեմ»: Մայրն առաւ ման-  
կան և սնուցանումէր նրան: Երբ մեծացաւ, մայրը  
թագաւորի աղջկայ մօտ բերաւ: Իշխանուհին որդեգրեց  
նրան և Մովսէս անուանեց, որ նշանակում է «Ջրից  
Հանած»: Մովսէսն ուսաւ Եգիպտոսում այն բոլոր գի-  
տութիւնները, որոնք յայտնի էին այն ժամանակ և  
գարձաւ մի իմաստուն մարդ:

«Պահէ Տէր զամենեսեան, ոյք սիրեն զնա»:

Զկեւանս եւ զողորմութիւն եղեր ի վերայ իմ, այցելու-  
թիւն քո պահեաց զոգի իմ»:

Կեանք եւ ողորմութիւն չնորհեցիր ինձ եւ քո ինամքը  
պահեց իմ անձը:

32.

ՄՈՎՍԵՍԻ ՓԱԽՈՒՍՑԸ

Երբ Մովսէսը չափահաս դարձաւ, գնաց իւր եղ-  
բայր իսրայէլացիների մօտ նրանց չարչարանքները տես-  
նելու: Նա տեսաւ, որ մի եգիպտացի իրան եղբայր իս-  
րայէլացիներից մէկին ծեծում էր. նայեց իւր շուշը  
և երբ տեսաւ, որ ոչ ոք չկայ, սպանեց եգիպտացուն  
և աւազի տակ թաղեց:

Միւս օրն ևս դուրս գնաց և տեսաւ, որ այս ան-  
գամ երկու իսրայէլացիներ են միմեանց հետ կուռմ: Մովսէսը դարձաւ յանցաւորին և ասաց. «Քնչու ես քո  
ընկերին ծեծում»: Նա սպատասխանեց. «Քեզ ով նշա-  
նակեց մեզ վրայ դատաւոր, չինի ինձ էլ երեկուայ ե-  
գիպտացու նման ուղում ես սպանել»: Մովսէսը գար-  
հուրեց, երբ իմացաւ որ իւր արարմունքը յայտնի է

Եղել: Այս բանը Փարաւոնի ականջին հասաւ: Նա կամենում էր Մովսէսին սպանել, իսկ Մովսէսը փախաւ Մագիամացւոց երկիրը և այնտեղ մի ջրհորի մօտ բընակւումէր:

Մագիամու քուրմը եօթն աղջիկ ունէր. նրանք եկան ջրհորի մօտ. զուր հանեցին ու լցրին նաւի մէջ՝ խաշները ջրելու համար: Ուրիշ հովիւներն ևս եկան և աղջիկներից խլեցին ջուրը: Մովսէսը տեղից վեր կացաւ. օգնեց աղջկանց. Ջրհորից ջուր հանեց և խաշներին խըմացրեց:

Երբ աղջիկները տուն դարձան, հայրը հարցրեց. «Ի՞նչու աւսօր վաղ եկաք»: Նրանք պատասխանեցին. «Մի եգիպտացի մարդ պաշտպանեց մեզ հովիւների գէմ, զուր հանեց և մեր ոչխարներին խմացրեց»: Յոթորն ասաց. «Ո՞րտեղ է այն մարդը, ի՞նչու նրան հացի չկանչեցիք»: Մովսէսին տուն հրաւիրեցին: Յոթորը յանձնեց սրան, որ իւր ոչխարներն արածացնէ և վերջը իւր Սեպովրա աղջկայ հետ էլ ամուսնացրեց:

«Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»:

Մարդու բարկութիւնը Աստուծու պահանջած արդարութիւնը յառաջ չէ բերում:

«Զի զոր սիրէ տէր՝ խրատէ»:

### 33.

## ԱՍՏՈՒԾԾ ԿԱՆՉՈՒՄ Է ՄՈՎՍԵՍԻՆ

Մովսէսը՝ արածացնում էր իւր աներ Յաթորի խաշներն անապատում: Մի անգամ մօտեցաւ Քորեք լերանը, տեսաւ որ մի մորենի վառւումէր, բայց

չէր այրւում: Մովսէսը մօտեցաւ իմանալու, թէ ինչու մորենին չէ այրւում: Իսկոյն թփի միջից ձայն եկաւ, որ ասում էր. «Մովսէս, Մովսէս»: Նա պատասխանեց. «Ի՞նչ է, Տէր»: Զայնը կրկնեց. «Հան կօշիկներդ, այդ տեղը, ուր դու կանգնած ես, սուրբ է»:

Զայնը շարունակեց. «Ես եմ Աքրահամի, Իսահակի և Յակովի Աստուածը»: Մովսէսը շուռ եկաւ և երեսը ծածկեց ձեռներով: Աստուած ասաց. «Ես տեսայ իմ ժողովրդի նեղութիւնները Եգիպտոսում. նրա աղաղակը հասել է ինձ. Ես կամենում եմ հանել նրան այն երկրից և Քանանացւոց երկիրը տանել, ուր մեղը և կաթն է բղխում. Ես կամենում եմ քեզ Եգիպտոս ուղարկել Փարաւոնի մօտ, որ իմ ժողովրդին ազտես»: Մովսէսն ասաց Աստուածուն. «Եթէ Ես Խօսակլացրոց մօտ գնամ և ասեմ, թէ ձեր հայրերի Աստուածը՝ Եհովան ինձ ուղարկեց, չեն հաւատալ և կասեն, որ Աստուած քեզ չի երևացել»: Աստուած ասաց. «Ձեռիդ գաւազնը գետին ձգիր»: Նա էլ ձգեց և գաւազնն օձ դարձաւ: Մովսէսը վախեցաւ և հեռացաւ: Աստուած ասաց. «Բոնիր ագիից»: Նա բռնեց և օձն իսկոյն գաւազն դարձաւ: Աստուած շարունակեց. «Ձեռդ ծոցդ գիր»: Դրաւ, բայց դուրս հանելիս՝ տեսաւ, որ ձեռը բորոտ է գառել՝ սպիտակ, ինչպէս ձիւն: Աստուած ասաց նրան. «Ձեռդ նորից ծոցդ գիր»: Նա էլ կատարեց և տեսաւ որ միւս ձեռի նման առողջ է: Աստուած ասաց. «Եթէ այս երկու նշաններին չեն հաւատալ, նեղոսից ջուրը կառնես, կըսկես գետնի վրայ, գետի ջուրն իսկոյն արիւն կդառնայ»:

Մովսէսն ասաց Աստուածուն. «Տէր, Ես ծանրալեզու եմ»: Աստուած ասաց. «Ո՞վ է մարդուն լեզու տուել.

ով է ստեղծել համրերին ու խուլերին. չէ որ ես, գնա՞  
ես քո լեզուն բաց կանեմ և կսովոցնեմ, թէ ինչ պի-  
տի խօսես: Քո ճարտարախօս եղբայր Ահարոնը քեզ  
հետ կգալ, նա քո փոխարէն ժողովրդին իմ կամքը  
կյալտնէ—նա քո բերանը կլինի, իսկ դու՝ նրա Աս-  
տուածը»:

Այս բանից յետոյ Մովսէսը Յոթորի մօտ գնաց և  
ասաց. «Արձակիր ինձ, ես Եգիպտոս պիտի գնամ իմ  
Եղբայրների մօտ: Յոթորը պատասխանեց. «Դնա խաղա-  
ղութեամբ»: Մովսէսը վեր առաւ իւր կնոջն և երկու-  
որդւոց ու ճանապարհ ընկաւ: Անապատում հանդիպեց  
Ահարոնին և յայտնեց նրան Աստուծու պատգամները:  
Մովսէսը տեղեկացաւ, որ այն ժամանակուայ փարաւոնն  
արդէն մեռել է: Երկու եղբայրները գնացին և Խորակէ-  
լի ժողովրդեան ծերերին իմիասին հաւաքեցին: Ահարո-  
նը յայտնեց նրանց Աստուծու կամքը, իսկ Մովսէսը  
ցոյց տուաւ նոյն նշանները ժողովրդի առաջ: Երբ ծե-  
րերն իմացան, որ Աստուծ իրանց նեղութիւնները լը-  
սել է, խոնարհեցան և սկսեցին ազօթել Աստուծուն:

«Զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»:  
Իմ զօրութիւնը տկարներին զօրացնում է:

34.

### ԵԳԻՊՏՈՍԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼԲ

Մովսէսն և Ահարոնը գնացին Փարաւոնի մօտ և  
ասացին. «Թօրայէլի Աստուածն ասում է. «Արձակիր իմ  
ժողովրդին»: Փարաւոնը պատասխանեց. «Այն որ Աս-  
տուածն է, որին ես պէտք է լսեմ և արձակեմ ժողո-  
վրդին, ես նրան չեմ ճանաչում»:

Փարաւոնն իսկոյն հրամայեց գործավարներին և  
նրանց օգնականներին, որ ժողովրդին աւելի խիստ աշ-  
խատեցնեն. Նրանց այլ ևս յարդ չտան, ինչպէս մինչև  
այժմ. թողի իրանք գնան և դաշտից ծղնոտ հաւաքեն՝  
աղիւս ալրելու համար: Հրամայեց նմանապէս, որ ա-  
ռանց յարդ ստանալու՝ պարտաւորեն նոյնքան աղիւս  
պատրաստել, ինչքան առաջ: Գործավարներն էլ գնա-  
ցին և թագաւորի կամքը ժողովրդին յայտնեցին: Ժողո-  
վուրդն սկսեց ցրուել ամբողջ Եգիպտոսում և յարդ ու  
եղեգն էր հաւաքում: Գործավարներն աւելի ևս ստի-  
պում էին ժողովրդին և ասում. «Աւարտեցէք ձեր ա-  
մենօրեալ աշխատանքն այնպէս՝ ինչպէս յարդ ունեցած  
ժամանակն էիք պատրաստում»: Եւ որովհետև նրանք  
հանապազօրեալ աշխատանքը անկարող էին աւարտել,  
ուստի և խիստ ծեծում էին նրանց:

Խորայէլի որդիները գանգատուեցին Մովսէսին, Ա-  
հարոնին և ասացին. «Աստուած ձեր դադաստանն անէ,  
գուշ շարժեցիք թագաւորի բարկութիւնը. Մովսէսն  
սկսեց աղօթել Աստուծուն և ասել. «Տէր, ինչու ես քո  
ժողովրդին ալբայիս չարչարում. այն օրից, երբ ես Փա-  
րաւոնի մօտ գնացի, ժողովրդի բեռն աւելի ծանրացաւ»:  
Աստուած ասաց Մովսէսին. «Այժմ դու կտեսնես, թէ  
ես Փարաւոնին ինչ կանեմ»: Բայց որովհետև նրանց նե-  
ղութիւններն և չարչարանքները խիստ ծանր էին, ըլ-  
հաւատացին նրան:

Սրանից յետոյ Աստուած մինը միւսի ետևից ծանը  
պատիմներ ուղարկեց Եգիպտացիների համար—գորտ,  
մուկն, կարկուտ, մորեխ... միայն Գեսեմ երկիրն ազատ  
մնաց: Այն ժամանակ Եգիպտացիներն ասացին. «Ա-  
ստուած սրանց հետն է»: Հէնց որ մի պատիժ գալիս էր,

Փարաւոնն ասում էր Մովսէսին և Ահարոնին. «Ժողովրդին կարձակեմ», իսկ երբ պատիմն անցնում էր, նրա սիրտը կըկին քարանում էր և ժողովրդին չէր առջական»:

Աստուած ասաց Մովսէսին. «Մի պատիմ էլ կուղարկեմ և Փարաւոնը կարձակէ ձեզ»: Ուղիղ կէս գիշերին Եգիպտոսի բոլոր անդրանիկները՝ Փարաւոնի որդուց սկսած մինչև վերջին աղախնի որդին՝ կմեռնեն, իսկ իսրայէլացիներից ոչ ոք չի մեռնիլ»:

Աստուած շարունակեց խօսել Մովսէսի հետ. «Յայտնիր իսրայէլի ժողովրդին, որ այս ամիսը նրանց համար առաջին ամիսը (Նիսան) պիտի լինի. այս ամսի տասն և չորսին իւրաքանչիւր տան տէր պէտք է մի գառն ունենալ. երեկոյեան ժամանակ մորթէ, ամբողջապէս խորովէ և իւր ընտանիքի հետ ուտէ միւնոյն գիշեր: Դրա հետ պէտք է ուտեն բաղարջ հաց: Ըսթրիքն այսպէս պիտի ուտեն—գոտին կապած. կօշիկները հազած. գաւազանը ձեռին և շտապով պիտի ուտեն: Միւնոյն գիշերը ես պիտի հարուածեմ Եգիպտոսի բոլոր անդրանիկներին, իսկ գուք անվնաս կհեռանաք: Այդ օրը չըպիտի մոռանաք, այլ ամեն տարի յիշեցէք՝ տիրոջ յիշատակի և ձեր լետագաների համար»: Այսպէս էլ արին իսրայէլացիները:

Այդ միւնոյն գիշերն Աստուած սպանեց Եգիպտոսի բոլոր անդրանիկներին՝ Փարաւոնի որդուց սկսած մինչև վերջին աղախնի որդին՝ տուն չկար, ուր սուդ չինէր: Փարաւոնը կանչեց Մովսէսին, Ահարոնին և ասաց. «Նտապեցէք, հեռացէք իմ ժողովրդից. վեր առէք ձեզ հետ ձեր տաւարն ու ոչխարները»: Եգեսլտացիներըն ստիպում էին իսրայէլացիներին հեռանալու իրանց

երկրից, որքան կարելի է շուտ: Նրանք ասում էին. «Հեռացէք, թէ չէ մենք ամենքս էլ կմեռնենք»: Այսպէս Եգիպտոսից գուրս եկան իսրայէլացիները՝ թուով վեց հարիւր հազար՝ չհաշուելով կանանց և երեխաներին: Իսրայէլացիները մնացին Եգիպտոսում չորս հարիւր երեսուն տարի: Մովսէսը տարաւ իւր հետ և Յովսէփի ոսկորները: Աստուած նրանց մի ամպէ սիւն տուաւ՝ ցերեկը, իսկ մի կրակէ սիւն էլ՝ գիշերն առաջնորդելու համար:

«Ամենայն ինչ նովաւ եղեւ»:

Ամեն բան նրանով եղաւ:

«Եւ զօրացեալքդ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է: Եւ զիորհուրդն զոր խորհիք, խափանէ տէր, զի...: Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք եւ ոչ խոռվիցուք, զի...: Ժամագիրք»:

Զօրեղներդ կյաղթուէք, որովհետեւ Աստուած մեզ հետ է: Այն՝ ինչ որ մտածում էք, Աստուած կխափանէ, որովհետեւ....: Ձեր երկիւղից և սպաննալիքներից մենք չենք վախենայ, որովհետեւ....:

35.

### ԿԱՐՄԻՐ ԾՈՎՆ ԱՆՑՆԵԼԲ

Փարաւոնին իմաց տուին, որ ժողովուրդն արգէն հեռացել է: Թագաւորի և նրա ծառաների սիրաը փոխուեց—նրանք ասացին. «Ի՞նչու արձակեցինք իսրայէլացիներին մեր ծառայութիւնից»: Փարաւոնը վեր առաւ ժողովրդին, վեց հարիւր ընտիր պատերազմական կառք, հեծելազօր, ընկաւ իսրայէլի որդւոց ետևից և հասաւ նրանց Կարմիր ծովի մօտ, ուր բանակ էին ձգել:

Երբ իսրայէլացիները տեսան Եգիպտացիներին, խիստ

վախեցան, սկսեցին գանգատուել Աստուծուն և ասել  
Մովսէսին. «Միթէ Եգիպտոսում գերեզմաններ չկային,  
որ բերիր մեղ այստեղ՝ անապատում թաղելու»: Մովսէ-  
սը պատասխանեց. «Մի վախենաք, քաջալերուեցէք,  
դուք շուտով կտեսնէք, թէ Աստուած ձեղ այսօր ինչ-  
պէս է փրկելու—նա ինքը պէտք է պատերազմէ ձեր  
փոխարէն:

Աստուած ասաց Մովսէսին. «Յայտնիր իսրայէլացի-  
ներն, որ չուեն, իսկ դու բարձրացրու քո գաւազանը  
և ձգիր ձեռդ ծովի վրայ»: Երբ Մովսէսը ձեռը ձգեց,  
ջուրն իսկոյն պատառուեց՝ երկու կողմից պատի նման  
կանգ առաւ. հողմ փչեց. յատակը չորացրեց և իսրայէ-  
լացիները ցամաքի վրայով անվտանգ միւս ափին անցան:  
Եգիպտացիները կառքերով և երիվարներով հետեւցին  
նրանց: Փարաւոնն էլ նրանց հետն էր:

Աստուած ասաց Մովսէսին. «Ձգիր ձեռդ ծովի վը-  
րայ, որպէսզի ջուրը միանայ և թափուի եգիպտացինե-  
րի վրայ»: Մովսէսը ձգեց ձեռը և ծովը միացաւ: Եգիպ-  
տացիներն սկսեցին փախչել, իսկ ջուրը ծածկեց կառ-  
քերը, երիվարները և Փարաւոնի զօրքը—ոչ մէկն էլ  
կենդանի չմնաց, իսկ իսրայէլացիներն անվտանգ անցան  
միւս ափը և տեսան եգիպտացիներին ծովի ափում  
խեղդուած: Այսպէս օգնեց Աստուած Խորայէլի ժողո-  
վրդին և ազատեց եգիպտացիների ձեռից:

Ժողովուրդը վախենում էր Աստուածանից և հա-  
ւատում էր նրա ծառայ Մովսէսին: Մովսէսն և իսրայէլի  
ժողովուրդն սկսեցին Տիրոջ համար երդ երգել և ասել.  
«Օքնեցէք Աստուածուն, որովհետեւ նա փառաւոր գործ  
կատարեց—Փարաւոնի երիվարները և հեծեալները ծովը  
ձգեց, Տէրն իմ օգնականն է և փրկիչը»:

«Անօրէնք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պա-  
կասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»:

Անօրէնները յանկարծակի կործանուեցան, սատակեցան  
և կորան իրանց անօրէն գործերի համար:

«Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր է, զի յաւիտեան  
է ողորմութիւն նորա»:

Խոստովանեցէք, որ Աստուծու ողորմութիւնը քաղցր է և  
յաւիտենական:

### 36.

## ԻՄՐԱՅԷԼԱՅԻՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՏՈՎ

Մովսէսը շարունակեց ճանապարհը Կարմիր ծովից  
դէպի անապատ՝ երեք օր շարունակ: Վերջապէս հա-  
սաւ Մեռա, որտեղի ջուրը դառն էր—խմել չէին կա-  
րողանում: Ժողովուրդն սկսեց գանգատուել Մովսէսին  
և ասել. «Փ՞նչ պէտք է խմենք»: Մովսէսն աղօթեց  
Աստուծուն. Աստուած Մովսէսին մի փայտ ցոյց տու-  
աւ. փայտը ջուրը ձգեց և ջուրն իսկոյն քաղցրացաւ:

Այդտեղից իսրայէլացիները չուեցին և եկան Սին  
անապատը: Արդէն երկրորդ ամսուայ տասն և հինգն  
էր, որ Եգիպտոսից դուր էին եկել: Խորայէլի որդիքը  
կրկին անգամ սկսեցին գանգատուել Մովսէսին և Ա.Հարո-  
նին. «Երանի Աստուած մեղ Եգիպտոսում մահ տար.  
այնտեղ կաթօսաներով միս ունեինք և առատ հաց. դուք  
բերիք մեղ ալս անապատ տեղը սովամահ անելու»:

Աստուած ասաց Մովսէսին. «Ես երկնքից հաց կթափեմ  
ձեղ համար. ժողովուրդը թող ամեն օր դուրս գնայ և  
մի օրուայ պաշար ժողովէ, վեցերորդ օրը թող երկու  
անգամ աւելի ժողովէ: Մովսէսն և Ա.Հարոնը լայտ-  
նեցին ալս բանն իսրայէլացիներին և ասացին. «Երեկոյ-

Եան կիմանաք դուք, որ Աստուած է ձեզ հանել Եգիպտոսից, իսկ առաւօտը նրա փառքը կտեսնէք, մենք ովք ենք, որ մեզանից գանգատւում էք: Երեկոյեան միս կունենաք. իսկ առաւօտեան՝ առատ հաց»: Երեկոյեան դէմ եկան լորամարգիները և ծածկեցին ամբողջ բանակը, իսկ առաւօտեան գետինը պատած էր ցօղավ: Ցօղը հեռանում էր, գետնի վրայ մնում էր կլոր և սպիտակ եղեամի նման մի բան: Իսրայէլացիներն, երբ այս բանը տեսան, ասացին միմեանց. «Այս ի՞նչ բան է»: Մովսէսըն ասաց. «Աա Աստուծու ուղարկած հացն է»: Վեց օր ամեն ոք թո՛ղ այնքան հաւաքէ, որքան ուտել կարող է, իսկ վեցերորդ օրն երկու անգամ աւելի հաւաքէ, որովհետեւ շաբախ է, հանգստեան օր է՝ սուրբ օր է»: Իսրայէլացիներն այս հացի անունը մանանա գրին և առաւօտներն էին հաւաքում. գոյնը սպիտակ էր և մեղրահացի համ ունէր. երբ արեւ տաքանում էր, իսկոյն հալւում էր: Այսպէս նրանք միշտ մանանայ էին ուտում, քանի որ անապատումն էին:

Իսրայէլացիները յառաջ գնացին: Ժողովուրդը իսրամելու ջուր չունէր. սկսեցին նորից գանգատուել Մովսէսին և ասել. «Զուր տո՛ւր մեզ, միթէ մեզ և մեր անասուններին ծարաւից սպանելու համար դուրս բերիր Եգիպտոսից»: Մովսէսը յախտնեց Աստուծուն և ասաց. «Ի՞նչպէս վարուեմ ես այս ժողովրդի հետ, մի փոքր էլ որ մնայ, ինձ կարկոծ կանեն»: Աստուած ասաց. «Առ քո գաւազանը, որով ծովի ջուրը բաժանեցիր. ես քեզանից առաջ մի ժայռի մօտ կանգնած կլինեմ. դու գաւազանով ժայռին կխփես, ջուրն իսկոյն կբջիէ և ժողովուրդը կխմէ»: Մովսէսը հնազանդուեց Աստուծու հրամանին:

Սրանից յետոյ եկան ամաղէկացկները և պատերազմեցին իսրայէլացիների հետ: Մովսէսն ասաց Յեսուսին. «Քաջ մարգիկ ընտրիր, դուրս արի և պատերազմիր Ամաղէկացիների հետ»: Յեսուսն էլ այնպէս արաւ, ինչպէս Մովսէսն էր պատուիրել: Մովսէսն և Ահարոնը բարձրացան մի բլրի վրայ: Մովսէսը կարկառեց իւր ձեռները դէպի երկինք և աղօթում էր Աստուծուն: Իսրայէլը յաղթեց և Յեսուսն սրով հարուածեց Ամաղէկացիներին: Մովսէսն Աստուծու համար սեղան շինեց:

Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուրնոցա ի ժամու: Բանաս զձեռն քո եւ լցուցանես զնոսա քաղցրութեամբ կամօք քովք»:

Ամենքն էլ քո վրայ են դրած յոյսերը, դո՛ւ ես տալիս նրանց կերակուր իւր ժամանակին: Բաց ես անում քո ձեռներն եւ ամենին էլ բաւականացնումես քո կամքովը:

Աերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա. առ ամենեսեան, որ կարդան առ նա ճշմարտութեամբ»

«Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազումողորմ»:

## 37.

## ՅՈԹՈՐԻ ԲԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Մովսէսի աներ քուրմ Յոթորը երբ լսեց, որ Աստուած իսրայէլի ժողովրդին Եգիպտոսից դուրս է հանել, առաւ Սեփովը ին, որին Մովսէսը ճանապարհից յետ էր դարձրել, իւր երկու թուներին, գնաց անապատ և փեսային մարդ ուղարկեց, որ իւր մօտ գայ: Մովսէսն աներոջ գալն իմանալուն պէս՝ գնաց նրա առաջը. երկրպագութիւն տուաւ. համբուրեց և յետոյ վրանը տարաւ: Մովսէսը պատմեց այն ամենը, ինչ որ Տէրն ա-

ըԵլ էր փարաւոին և եգիպտացիներին. պատմեց նոյն-  
պէս ճանապարհին քաշած նեղութիւնները և թէ ինչ-  
պէս Աստուած ազատել էր նրան։ Յոթորը շատ ուրա-  
խացաւ իսրայէլի Աստուծու գործերի վրայ և ասաց.  
«Օրհնեալ լինի ձեզ ազատող Աստուածը, այժմ գիտեմ,  
որ նա բոլոր աստուածներից մեծն է»։

Հետևեալ առաւօտ՝ Մովսէսն սկսաւ ժողովրդի գան-  
գատները վճռել. բազմութիւնը խոնուած էր նրա շուր-  
ջը՝ տառաւոտից սկսած մինչև երեկոյ։ Յոթորն ասաց նը-  
րան. «Այդ լաւ բան չես անում—դու յոդնեցնում ես  
քեզ էլ, ժողովրդին էլ։ Պաշտօնդ ծանը է, միայնակ  
չես կարող դատել այդ բազմութեանը։ Լսիր ինձ, ես  
քեզ մի խորհուրդ կտամ, Աստուած ևս կօգնէ—դու  
եղիք միջնորդ Աստուծու և մարդկանց մէջ. նրանց հա-  
մար կանոններ և օրէնքներ սահմանիր և սովորցրու-  
ալն ճանապարհը, որով նրանք պէտք է գնան։ Ընտրիք  
քո ժողովրդի միջից արդարադատ, աստուածավախ, խո-  
նարհ մարդիկ ու նրանց ժողովրդի վրայ դատաւո՞ն նը-  
շանակիր—ոմանց հազարապետ, ոմանց հարիւրապետ.  
ոմանց լիսնապետ և ոմանց տասնապետ։ Եթէ մեծ  
գործ կապտահի, թո՛ղ քեզ դիմեն, իսկ փոքրերն իրանք  
վճռեն։ Ալսպէս քո աշխատանքը կթեթեանալ, նրանք  
էլ քեզ հետ ծանրութիւնը կտանեն—նրանք քո օգնա-  
կանները կլինին։

Մովսէսը լսեց Յոթորի խորհրդին։ Սրանից յետոյ  
աները գնաց իւր երկիրը։

Եւ մեծին խոնարհեցն զգլուխ քո։

Մեծին՝ պատառըին պէտք է յարգես։

38.

ՍինաՅի ՕրէնՍՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսից գուրս գնալու երկրորդ ամսում իսրա-  
յէլացիները հասան Սինա անտպատն և բանակ ձգեցին  
նոյն լերան հանդէպ։ Մովսէսը լեառը բարձրացաւ։ Աս-  
տուած ասաց նրան. «Խսրայէլի որդւոցն այսպէս կասես  
— դուք տեսաք, թէ ես եգիպտացիներին ինչ արի. ինչ-  
պէս ես ձեզ արծուի թևերի վրայ առած ինձ մօտ բե-  
րի. եթէ ինձ կլսէք և իմ ուխտը կպահէք, ընտրեալ  
ժողովուրդս կլինիք բոլոր ազգերի մէջ. դուք կլինիք  
ինձ համար քահանայական թագաւորութիւն և սուրբ  
ժողովուրդ»։ Մովսէսն իջաւ լեռնից և կանչեց նրանց։  
Բոլոր ժողովուրդն ի միասին պատասխանեց. «Աստու-  
ծու բոլոր պահանջները կկատարենք»։ Մովսէսը յայտ-  
նեց այս բանն Աստուծուն։ Աստուած ասաց նրան.  
«Գնա՞ ժողովրդի մօտ և պատուիրի՛ր, որ լուացուեն  
և մաքրուեն այսօրուանից սկսած և պատրաստի՛ր եր-  
րորդ օրուայ համար. ասա՞ որ մաքուր շորեր հագնեն։  
Լերան շուրջը ցանկ պատիր. ոչ ոք այնտեղ չբարձրա-  
նայ՝ տպա թէ ոչ՝ մահով կմեռնի»։

Վերջապէս հասաւ երրորդ օրը. Առաւօտեան վաղ՝  
լեառն սկսաւ որոտալ և կալծակել. թանձր ամպերը  
պատեցին սարի գլուխը և փողի ձախը լսելի կերպով  
հնչում էր—ամենքը զարհութեցան։ Մովսէսը ժողովր-  
դին բանակից գուրս հանեց և տարաւ լերան ստորոտք։  
Սինա լեառն ամբողջապէս ծխի մէջ կորած էր. կրակի  
բոցեր էին բարձրանում միջից և շարժւում էր—փո-  
ղի ձախը հետզհետէ սաստկանում էր։

Այդ ժամանակ Աստուած սկսաւ իսուել ժողովրդի հետ և ասել. 1. «Ես եմ քո Տէր Աստուածը. Ես քեզ ազատեցի Եգիպտոսից, բացի ինձանից ուրիշ Աստուած չունենաս: 2. Կուռք չշինես՝ ոչ երկնքի և ոչ երկրի՝ ստեղծուածների նման ու երկրպագութիւն չտաս նրանց, որովհետեւ ես եմ քո Աստուածը: Ես նախանձոտ Աստուած եմ — ով ինձ ատէ, վրէժինդիր կլինիմ մինչև երրորդ, չորրորդ սերունդը, իսկ ով ինձ սիրէ և իմ հըրամանը կատարէ՝ նրան չեմ մոռանայ մինչև հազարերորդ սերունդը: 3. Քո Աստուծու անունը իզուր բաների վրայ մի լիշիր. Նրա անունով սուս մի երդուիր: 4. Շաբաթ օրը սուրբ պահիր — վեց օր աշխատիր, իսկ եօթներորդ օրը հանգիստ եղիր, Աստուծուն նուիրիր: 5. Պատուիր քո հօրն ու մօրը, որ երկար կեանք ունենաս: 6. Մի սպանաներ: 7. Մի շնար: 8. Մի գողանար: 9. Քո ընկերոջ մասին սուտ վկայութիւն մի տար: 10. Մի ցանկանար քո ընկերոջ տանը, արտին, եզանը, իշխն և այն ամենին, ինչ որ նրանն է:

Ժողովուրդը լսում էր որոտի և փողի ձայնը, տեսնում էր կայծակները և լերան ծխալը: Երկիւղից զարհուրած ժողովուրդը հեռացաւ և այնտեղից էր խօսում Մովսէսի հետ և ասում. «Դու խօսիր մեզ հետ Աստուծու փոխարէն. մենք քեզ կլանեք. մեզ ուղղակի Աստուծու հետ խօսեցնել մի տուր, ապա թէ ոչ ամենքս էլ կմեռնենք»: Մովսէսն ասաց. «Մի վախենաք, Աստուած կամենում էր ձեզ փորձել. Նրա երկիւղն աչքից չհեռացնէք. յանցանք մի գործէք»: Ժողովուրդը հեռացաւ, իսկ Մովսէս լեռը բարձրացաւ: Աստուած խօսում էր Մովսէսի հետ: Մովսէսը լեռնից վայր իջաւ և յայտնեց ժողովրդին Աստուծու բոլոր պատուէրները: Ամենքը

միաբերան սկսեցին աղաղակել և ասել. «Աստուծու բոլոր պատուիրանները կըկատարենք»:

Մովսէսը դարձեալ բարձրացաւ լեաոր և քառասուն օր այնտեղ մնաց: Երբ Աստուած իւր խօսակցութիւնը վերջացրեց Մովսէսի հետ Սինա լերան վրայ, երկու քարէ տախտակներ տուաւ նրան, որի վրայ ինքն էր գրել պատուիրանները:

«Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ»:

«Քանզի այսէ սէրն Աստուծոյ, զի զպատուիրանս նորապահեսցուք. եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք».

### 39.

#### ՈՍԿԵ ՈՐԹԸ

Երբ ժողովուրդը տեսաւ, որ Մովսէսն ալլ ևս չվերադաձաւ լեռնից, ժողովեցան Ահարոնի մօտ և ասացին. «Եինիր մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն, Մովսէսը չգիտենք ինչ եղաւ»: Ահարոնը պատասխանեց նրանց. «Ինքէք ինձ ձեր կանանց և աղջրկանց ոսկէ գնտերը»: Այն ժամանակ իւրաքան իւրը հանեց իւր ականջի ոսկէ օղն և նրա մօտ բերաւ. նա էլ վեր առաւ և մի ոսկէ որթ ձուլեց նրանից: Ոսկէ որթ ձուլելու միտք յայտնողները երբ տեսան, որ իրանց գործը լաջողեց, աղաղակեցին ժողովրդին և ասացին. «Ահա ձեր Աստուածը, որ ձեզ Եգիպտոսից հանեց»: Ահարոնը սեղան կանգնեց, քարոզ կարդաց և ասաց. «Վաղը Աստուծու տօնն է»: Առաւօտեան վաղ՝ ժողովուրդը վեր կացաւ և ողջակէզ արաւ, որից լետոյ սկսեցին ուտել, խմել և պարել որթի չորս կողմը:

Այդ ժամանակ Մովսէսն իջաւ լեռնից՝ ձեռին բըռնած վկայութեան երկու տախտակները։ Երբ բանակին մօտեցաւ, տեսաւ ոսկէ որթն և պարաւորներին, բարկացաւ, տախտակները ձեռից վայր ձգեց լերան ստորոտում և կոտրատեց։ Յետոյ վերառաւ նրանց շինած ոոկէ որթը. կրակով արեց. խարտոյեց. փոշի դարձեց. ջրի մէջ ցանեց և խմացրեց իսրայէլացիներին։ Աղա Ահարոնին դարձաւ և ասաց. «Այս ժողովուրդը քեզ ի՞նչ արեց, որ սրան այսպիսի յանցանքի մէջ ձգեցիր»։ Ահարոնը պատասխանեց. «Մի բարկանար, քեզ ևս շատ լաւ յայտնի է սրանց չարութիւնը և յանդգնութիւն»։ Երբ Մովսէսը տեսաւ, որ ժողովուրդը յանցանք է գործել, մօտեցաւ բանակի դրանն և ասաց. «Աստուծուն հաւատարիմ մնացողները թող ինձ մօտ գան»։ Ղեկի բոլոր որդիքը նրա մօտ հաւաքուեցան։ Մովսէսն ասաց. «Մերկացրէք ձեր որերը. անցէք բանակի մի ծալրից միւսը. յետ դարձէք դէպի միւս զուռն և սպանեցէք Աստուծու դէմ բոլոր մեղանչողներին»։ Ղեկի որդիքը կատարեցին Մովսէսի հրամանը։ Այդ օրը ժողովրդից երեք հազար մարդ սպանուեց։

Առաւոտը Մովսէսն ասաց. «Դուք մեծ յանցանք էք գործել. ես լեառը կբարձրանամ Աստուծու մօտ և կինդրեմ, որ ձեր յանցանքը ներէ»։ Մովսէսն ասաց Աստուծուն. «Ժողովուրդը մեծ յանցանք է գործել. ներիր, իսկ եթէ չես ների, այն ժամանակ իմ անունն էլ քո որդեգրութեան ցուցակից ջնջիք»։ Աստուծած ասաց Մովսէսին. «Յանցաւորների անունները կջնջեմ, իսկ դու գնա և առաջնորդիք նրանց»։ Աստուծած ասաց Մովսէսին. «Երկու քարէ տախտակներ բեր, որ առաջին տախտակների պատգամները նորից գրեմ»։ Մովսէսը

կատարեց Աստուծու պատուերը։ Աստուծած գըեց տախտակների վրայ ուխտի խօսքերը և Մովսէսը բերաւ խրայէլի որդւոց համար։

«Սիրեսցես զծէր Աստուծած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ. եւ յամենայն մտաց քոց. այս է մեծն եւ առաջին պատուիրան»։

Սիրիք քո տէր Աստուծուն ամբողջ սրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ մտքովդ, այս է առաջին եւ մեծ պատուիրանը»։

## 40.

## ՀՐՏԵՄՆԵՐ

Իսրայէլացիները մի ամբողջ տարի բանակ ձգեցին Սինա լերան մօտ։ Դրանից յետոյ չուեցին դէպի Փառան անապատը։ Այնտեղ Աստուծած խօսեց Մովսէսի հետ և ասաց. «Իւրաքանչիւր ցեղից մի-մի մարդ ուղարկիր Քանանացւոց աշխարհը, որ լրտեսեն»։ Մովսէսն էլ այնպէս արաւ—տասներկու մարդ ընտրեց ու Քանան ուղարկեց. դրանց մէջն էր և Յեսուն։ Մովսէսը պատուիրեց նրանց և ասաց. «Դնացէք և տեսէք թէ ինչպիսի երկիր է Քանանը. ովքեր են նրա բնակիչները՝ զօրեղ, թէ թոյլ մարդիկ են. բազմամամարդ է երկիրը, թէ սակաւամարդ. հաստատուն և ամուր քաղաքներում են ապրում, թէ վրանների տակ. արդեօք երկիրը պտղաւետ է՝ թէ ոչ. մի եղէք, վերադառնալիս երկրի պտուղներից հետներդ բերէք»։

Սրանք գնացին և լրտեսեցին երկիրը՝ Սին անպատից մինչև Ռոռը (Սիդոնի մօտ)։ Այնտեղից դարձան Քերոն և հասան Ողկուզի ձորը, ուր մի հատ որթկարեցին մի հատ ողկուզով և երկու մարդիկ լծակով

Հետները բերին։ Քառասուն օրից յետոյ վերադարձան խրախիլի որդուց մօտ և պատմեցին նրանց, թէ ինչպեսի երկիր է և ցոյց տուին հետները բերած պտուղները՝ Լրտեսներն ասում էին. «Մենք գնացինք այն երկիրը, ուր մեզը և կաթն է բղխում, ահա այս էլ նրա պտուղն է. բնակիչները զօրեղ մարդիկ են. քաղաքներըն ամուր և մեծ»։ Ժողովուրդն սկսեց ձայն բարձրացնել և տրտնջալ։ Յեսուն և Քաղէբն ասացին։ «Դնանք և Քանանը նուաճենք», իսկ միւս տասը լրտեսները հակառակում էին. «Մենք շենք կարող նրանց դէմ դուրս գալ—նրանք մեզնից շատ զօրեղ են»։ Այս խօսքերը մեծ աղմուկ հանեցին իսրայէլի որդուց մէջ. նրանք շարունակեցին. «Քանանում այնպիսի հսկայ մարդիկ տեսանք, որոց առաջ մենք մորեխ էինք երևում»։

Ամբողջ ժողովուրդը ոտքի կանգնեց, սկսաւ աղաղակել և լաց լինել. կրկին տրտնջացին Ահարոնից, Մովսէսից և ասացին. «Երանել Եգիպտոսում կամ անապատում մեռած լինէինք»։ Եւ մէկը միւսին ասում էր. «Ընտրենք առաջնորդներ և վերադառնանք Եգիպտոս»։ Մովսէսն և Ահարոնը երեսի վրայ ընկան ժողովի առաջ, իսկ Յեսուն և Քաղէպը պատօռեցին իրանց շորերն և ասացին ժողովականներին. «Մեր լրտեսած երկիրը շատ գեղեցիկ է, եթէ Աստուած գժայ մեզ, կարող է Քանան հասցնել։ Մի՛ հեռացէք Աստուածանից և մի՛ վախենաք այդ երկրի մարդկանցից. մենք նրանց հացի պէս կուտենք. Աստուած մեզ հետ է»։ Ժողովուրդը քիչ մնաց որ քարկոծէր երկուսին էլ։

Այս բանից յետոյ Աստուածու փառքը երևեցաւ ժողովրդի առաջ ամպի մէջ՝ վկայութեան խորանի վրայ Աստուած ասաց Մովսէսին. «Մինչև Երբ պէտք է այս

ժողովուրդն ինձ բարկացնէ. մինչև Երբ չպիտի նա ինձ և իմ հրաշքներին հաւատայ. ես կջնջեմ դրանց անունը երկրիս երեսից. նրանցից ոչ մինը չպիտի տեսնի այն երկիրը, որ ես նրանց հայրերին եմ խոստացել. նրանց ասկորները պիտի փտեն անապատում. քսան տարեկանից բարձրը, որոնք իմ գէմ տրտունջ բարձրացըրին, չեմ մտնի Քանան. ձեր որդւոցը միայն այնտեղ կհասցնեմ, իսկ դուք քառասուն տարի անապատում հովիւներ կը մինք, որ զգաք, թէ ինչ ասել է առանց Աստուածու օգնութեան ապրել։ Առաւոտեան վերադարձէք անապատ, որ տանումէ դէպի Կարմիր ծովը»։ Մովսէսն այս բոլորը յալտնեց իսրայէլի որդուց։ Ժողովուրդը սգում և ողբում էր։ Նրանք վերստին դարձան անապատ։

«Համբարձի զաշս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։ Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս եւ զերկիր»։

Ես իմ աշքերը դէպի լեսները բարձրացըրի, որտեղից իմ օգնութիւնը կգայ. Իմ օգնութիւնը Աստուածանից կգայ, որ Երկինքն ու երկիրն ստեղծեց։

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է՝ ի հնագանդութեան կայցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ Աստուածոյ։ Այսուհետեւ որ հակառակ կայ իշխանութեան, Աստուածոյ հրամանին հակառակ կայ»։

Ամենայն ոք թողի հնագանդ լինի բարձր իշխանութեանը, որովհետեւ չկայ իշխանութիւն, որ Աստուածանից չինի. Ուրեմն իշխանութեան հակառակողը Աստուածու հրամանին է հակառակում։

41.

ՄՈՎՍԵՍԻ ՄԱՀԸ

Երբ քառասուն տարին անցաւ, իսրայէլի որդիքը  
նորից չուեցին դէպի խոստացեալ երկրի սահմանները—  
դէպի Յորդանան։ Այնուեղ Աստուած խօսեց Մովսէսի  
հետ և ասաց. «Բարձրացիր Նաբաւ լեառը և տես Քա-  
նանացւոց երկիրը, որ ես իսրայէլի որդւոցը պիտի տամ,  
իսկ տեսնելուց յետոյ, «յաւելցիս առ ժողովուրդ քո և  
դու։» Մովսէսը պատասխանեց. «Տէր, ժողովրդի վրայ  
առաջնորդ նշանակիր, որ զեկավարէ նրանց, մի գուցէ  
անտէր մնայ, ինչպէս մի հօտ առանց հովուի։» Աս-  
տուած պատասխանեց. «Վեր առ նաւեայի որդի Յեսու-  
ին, որի մէջ Աստուծու ոգի կայ. տար ժողովրդի մօտ  
և կանգնեցրու Եղիազար քահանայի առաջ. դիր քո ձե-  
ռը նրա գլխին. տուր նրան քո փառքը և զօրութիւնը,  
որպէսզի իսրայէլի որդիքը նրան լսեն։»

Մովսէսը կանչեց ամենին և կատարեց այն բոլո-  
րը, ինչ Աստուած նրան հրամայել էր։ Նա ասաց. «Ես  
արդէն հարիւր քսան տարեկան ծերունի եմ. ձեզ այլ-  
ևս առաջնորդել և զեկավարել չեմ կարող, սրա հա-  
մար Աստուած ասաց ինձ, որ ես Յորդանանը չպիտի  
անցնեմ։ Միկիթարուեցէք և մի վախենաք. Աստուած  
ինքը ձեզ կառաջնորդէ. նա ձեզ չի մոռանայ. Յեսու  
նաւեան ինքը կանցնի ձեզ հետ Յորդանանը։

Մովսէսը դարձաւ Յեսուին և ժողովրդեան ներ-  
կայութեամբ ասաց. «Քաջացիր և զօրացիր, դու պէտ-  
քէ ժողովրդին այն երկիրը տանես, որ Աստուած խոս-  
տացաւ իսրայէլի որդւոց. դու պէտքէ բաժանես երկիրը  
նրանց մէջ»։

Այնուհետև Մովսէսը լիշել տուաւ ժողովրդին այն  
բոլորը, ինչ որ Աստուած արել էր նրանց հայրերին—  
նա ասաց. «Լսիր, իսրայէլ, մեր Տէրը՝ մեր Աստուածը  
մի է. դու պէտքէ քո Տիրոջ՝ քո Աստուծուն ամբողջ  
սրտովդ, ամբողջ կարողութիւնովդ սիրես. իմ այսօր-  
ուայ խօսածները սրտումդ պահես և քո որդւոց պատ-  
մես թէ տանը, թէ ճանապարհին, թէ արթնութեան  
և թէ քնի ժամանակ։ Եթէ դու քո Տիրոջ՝ քո Աստու-  
ծու խօսքին կլսես, նրա օրհնութիւնը քեզ վրայ կլինի,  
իսկ եթէ նրա խօսքին չես լսի, նրա բարկսութիւնը քեզ  
վրայ կդայ. տես, ժողովներդ, ես այսօր քո առաջ կեանք  
և մահ, օրհնութիւն և նզովք դրի, որպէսզի դու  
կեանքն ընտրես»։

Մովսէսն օրհնեց ժողովրդին այն օրհնութիւնով,  
որ Աստուած էր նրան ուսուցել—նա ասաց. «Օրհնես-  
ցէ զքեզ Տէր եւ պահեսցէ զքեզ, երեւեցուսցէ զերեսս  
իւր ՚ի քեզ, եւ ողորմեսցի քեզ, ամբարձէ Տէր զերե-  
սըս իւր ՚ի քեզ եւ տացէ քեզ խաղաղութիւն»։

Սրանից յետոյ Մովսէսը նաբաւ լեառը բարձրացաւ։  
Աստուած ցոյց տուաւ նրան Քանանու ամբողջ երկիրը՝  
մինչև Դան, մինչև վերջին ծովը և Երիքովի և Յակայ-  
քը, որ հարուստ է տրմաւենիներով։ Աստուած ասաց  
նրան. «Ահա այս է այն երկիրը, որ ես խոստացել եմ  
Աբրահամին, Իսահակին և Յակովին. այս բոլորը քո  
աչքովը տեսար, բայց դու այնտեղ չես մտնի»։ Այսպէս  
Աստուծու ծառայ Մովսէսը մեռաւ Մովաբացւոց երկ-  
րում. նրա զերեզմանի տեղը ոչ ոք չգիտէ մինչև այժ-  
մըս էլ։ Իսրայէլի որդիքը Մովսէսի վրայ երեսուն օր  
սուգ արին։

«Եկը հաւատարիմ մինչեւ ի մահ եւ տաց քեզ զպսակն կենաց»:

Հաւատարիմեղլը մինչև ի մահ, կեանքի պսակը քեզ կտամ: Եւ իմաստունք ծագեսցին իբրեւ զուսալութիւն ի հաստատութեան, եւ բազումքյարդարոց իբրեւ զաստեղս յաւիտեան»:

Իմաստունները լուսի պէս պէտքէ փայլեն երկնակամարի վրայ, իսկ արդարներից շատերը՝ աստղի նման յաւիտեանս յաւիտենից:

«Երանի մեռելոց, որք ի տէր ննջեցին, քանզի յանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չողան զին նոցա»:

### Բ. ՅԵՍՈՒ

#### 42.

### ՅԵՍՈՒՆ ՆՈՒԱՃՈՒՄ Է ՔԱՆԱՆՔ

Ա. Մովսէսի մահուանից յետով Աստուած ասաց Յեսուին. «Իմ ծառայ Մովսէսը մեռաւ. վեր կաց, անցիր Յորդանանը ժողովրդի հետ և գնա այն երկիրը, որ ես խոստացել եմ իսրայէլի որդւոց: Ոչ ոք չի համարձակուի հակառակել՝ քանի որ դու կենդանի ես. ինչպէս որ Մովսէսի հետն եմ եղել, այնպէս էլ քեզ հետ կը լինեմ: Զօրացիր և քաջացիր. օրինաց գիրքը քո բերանից չհեռանայ. գիշեր ու ցերեկ նրա վրալ մտածիր և կատարիր նրա միջի գրուածները»:

Յեսուն պատուիրեց ժողովրդի առաջաւորներին և ասաց. «Մտէք բանակը. հրաման տուէք ժողովրդին և ասացէք, որ պաշար պատրաստեն, երեք օրից յետոյ պէտքէ անցնենք Յորդանանը: Յեսուն ծածուկ երկու լրտեսներ ուղարկեց Երիքովը լրտեսելու: Նրանք վերադարձան և պատմեցին, որ Աստուած ամբողջ երկիրը և Երիքովը մեր ձեռը մատնեց:

Սրանից յետոյ՝ առաւօտը վաղ վերկացաւ Յեսուն և ժողովրդի հետ միասին դիմեց Յորդանանի ափը: Այստեղ ասաց քահանաներին. «Առէք տապանակ ուխտին և անցէք ժողովրդի առաջովք: Քահանաներն առաջ անցան, իսկ ժողովուրդը հետեւումէր նրանց Յորդանանի միջով և եկան մինչև Երիքով:

Բ. Երիքովի դռները կողպած էին—քաղաքացիները ներս ու դուրս չէին անում: Աստուած ասաց Յեսուին. «Ահա Երիքովը քո ձեռն եմ տալիս. պատուիրէր զինուորներին, որ վեց օր շարունակ՝ օրը մի անգամ քաղաքի շուրջը պտտեն: Եօթներորդ օրը հրամայիր քահանաներին փողերն առնեն և տապանակի առջևից գընան. այդ օրը եօթն անգամ պտտեցէք քաղաքի շուրջը. քահանաները թող փողը փչեն, իսկ դուք փողի ձախնը լսելուն պէս՝ աղաղակ բարձրացըրէք—այս աղաղակի ժամանակ քաղաքի պարիսպները կկործանուեն»:

Յեսուն այլպէս էլ արաւ, ինչպէս Աստուած հրամայել էր: Եօթներորդ օրը, երբ քահանաները եօթներորդ անգամ փողը փշեցին, ժողովուրդն սկսեց աղաղակել—քաղաքի պարիսպները կործանուեցան. ժողովուրդը ներս մտաւ. աւերեց և կոտորեց բոլորը՝ թէ մարդ և թէ կենդանի, իսկ մնացածը կրակ տուին, այրեցին:

Գ. Գաբաւոնի բնակիցները, երբ լսեցին որ Յեսուն Երիքովի հետ այսպէս խիստ է վարուել, խորամանկութիւն գործ դրին—զեսպաններ ուղարկեցին իսրայէլացիների մօտ. հին զգեստներ հագան. վեր առան պատուած և կարկատած գինու տկեր, մաշուած կօշիկներ, չորացած և բորբոսնած հաց և եկան բանակ Յեսուն մօտ ու ասացին. «Մենք հեռու տեղից ենք գալիս. ամենայն բան, նոր էր, երբ տանից դուրս եկանք, բայց

Երկար ճանապարհորդութեան ժամանակ ամեն ինչ հը-  
նացաւ: Այժմ մեզ հետ դաշը կապի՞ր»:

Յեսուն դաշը կապեց և խոստացաւ նրանց զինա-  
սել. ժողովրդեան իշխաններն ևս երդում կերան և նոյ-  
նը խոստացան: Իսրայէլացիք երեք օրից յետոյ գիմեցին  
դէպի Գաբրաւոն քաղաքը. այստեղ իմացաւ, որ սրանք  
իւր հարեանն են եղել: Յեսուն կանչեց քաղաքացինե-  
րին և ասաց. «Ի՞նչու իսրաբեցիք ինձ»: Նրանք պատաս-  
խանեցին. «Երկիւղից, մեր գլուխն ազատելու համար.  
այժմ մեր կեանքը քո ձեռին է, արա՛, ինչ կամենում  
ես»: Յեսուն ինալեց նրանց կեանքը՝ կապած դաշի և  
տուած խոստման համար, բայց բոլորին էլ փայտ կը-  
րող և ջուր բերող դարձեց իսրայէլացիների համար:

Պ. Երուսաղէմի թագաւորը, երբ այս բանը լսեց՝  
շատ վախեց. դաշը կապեց ամովլիհացի չորս թագաւոր-  
ների հետ, որոնք չուեցին և բանակ ձգեցին Գաբրաւո-  
նի շուրջը: Գաբրաւոնի բնակիչները մարդ ուղարկեցին  
Գաղգաղա. իմաց տուին Յեսուին ու ասացին. «Նտապով  
արի և աղաաիր մեզ ամովլիհացիներից»: Յեսուն գիշերով ա-  
ճաապարեց այն կողմը: Աստուած ասաց Յեսուին. «Մի վա-  
խենար, ես նրանց քո ձեռը կմատնեմ»: Այսպէս Յեսուն  
յանկարծ թշնամու վրայ եկաւ և Գաբրաւոնի մօտ  
մեծ պատերազմ տեղի ունեցաւ: Աստուած ամովլիհացի-  
ներին սարսափեցրեց—մեծ կարկուտ թափեց նրանց  
գլխին և ցիր ու ցան արաւ: Իսրայէլացիները հետևե-  
ցին նրանց: Յեսուն աղօթեց Աստուծուն և ասումէր.  
«Կանգնիք, արև, Գաբրաւոնի գիմացը»: Արեւ կանգ ա-  
ռաւ երկնակամարի վրայ և մայր չմտաւ՝ մինչև Յեսուն  
թշնամուն ոչնչացրեց:

Այսպէս Աստուած իսրայէլի համար պատերազմեց:  
Յեսուն գարձաւ Գաղգաղա:

Այստեղ Յեսուին իմաց տուին, որ հինգ թագաւոր-  
ներ են գտել մի այրի մէջ թաք կացած: Յեսուն հրա-  
մայեց գուրս բերել նրանց. գլխատել տուաւ և փայտից  
կախեց: Երեկոյեան վեր առան նրանց գիակները. ձգե-  
ցին նոյն այրի մէջ և մի մեծ քար դրին բերանին:

Ե. Յեսուն երեսուն և մէկ թագաւորի լաղթեց.  
Նրանց երկիրները նուածեց ու տուաւ իսրայէլի որդւոց  
որպէս ժառանգութիւն՝ իւրաքանչիւր ցեղին իւր բա-  
ժինը լատկացնելով: Ուուբէնի, Դատի և Մանասէի ցե-  
ղի մի մասն ստացան Յորդանանի միւս կողմի (յայնկոյս  
Յորդանանու) երկիրները: Ղեիի որդիքը ժառանգու-  
թիւն չստացան, այլ դրա փոխարէն քառասուն և ութն  
քաղաք՝ բոլոր ցեղերի երկիրներում: Յուդայի սերունդն  
ստացաւ Մեռեալ ծովի և փղշտացւոց երկի միջի եղած  
տարածութիւնը: Իսրայէլացիներն որպէս ժառանգու-  
թիւն՝ տուին Յեսուին Թամնաթսարա քաղաքը, որ գտան-  
ւումէ Եփրեմի լեռների մէջ: Տապանակ ուխտին բերին  
Սելով քաղաքը և դրին վկայութեան խորանի մէջ:

Այսպէս ժողովուրդը բնակուեց Քանանում: Այն  
բարիքները, որ Աստուած խոստացել էր նրանց, բոլորն  
էլ ստացան: Ամենայն բան կատարուեց:

«Սա է իմ Աստուած եւ փառաւոր արարից զսա. Աստուած  
հօր իմոյ, եւ բարձր արարից զսա»:

Սա է իմ Աստուածը և ես կփառաւորեմ նրան, սա իմ  
հօր Աստուածն է և ես կբարձրացնեմ նրան:

43.

ՅԵՍՈՒԻ ՄԱՀԸ

Երբ Աստուած իսրայէլացիներին հանգստացը եց թշնամիների յարձակումներից, Յեսուն կանչեց ժողովրդի ծերերին և իշխաներին ու ասաց նրանց. «Ես ծերացել եմ. իմ օրերն անցել են. դուք տեսաք, թէ Աստուած ինչ արաւ հեթանոսներին. ինչպէս պատերազմեց նրանց հետ ձեր փոխարէն. ձեր մինը նրանց հազարին հալածեց. զգոյշ եղէք այսուհետեւ և ձեր Աստուծուն սրտանց սիրեցէ՞ք, կատարեցէ՞ք Մովսէսի բոլոր օրէնքները. հաւատարմութեամբ ծառայեցէք նրան. եթէ չէք կամենում ծառայել, այսօրուանից ընտրեցէ՞ք ձեզ համար մի այլ Աստուած, իսկ ես և իմ տունը նոյն Աստուծուն կծառայենք»:

Ժողովուրդը պատասխանեց. «Աստուած մի՛ արասցէ. մենք ևս նոյն Աստուծուն կծառայենք, որովհետեւ նա է մեր Աստուածը»: Այն ժամանակ Յեսուն դաշը կապեց ժողովրդի հետ և մի մեծ քար կանգնեցրեց, որպէս վկայ այս ուխտի: Յեսուն մեռաւ հարիւր տասն տարեկան հասակում. նրան թաղեցին Եփրեմի լեռների մէջ: Յովսէփի ոսկորները, որ իսրայէլի որդիքը իրանց հետն էին բերել, թաղեցին Սիւքէմ քաղաքում:

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց»:

Գ. ԴԱՏԱԲՈՐՆԵՐ

44.

ԳԵՂԻՈՆԸ ՈՐՊԵՍ ԻՄՐԱՅԷԼԻ ԴԱՏԱԿՈՐ

Ա. Յեսուն մեռաւ. մեռել էին և նրա ժամանակակից մարդիկը. սրանցից յետոյ մի նոր սերունդ յառաջ եկաւ: Խորայէլի որդիքն սկսեցին ամուսնալ հեթանոս աղջկանց հետ և իրանց աղջիկներն էլ նրանց կնութեան տալ: Կրկին մոռացան ճշմարիտ Աստուծուն և սկսեցին կուռքեր պաշտել: Աստուած մատնեց նրանց եօթը տարի մադիտացաւոց ձեռը: Ինչ որ իսրայէլացիները ցանում էին, հնձի ժամանակ գալիս էին մադիտամացիները, յափշտակում էին և ոչնչացնում էին, այնպէս որ իրանց երկրում ոչ հաց էր մնում և ոչ կենդանին: Խորայէլացիները լիշեցին Աստուծուն և օգնութիւն խնդրեցին նրանից:

Աստուած երեաց Գեղէոն անունով մէկին, որ Մանասէի ցեղիցն էր և ասաց. «Աստուած քեզ հետ է, ով անյազթելի քաջ, գնա, ազատիր իսրայէլի որդւոց մադիտամացիների ձեռից»: Գեղէոնը պատասխանեց. «Ի՞նչով կարող եմ ես ազատել իսրայէլացիներին, Մանասէի ցեղի մէջ շատ քիչ բարեկամներ ունիմ, որոնք ինձ կարող են օգնել. բացի դրանից իմ հօր տան կրտսեր անդամներից մէկն եմ»: Աստուած ասաց նրան. «Ես քեզ հետ կլինեմ. դու մադիտամացիներին կյաղթես. կործանիր Բահազի սեղանը, որ քո հօրն է պատկանում. կոտորի՛ր նրա շուրջը գտանուող անտառը և Աստուծու համար սեղան շինի՛ր. առ մէկ ողջակէզ և զոհի՛ր նոյն անտառի փայտով»:

Գեղէոնը հետն առաւ իւր ծառաներից տասն հոգի և գիշերով կատարեց Աստուծու հրամանը: Առաւոտը՝ երբ քաղաքի բնակիչները զարթեցին, տեսան որ Բահաղի սեղանը կործանուել է, իսկ անտառը կտրտուած և մի ողջակէզ դրած Եհովայի սեղանի առաջ: Ակսեցին միմեանց նալել և ասել: «Ո՞վ է այս բանն արել»: Ամենքը լուզուած որոնում էին կործանողին և ասում: «Անշուշտ Յովասի որդի Գեղէոնն արած կլինի այս»:

Քաղաքացիները Յովասի մօտ եկան և ասացին: «Դուքս բեր քո որդուն. նա պէտք է մեռնի, որովհետեւ Բահաղի սեղանը կործանել է»: Իսկ Յովասն ասաց. «Դուք կամենում էք Բահաղի փոխարէն դատել, եթէ նա ասուուած է, թո՞ղ ինքն իրեն պաշտպանէ և վրէժինդիր լինի իւր սեղանը կործանողից»:

Փ. Մաղիամացիները դաշտավայրի վրայ բանակ էին ձգել: Գեղէոնը հրամայեց եղջիւրները փչել. գեսպաններ ուղարկեց Մանասէի և իսրալէլի միւս ցեղերին, որ իւր մօտ ժողովուեն: Անթիւ զէնք կրող մարդիկ հաւաքուցան Գեղէոնի մօտ. նա առաջնորդեց նրանց զէպի այն աղքիւրը, որի հիւսիսային կողմում բանակ էին ձգել Մաղիամացիները: Աստուած ասաց Գեղէոնին. «Քո հետ եղած ժողովուրդը շատ շատ է. թերեւս իսրայէլը պարծենալ և ասէ, ի՞մ բազուկն ազատեց ինձ: Խօսի՞ր ժողովրդի հետ և լայտնի՛ր, որ երկյուսները հեռանան»: Քսան երկու հազար հոգի լետ դարձան, մնաց տասն հազար միալն: Աստուած կրկին անգամ ասաց Գեղէոնին. «Թարձեալ շատ է զօրքդ. երեք հարիւր մարդ բաւական է, մնացածն արձակիր»: Գեղէոնը կատարեց Աստուծու հրամանը: Մաղիամացիների բանակը հովտի մէջն էր, իսկ իսրայէլացիները բարձրումն էին:

Կէս գիշերին Գեղէոնն ասաց իւր երեք հարիւրին. «Վեր կացէ՛ք. Աստուած մաղիամացւոց բանակը ձեր ձեռն է մատնելու»: Երեք հարիւր հոգին երեք մասնի բաժանեց, իւրաքանչիւրին մի եղջիւրէ փող և մի հատ սափոր տուաւ՝ մէջը վառած և ասաց. «Ինձ նայեցէ՛ք, ինչ ես կանեմ, նոյնն էլ դուք արէ՛ք: Երբ ես փողը կփչեմ, դուք էլ փչեցէք և ամեքդ միաբերան աղաղակեցէք, ահա Աստուծու և Գեղէոնի սուրբ»:

Գեղէոնը գիշերով իւր հարիւր մարդով մաղիամացիների բանակը մտաւ և հրամայեց փողերը փչել ու սափորները կոտրատել: Երեք գնդերն էլ սկսեցին փողերը փչել և սափորները փշրտել. ջահերը ձախ ձեռին բռնած՝ փողերն աջ՝ սկսեցին աղաղակել. «Ահա Աստուծու և Գեղէոնի սուրբ»: Մաղիամացիների զօրքը զարհուրած սկսեց աղաղակ բարձրացնել և փախչել. իսրայէլացիները հետեւեցին նրանց և կոտորեցին:

Այս բանից յետոյ իսրայէլացիներից ոմանք ասացին Գեղէոնին. «Մեզ վրայ իշխան եղի՛ր դու, քո որդին և քո որդու որդին»: Գեղէոնը պատասխանեց. «Ոչ ես և ոչ իմ որդին, այլ Աստուած է ձեր իշխանը»: Գեղէոնը դարձաւ դատաւոր: Քառասուն տարի շարունակ երկիրը նրա կենդանութեան ժամանակ խաղաղ էր:

Զի ամենայն կուռք հեթանոսաց սնութիք են. այլ Տէր Աստուած մեր ճշմարիտ»:

Հեթանոսների բոլոր աստուածները սուտ բաներ են, մեր աէր Աստուածը միայն ճշմարիտ է:

«Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն, օգնական ի վերայ նեղութեանց, որ գտին զմեզ յոյժ»:

Աստուած է մեր ապաէնը և զօրութիւնը. նեղութիւնների մէջ նա մեզ շատ օգնեց:

45.

## ՍԵՄՓՈՂՆ

Ա. Իսրայէլացիները նորից հեռացան Աստուածանից և սկսեցին Բահաղին պաշտօն մատուցանել, այս պատճառով էլ Աստուած մատնեց նրանց փղտացիների ձեռը քառասուն տարի շարունակ: Դրանից յետոյ Աստուած Սամփսոն անունով մէկին դատաւոր ընտրեց: Սա Թամնաթա գնաց, որպէսզի փղտացիների աղջկանցից իրան համար մի կին ընտրէ: Երբ նրանց այգեստաններին հասաւ, մի երիտասարդ առիւծ մռնչալով նրա առաջը գուրս եկաւ: Սամփսոնն այս գազանի բերանը ճեղքեց՝ կարծես թէ ուլ լինէր: Մի ուրիշ անգամ, երբ նոյն ճանապարհով անցնումէր, կամեցաւ առիւծի գէշը տեսնել և գտաւ նրա բերանի մէջ մի գունդ մեղու և մեղր:

Սամփսոնը փղտացիներից մի աղջիկ ընտրեց ու հարսանիք արաւ Թամնաթալում: Երեսուն փղտացի երիտասարդ հիւր էին հարսանիքին: Սամփսոնն ասաց. «Ես ձեզ մի հանելուկ կասեմ, եթէ մինչև հարսանեաց եօթներորդ օրը լուծէք, երեսուն ձեռք զգեստ կստանաք ինձնից, իսկ եթէ չկարողանաք, դուք տուէք ինձ նոյնքան զգեստ»: Համաձայնեցան և նա պատմեց: Հանելուկն այս էր—«Ի կերչէ ել կերակուր եւ ի հզօրէ ել քաղցր», այսինքն ուտողից ուտելիք գուրս եկաւ և հզօրից քաղցր: Նրանք չէին կարողանում գըտնել այս հանելուկը. գնացին Սամփսոնի կնոջ մօտ և ասացին. «Խարբ’ քո մարդուն և այս հանելուկի միտքն իմացիր, իսկ եթէ չես անիլ մենք քեզ էլ քո հօր

տունն էլ կալրենք»: Կինն այնքան խնդրեց և լաց եղաւ, մինչև որ մարդը լայտնեց գաղտնիքը և նա էլ իւր հալրենակից երիտասարդներին պատմեց: Եօթներորդ օրը արեգակի մտնելուց առաջ փղտացիներն ասացին Սամփսոնին. «Ի՞նչ կալ մեղրից քաղցր և առիւծից հըզօր»: Սամփսոնը պատասխանեց. «Եթէ դուք իմ կնոջը չստիպէիք, չէիք կարող իմանալ»:

Սամփսոնը գնաց փղտացիների մի ուրիշ քաղաք. երեսուն մարդ սպանեց. զգեստները բերաւ և տուաւ հանելուկը լուծողներին, իսկ ինքը վերադարձաւ Յուդայի երկիրը: Սամփսոնի աները նրա կնոջն ամուսնացը այն տեղի երիտասարդներից մէկի հետ: Երբ Սամփսոնը իւր կնոջ մօտ վերադարձաւ և տեսաւ որ ուրիշն են տուել, բարկացաւ, կամեցաւ վրէժխնդիր լինել բոլոր փղտացիներից. Երեք հարիւր աղուէս բռնեց. զոյգ-զոյգ ագիներից կապեց. ագիների մէջ վառած ջահ դրաւ. արձակեց փղտացիների ցորենի արտերի մէջ և ալրեց նրանց այգիները, ձիթենու ծառերը և արտերը: Թամնաթա եկան փղտացիները և Սամփսոնի աներոջն ու կնոջը միասին ալրեցին: Սամփսոնը պատերազմեց նրանց հետ և շատերին սպանեց:

Փղտացիները յարձակուեցան Յուդայի երկրի վրայ և ստիպեցին իսրայէլի որդւոց Սամփսոնին կապած իրանց լանձնել: Բայց Սամփսոնը իւր կամքով թուլ տուաւ իւր հալրենակիցներին, որ կապեն իրան և թըշնամու ձեռը մտնեն: Երբ փղտացիները տեսան նրան, սկսեցին ուրախութեան աղաղակ բարձրացնել: Սամփսոնը կտրատեց կապանքը՝ բարակ թելի նման. գտաւ մի ստիպած իշի ծնօտ և նրանով հազար մարդ սպանեց: Նա շարունակումէր իւր դտտաւորութիւնը:

Սրանից յետոյ Սամփսոնը գնաց փղշտացիների միուրիշ քաղաք, որի բնակիչները քաղաքի դռները գիշերով կողպեցին և հսկում էին առաւտօտեան խեղամահ անելու նրան: Սամփսոնը կէս գիշերին վեր կացաւ. հանեց քաղաքի դռներն իւրեանց սեմով ու նիգով. շալակեց և տարաւ քաղաքի մօտ գտնուող լերան գլուխը:

Մի քանի ժամանակից յետոյ Սամփսոնը Դալլա անունով մի փղշտացի աղջկալ վրա ամուսնացաւ:

Բ. Փղշտացի իշխաններն եկան Սամփսոնի կնոջ մօտ և ասացին նրան. «Եթէ քո մարդուն մեր ձեռը մատնես, մեզնից իւրաքանչիւրը կվճարէ քեզ հազար և հարիւր արծաթ»: Երբ Սամփսոնը քնեց, կինը փղշտացիներին իւր մօտ կանչեց: Նրանք բռնեցին Սամփսոնին երկաթէ շղթաներով կապեցին. աչքերը բրեցին. Գազա քաղաքը տարան և բանտ դրին՝ որտեղ նա աղում էր:

Սրանից յետոյ փղշտացիները և նրանց իշխանները հաւաքուեցան Դագոն կուռքին զոհ մատուցանելու: Այնտեղ ասացին նրանք. «Մեր Աստուածը թշնամուն մեր ձեռը մատնեց»: Երբ նրանց սրտերը զուարթացան, Սամփսոնին բանտից դուրս բերին, որ իրանց առաջը խազայ. կանգնացրին տան երկու սիւների մէջ տեղում: Տունը լիքն էր այր ու կին մարդկանց բազմութիւնով, իսկ տանիքի վրայ մօտ երեք հազար հոգի էին կանգնած: Սամփսոնը յանկարծ բռնեց տան միջի երկու սիւներից և աղաղակեց. «Թող ես էլ այս այլազգիների հետ մեռնեմ»: Այս ասաց և ինչքան ոլժ ունէր, շարժեց երկու սիւները՝ տունը քանդուեց իշխանների ու նրանց հետ ուրախացողների գլխին: Այս անզամ Սամփսոնն աւելի փղշտացի սպանեց, քան թէ մինչեւ հիմա իւր կեանքում սպանել էր:

«Աստուծով արասցուք զօրութիւն» (գործ):  
Աստուծով զօրութիւն կգործենք:

«Իմ է վրէժինդրութիւն եւ ես հատուցից՝ ասէ Տէր»:

## 46.

## ՀՈՌԻԹ

Դատաւորների կառավարութեան ժամանակ իսրայէլացիների երկիրը սով ընկաւ: Մի մարդ Եղիմելէք անունով՝ իւր նոոմին կնոջ և երկու որդւոց հետ Յուդայի Բեթղեհէմ քաղաքից գնաց մովաբացիների երկիրը: Եղիմելէքը մեռաւ այնտեղ, իսկ նրա որդիքը ամուսնացան այն տեղացի աղջկանց հետ, որոնցից մէկի անունը Որփա էր, իսկ միւսինը՝ Հոռոթ:

Տասը տարուց յետոյ նոոմինի որդիքը մեռան: Այդ ժամանակ լսեց, որ հայրենի երկրում սովն անցել է, վեր կացաւ հարսների հետ և գարձաւ Յուդայի երկիրը: Ճանապարհին սկեսուրն ասաց նրանց. «Դարձէք ձեր ծնողների մօտ. Աստուած օրհնէ ձեզ. դուք լաւ կնութիւն արեք իմ որդւոց և բարի հարսներ եղաք ինձ համար»: Հարսներն սկսեցին լաց լինել: Որփան փաթաթուեց սկեսրոջը, համբուրեց և հրաժարական ողջուն տուաւ, իսկ Հոռոթը չէր կամենում յետ դառնալ:

Նոոմինն ասաց. «Տեսնումես Որփան յետ դարձաւ ծնողաց մօտ, դու էլ հետեւիր նրան», Հոռոթը պատասխանեց. «Աստուած մի արասցէ՝ ես քեզ միախնակ թողնեմ և հեռանամ. ուր որ կերթաս, ես էլ հետդ կդամ. ուր դու կմնաս, այնտեղ էլ ես. քո ազգն իմ ազգը կըլինի և քո Աստուածն իմ Աստուածը. ուր դու կմեռնես, այնտեղ էլ ես—մահը միայն կբաժանէ ինձ քեզ-

նից»։ Երբ Նոոմին տեսաւ, որ Հռութը վճռել է իւր հետ գնալու, այդ մասին էլ ոչինչ չասաց։ Այսպէս նըրանք միասին գնացին մինչև Բեթղեհէմ։ Այստեղ Նոոմինն ասաց։ «Հարուստ հեռացաւ ձեզնից, իսկ աղքատ լետ դարձեց ինձ Աստուած»։ Երկուսն էլ բնակւումէին Բեթղեհէմում։

Հունձի ժամանակ էր։ Հռութը գնումէր դաշտ և հասկ էր ժողովում։ Մի օր գնաց Բոոսի արտը։ Այդ օրը եկաւ և Բոոսը Հնձողների մօտ. սիրով ողջունեց նըրանց և ասաց. «Աստուած ձեզ հետ լինի»։ Հնձողները պատասխանեցին. «Աստուած քեզ օրհնէ»։ Բոոսը հարցրեց. «Ում աղջիկն է սա»։ Վերակացուն պատասխանեց. «Սա այն մովաբացի աղջիկն է, որը Նոոմինի հետ է եկել»։ Բոոսն ասաց Հռութին. «Աղջիկս, մի գնա ուրիշի արտը հասկ ժողովելու, այլ մնա՛ իմ աղջկանց մօտ. որտեղ նըրանք կհնձեն, դու էլ նըրանց լետեց կգնաս. եթէ ծարաւես, գնա՞ այն ամաններից խմիր, որտեղից իմ ծառաներն են խմում»։ Հռութը պատասխանեց. «Ես մի օտարական կին եմ, իմ որ արժանաւորութեան համար եմ այդպիսի ուշադրութեան արժանանում»։ Բոոսը պատասխանեց. «Ինձ ամենայն բան պատմել են, թէ դու ինչպէս ես վարուել սկեսրոջդ հետ՝ քո մարդու մահուանից յետ—դու թողել ես քո հօրն ու մօրը, քո ծննդեան տեղը և եկել ես սկեսրոջդ հետ՝ քեզ անձանօթ երկիր»։ Ճաշի ժամանակ Բոոսը Հռութին հաց տուաւ. Նա կերաւ և մի կտոր էլ սկեսրոջ համար պահեց։ Հացից յետով Հռութը վեր կացաւ հասկ ժողովելու, Բոոսը պատուիրեց Հնձողներին և ասաց. «Թո՛լլ տուէք նըրան որաների միջից հաւաքելու և մի փոքը էլ

աւելորդ թափեցէք։ Երբ մութն ընկաւ, շալակեց հաւաքածը և տուն դարձաւ։

Սկեսուրը հարսի հաւաքած հասկերը և հետը բերած հացը տեսնելով՝ հարցրեց. «Ո՞րտեղ էիր այսօր հասկ հաւաքում»։ Հարսը պատասխանեց. «Բոոսի արտում»։ Նոոմին պատասխանեց. «Աստուած օրհնէ նըրան. նա մեր ազգականն է»։ Այսպէս Հռութն ամենայն օր գնումէր Բոոսի արտը և հասկ էր ժողովում՝ Բոոսը Հռութին հաւանեց և նըրա հետ ամուսնացաւ։ Աստուած նըրան մի որդի պարզեց, որին անուանեցին Ովբէդ։ Նոոմին էլ դալիեակ դարձաւ մանկանը. Ովբէդը Յեսսէի հայրն եղաւ, իսկ Յեսսէն էլ՝ Դաւթի։

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց»։

47.

### ՀԵՂԻ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

**Ա.** Հեղիի քահանայապետութեան ժամանակ մի մարդ էր ապրում Եղանա անունով՝ իւր կին Անանայի հետ։ Նըրանք անզաւակ էին։ Եղկանան և Սննան սովորութիւն ունէին ամենայն տարի Սելով գնւ լու և Աստուծուն գոհ մատուցանելու։ Աննան մի անգամ Սելով գնալիս՝ խիստ տրտմեց. լաց եղաւ. աղօթեց Աստուծուն և ասաց. «Տէր Սաբաւովիթ, քեզ յայտնի է աղախնիդ նեղութիւնը. եթէ դու նըրան մի որդի պարզեես, քեզ կնուիրէ նըրան, որ մինչև իւր մահը ծառայէ», Հեղի քահանայապետը նստած էր վկայութեան խորանի գրանը և ուշադրութեամբ նայում էր Աննայի բերանին, որովհետև նըրա շրթունքները շարժւում էին, իսկ

ձայն չեր լսում: Եւ որովհետեւ երկար տևեց այս աշոթքը, Հեղին ասաց. «Աննա՛, քանի՞ աղօթես»: Աննան պատասխանեց. «Ես մի վշտացած կին եմ, սիրու Աստուծու առաջ բաց եմ տնում»: Հեղին ասաց, «Դարձիր խաղաղութեամբ քո տեղը, իսրայէլի Աստուածը քո խնդիրը կվատարէ»: Կինը վերադարձաւ տուն. Նրա սիրուն այլ ևս այնպէս տիրուր չէր:

Աստուած լիշեց Աննաին և նրան մի որդի պարգևեց, որին անուանեցին Սամուէլ, որ նշանակում է «Աստուածանից խնդրած»: Երբ մանուկը մի քանի տարեկան դարձաւ, մայրը նրան Սելով բերաւ՝ Հեղիքահանալապետի մօտ և ասաց. «Տէր, ես այն կինն եմ, որ քեզ մօտ կանգնած աղօթում էի այս մանկան համար. Աստուած իմ աղօթքը լսեց, դրա համար էլ ես նրան եմ ընծայում իւր տուածը»: Աննան գոհացաւ Աստուծուց և տուն դարձաւ, իսկ մանուկը Հեղիի մօտ Ծիրոջ սպասաւոր դարձաւ:

Փ. Հեղիի որդիքը վատ էին, Աստուծու երկիւղ չունէին—իրանց քահանալական իրաւունքը չէին ճանաչում: Խում էին իսրայէլացի ուխտաւորներից զոհի մեծ մասը և անվայել գործեր էին անում: Ծերունի Հեղին գիտէր նրանց բոլոր արարմունքը. նա յաճախ իրաւում և ասում էր նրանց. «Ի՞նչու էք ձեր վատ վարմունքով ժողովրդին գալթակղեցնում»: Բայց նրանք չէին լսում: Մանուկ Սամուէլն աճում էր և զօրանում: Նըրան սիրում էին և Աստուած և մարդիկ: Աստուծու խօսքը շատ թանգ էր այդ ժամանակներում, հազուագիւտ էր:

Մի անգամ, երբ Սամուէլը վկայութեան խորանի առաջ քնած էր, ձայն լսուեց որ ասում էր. «Սամուէլ,

Սամուէլ»: Սամուէլը վազեց Հեղիի մօտ և ասաց. «Այստեղ եմ, ինչու կանչեցիր»: Հեղին պատասխանեց. «Ես քեզ չեմ կանչել. դարձիր և քնիր»: Աստուած Սամուէլին երկրորդ, երրորդ անգամ կանչեց: Սամուէլը կրկն անգամ գնաց Հեղիի մօտ: Հեղին հասկացաւ որ Աստուած է նրան կանչողը, ասաց. «Դարձիր և քնիր, եթէ մի անգամ էլ ձայն լսես, այսպէս պատասխանիր—ասա Տէր, քո ծառան լսում է քեզ»: Սամուէլը դարձաւ իւր տեղը: Աստուած կրկն անգամ ձայն տուաւ. «Սամուէլ, Սամուէլ» Սամուէլը պատասխանեց. «Ասա՛, Տէր, քո ծառան լսում է քեզ»: Աստուած ասաց Սամուէլին. «Ես կամենում եմ Հեղիին իւր որդւոց հետ դատել, որովհետ հետեւ նրանց անվայել արարմունքը յախնի է իրան և չէ պատժում որդւոց»: Սամուէլը վախենում էր այս բանը Հեղիին յայտնելու:

Այն ժամանակ Հեղին կանչեց նրան և ասաց. «Աստուած ի՞նչ ասաց քեզ, մի ծածկիր ինձնից, որդեակ»: Սամուէլը պատժմեց նրան ամենը: Հեղին ասաց. «Ինչ որ բարի է, թող այն կատարէ Աստուած»:

Փ. Իսրայէլացիները պատերազմ ունեցան փղշացիների հետ և խիստ հարուած ստացան: Իսրայէլի ծերերն ասացին. «Ուխտի տապանակը բերենք Սելիմից, որ մեզ ազատէ այլազգու ձեռքից» և բերել տուին: Տապանակի հետ եկան և Հեղիի երկու որդիքը: Երբ տապանակը բանակ բերին, բոլոր ժողովուրդը բարձր ձայնով սկսեց աղաղակել, իսկ փղշացիներն ասում էին միմեանց. «Իսրայէլի Աստուածը բանակ է եկել, ով փղշացիներ, քաջ պատերազմեցէ՛ք որ եբրայէցիներին ծառալ չլինէք»: Պատերազմի մէջ իսրայէլացիները յաղթուեցան: Հեղիի երկու որդիքն էլ սպանուեցան,

իսկ ուխտի տապանակը գերի ընկաւ թշնամու ձեռը:  
Մինը պատերազմի դաշտից՝ հանդերձները պատառելով և գլխին հող ցանելով՝ Սելով հասաւ: Հեղին վը-կայութեան խորանի դրան առաջ աթոռի վրայ նստած էր. նրա սիրտը երկիւղի մէջ էր տապանակի համար. նա հարցրեց եկող մարդուն բանակի մասին: Դեսպանը պատասխանեց. «Խորայէլը յաղթուեց, քո երկու որդիքն էլ սպանուեցան և ուխտի տապանակը գերի ընկաւ»:  
Այս գոյմը լսելուն աէս՝ Հեղին աթոռից վայր ընկաւ,  
մէջքը կոտրուեց և մեռաւ:

Փղտացիները ուխտի տապանակն առան և դրին կոտան մէջ: Առաւոտեան տեսան, որ իրանց կուռքե-ը տապանակի առաջ երեսի վրայ վայր են ընկած— նրանց ձեռներն ու ոտները փշրտած են: Փղտացիները տապանակ ուխտին իսրայէլացիներին յետ ուղարկեցին:

Պ. Սամուէլն աճում էր և զօրանում: Աստուած նրա հետն էր: Նա սկսեց քարոզ կարդալ բոլոր իսրայէ-լացիներին: Ֆողովուրդը խոստովանեց, որ նա Աստուծու ճշմարիտ մարդարէն է: Սամուէլը դատաւոր դարձաւ. հաւաքեց բոլոր իսրայէլացիներին և ասաց. «Եթէ դուք ի բոլոր սրտէ դառնաք դէպի ճշմարիտ Աստուածը, թողնէք օտար աստուածներին և ճշմարտին մի-այն ծառայէք, այն ժամանակ ձեզ կազատէ փղտա-ցիների ձեռից»: Իսրայէլացիները հեռացրին իրանցից օտար աստուածներին:

Երբ փղտացիներն այս համբաւն իմացան, դուրս եկան կրկին անգամ պատերազմելու: Իսրայէլացիներն ասացին Սամուէլին. «Մի՞ դադարիր Աստուծուն ինդրե-լուց՝ մինչև որ մեզ կօգնէ»: Սամուէլն առաւ մի դառն, ողջակէզ արաւ Աստուծուն ժողովրդեան հետ և աղօ-

թում էր. իսկ այդ ժամանակ փղտացիները յարձակուե-ցան Մասեփաթայի մօտ իսրայէլացիների վրայ: Թշնա-մին յաջողութիւն չունեցաւ, յաղթուեցաւ: Սամուէլը վեր առաւ մի քար և տնկել տուաւ Մասեփաթայի և Բեթսանայի մէջ և այդ տեղին Աբենեզեր անուանեց ու ասաց. «Աստուած մեզ մինչև այստեղ օգնեց»: Փղ-տացիները փախան և Սամուէլի կենդանութեան ժամա-նակ երբէք չփստահացան իսրայէլի դէմ զէնք առնելու: Սամուէլը կառավարեց իսրայէլին իւր ամբողջ կեանքի ընթացքում: Նա ամենայն տարի գալիս էր Բեթէլ, Գա-ղատ և Մասեփաթ, դատում էր ժողովրդին և կրկին դառնում Արիմաթեմ, որովհետեւ նրա տունն այնտեղ էր: Նա այնտեղ ևս դատում էր իսրայէլին և Աստու-ծու համար մի սեղան շինեց:

«Որ ինայէ ի գաւազան՝ ատեայ զորդի իւր, իսկ որ սի-րեն՝ խնամով խրատէ»:

Ով ինայում է գաւազանը, նա ատում է իւր որդուն:

«Արդարութիւն զազդ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազդս մեղք»:

Արդարութիւնն ազդ է բարձրացնում, իսկ յանցանքը մարդկանց կործանում է:

«Եւ իմաստունք ծագեսցեն իբրև զլուսաւորութիւն ի հաս-տատութեան, եւ բազումք յարդարոց իբրեւ զաստեղս յաւի-տեանս»:

Դ. ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

Ա. Ս Ա. Ի Ո Ւ Ղ

48.

ՍԸԿՈՒՂԸ ԹԱԳԱՒՈՐ Ե ԴԱՌՆՈՒՄ

Ա. Երբ Սամուէլը ծերացաւ, իւր որդոց իսրայէլի վրայ դատաւոր նշանակեց: Որդիքը հօր ճանապարհով չէին գնում—կաշառքներ էին վերցնում և օրէնքից դուրս գործեր կատարում: Սրա համար իսրայէլի ծերերը Արիմաթեմ հաւաքուեցան Սամուէլի մօտ և ասացին. «Դու ծերացել ես. որդիքդ քո ճանապարհով չեն գնում. մեզ վրայ մի թագաւոր նշանակիր, ինչպիսին այլազգիներն ունին, որպէսզի նա մեզ դատէ և պատերազմում առաջնորդէ»: Այս բանը դուր չեկաւ Սամուէլին. նա աղօթեց Աստուծուն ալգ մասին: Աստուծած ասաց նրան. «Հնազանդիր ժողովրդի պահանջին և նրան մի թագաւոր տնըր»:

Բ. Բենիամինի ցեղից մի մարդ՝ կիս անունով մի որդի ունէր՝ անունը Սաւուղ: Սա մի գեղեցիկ մարդ էր: Մի անգամ կիսի էշերը կորան: Սաւուղը փնտուելու գնաց և հասաւ մինչև Արիմաթեմ քաղաքը: Հէնց որ Սամուէլը Սաւուղին տեսաւ, Աստուծած ասաց նրան. «Ահա այս է այն մարդը, որ իմ ժողովրդեան պիտի կառավարէ»: Սամուէլն ասաց Սաւուղին. «Դու այսօր ինձ հետ պէտք է հաց ուտես, էշերի մասին մի մտածիր, նրանք գտնուած են. իսրայէլի ժողովրդի մէջ ամենազեղեցիկ բանը քեզ է պատկանում»: Սաւուղը Սամուէլի հետ ճաշեց: Հետևեալ օրը ծէգը բացուելիս նըրանք հեռացան քաղաքից:

Սամուէլն ասաց Սաւուղին. «Հանգիստ եղիր»: Այս ասաց, առաւ իւղի սրուակը. ածեց նրա գլխին. համբուրեց և ասաց. «Աստուծած քեզ իւր ժառանգութեան վրայ տէր է նշանակում»: Հէնց Սաւուղը հեռացաւ Սամուէլից, Աստուծած նրան մի ուրիշ սիրտ, ուրիշ հոգի տուաւ:

Սամուէլը հաւաքեց իսրայէլի ժողովրդին Մասեփաթ և լայտնեց, որ Աստուծած Սաւուղին թագաւոր է ընտրել: Ժողովուրդն սկսեց փնտուել նրան, բայց չգըտաւ, նա կարասի տակ թաք էր կացել: Վերջապէս գըտան և առաջ բերին: Երբ Սաւուղը ժողովրդին ներկայացաւ, ամենից բարձրն էր միւսների հասակը հազիւ էր նրա ուսերին հասնում: Ժողովուրդն ուրախական աղաղակ բարձրացըրեց և ասաց. «Կեցցէ թագաւորը»: Բայց մի քանի մարդիկ ասում էին. «Միթէ սապիտի վրկէ մեզ»: Դժգոհները անարգում էին Սաւուղ թագաւորին և ոչ մի ընծալ չէին բերում: Բայց Սաւուղն այնպէս էր ցոյց տալիս՝ որպէս թէ չէ լսում:

Գ. Ամովնացիների թագաւորը յարձակուեց իսրայէլացիների վրայ, Յաբիս քաղաքը պաշարեց և ասաց քաղաքացիներին. «Ես ձեր ամենի աջ աչքը պէտքէ հնեմ ի նախատինս իսրայէլի»: Յաբիսացիները գեսպաններ ուղարկեցին իրանց եղբայր իսրայէլացիների մօտ և օգնութիւն էին խնդրում: Դեսպանները Գաբաա ևս եկան և ամենալն բան ժողովրդի աչքի առաջ պատմում էին: Ժողովուրդն սկսեց լաց լինել: Առաւօտեան Սաւուղը հանգից դառնալիս՝ տեսաւ այս բանը և հարցըց: «Ի՞նչու է լաց լինում ժողովուրդը»: Նրան պատմեցին եղելութիւնը: Խակոյն Աստուծու հոգին Սաւուղի վրայ եկաւ. նա խիստ բարկացաւ. երկու եզն առաւ.

կտոր կտոր արաւ և դեսպանների ձեռքով իսրայէլի քաղաքներն ուղարկեց ասելով. «Ով Սաւուղին և Սամուէլին չետևի, նրա եզներն էլ այսպէս պատառ—պատառ կլինին»: Ֆողովուրդը նոր թագաւորի շուրջը հաւաքուեց: Սաւուղը դեսպան ուղարկեց Յաբիսի բնակիչների մօտ, որ նրանց ասեն. «Վաղն արևը տաքանալուն պէս ձեզ համար օգնութեան դուռը կը բացուի»: Յաբիսացիները շատ ուրախացան: Սաւուղն առաւոտեան երեք գունդի բաժանեց զօրքը—յարձակուեց ամովնացիների վրայ և ջարդեց նրանց մինչև արևի տաքանալը—մնացած թշնամին ցրուեց, այնպէս որ երկու ամովնացի միասին գտնել չէր կարելի:

Այն ժամանակ ժողովուրդն ասաց. «Մեր ձեռքը մատնեցէք Սաւուղին անարգողներին, որ սպանենք նըրանց»: Իսկ Սաւուղը պատասխանեց. «Այսօր՝ երբ Ս.ստուած մեզ ազատութիւն է տուել, ոչ մի իսրայէլացի չպիտի մեռնի»: Սամուէլը Դաղգաղա հաւաքեց բոլոր իսրայէլացիներին. այնտեղ Սաւուղին թագաւոր օճեցին և շնորհակալութեան զոհ մատուցին Սատուծուն: Նորընտեր Սաւուղ թագաւորը բոլորը ժողովրդի հետ ուրախանում էր:

ՅԱՍՏՈՒԾՈՅ Երկերուք, զթագաւորս պատուեցէք»:  
Աստուածանից վախեցէք, թագաւորին պատուեցէք:  
«Երանի քեզ Երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է»:

49.

ՅՈՎՆԱԹԱՆԻ ՔԱԶԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Փղտացիները մեծ պատրաստութիւնով իսրայէլի վրայ պատերազմի եկան՝ երեսուն հազար կառքով, վեց

հազար ձիաւոր զօրքով, իսկ ժողովրդի բազմութիւնը ծովի աւազին էր նմանում: Երբ իսրայէլացիներն այս բազմութիւնը տեսան, սարսափի մէջ ընկան և ամենայն ոք իւր գլուխին սկսեց ազատել—ոմանք ալրերի մէջ թաքացան, ոմանք գոմերի, ոմանք ժայռերի, ոմանք անտառների, զրհորների մէջ, ոմանք Յորդանանան անցան, մի քանիսն էլ թշնամու հետ միանալով՝ յառաջ արշաւեցին: Սաւուղը իւր Յովնաթան որդու և վեց հարիւր մարդոց հետ միասին մնացին մի բլրի վրայ՝ Դաբայի մօտ, ոչ հեռու փղտացիների բանակից: Թըշնամու բանակից երեք գունդ զօրք դուրս եկաւ երկիրն ասպատակելու: Այդ ժամանակ իսրայէլացիների երկրում ոչ մի գարբին, ոչ մի երկաթագործ չկար, որովհետեւ ամենին էլ գերի էին տարել, որ երայէցիների համար սուր և գեղարդ չշինեն:

Մի օր Յովնաթանն ասաց իւր կապարճակրին. «Եկ անցնենք փղտացիների բանակը, Աստուած անշուշտ կօգնէ մեզ. նրա համար դժուար չէ փոքրաթիւ մարդկանց ևս յաղթութիւն պարգևել»: Կապարճակրը պատասխանեց. «Արա այնպէս, ինչպէս քո սիրտն ուղղումէ, ես քեզ կհետեւմ»: Երկուսն էլ հեռացան՝ առանց Սաւուղին իմաց տալու. ժողովուրդը նոյնպէս ուշնչ չգիտէր: Այն կէտը՝ որտեղից Յովնաթանը փղտացիների բանակն էր ուզում մտնել, երկու սրածայր ժարուեր էին: Յովնաթանը կրկնեց իւր կապարճակրին. «Եթէ թշնամին մեզ տեսնէ և ասէ, սպասեցէք մինչև որ ձեզ մօտ գանք, մենք յառաջ չենք գնայ, իսկ եթէ ասէ, վայր եկէք մեզ մօտ, այդ կնշանակէ Աստուած նըրանց մեր ձեռքն է մատնում»: Երբ երկուսն էլ ալլազգու կիրճը մտան, թշնամուն նկատելի եղան, ասացին

փղտացիները. «Նայեցէք, Եբրայեցիներն այրերից դուրս  
են եկել. Եկէք մեզ մօտ, ձեզ բան ունինք յայտնելու»։  
Յովնաթանն ասաց կապարճակրին. «Հետևիր ինձ, Աս-  
տուած նրանց մեր ձեռն է մատնում»։ Յովնաթանն  
սկսեց վեր մագլցէլ. Նրա կապարճակրին էլ յետևից։  
Յովնաթանն սկսեց յարձակուիլ թշնամու վրայ. կապար-  
ճակրիր նոյնն էր անում—այս պատերազմում քսան հո-  
գի սպանեցին։ Բանակի մէջ այնպիսի շփոթութիւն ըն-  
կաւ, որ պատերազմող գնդերն անգամ զարհութեցան։

Սաւուղի պահապանները բարձրից նկատեցին, որ  
թշնամու բանակի մէջ շփոթութիւն է ընկել և մէկը  
միւսի յետևիցն է փախչում։

Սաւուղն ասաց ժողովրդին. «Համարեցէք և տե-  
սէք ով է պակաս մեզնից»։ Համարեցին, տեսան, որ  
Յովնաթանը և իւր կապարճակրին այնտեղ չեն։ Պղց-  
տացիների բանակում շփոթը քանի գնում, մեծանումէր։  
Սաւուղը կանչեց ժողովրդին. «Հետևեցին նրան։ Արիւ-  
նահեղ պատերազմ եղաւ։ Այն Եբրայեցիները, որոնք  
փղտացիների բանակումն էին, միացան իսրայէլացինե-  
րի հետ—Սաւուղը և Յովնաթանը հալածեցին թշնա-  
միներին։ Եփրեմի լեռներում թաքացածներն ևս  
միացան և պատերազմեցին փղտացիների գէմ։ Այս-  
պէս Աստուած առաջնորդեց իսրայէլին դէպի յաղթու-  
թիւն։

Յաղթութիւնը նորանն է, ով յոյն Աստուածու վրայ է դնում։

50.

### ՍԱՄՈՒԷԼԻ ՀՐԱԺԱՐԻՈՒՄ Է ԻԻՐ ՊԱՃՏՈՆԻՑ

Սամուէլը հրաւիրեց Գաղգաղայ ամբողջ իսրայէլի  
ժողովրդին և ասաց. «Ես ձեզ լսեցի և թագաւոր ընտրե-

ցի. մանկութիւնիցս ձեր մէջն եմ մեծացել. ձեզ առաջ-  
նորդել եմ ցօրս. այժմ ծերացել եմ. մազերս սպիտա-  
կել են. ահա ձեր առաջն եմ կանգնած. յայտնեցէք,  
ինձ Աստուածու և նրա օծեալի առաջ. Եթէ ես մէկի  
եզր կամ էշը խլել եմ. Եթէ մինին զրկել եմ կամ նրա  
գէմ անիրաւութիւն գործել. Եթէ մէկից մի կօշիկ ըն-  
ծայ եմ ստացել, պատրաստ եմ փոխարէնը վճարելու։  
Ժողովուրդը պատասխանեց. «Դու մեզ ոչ զրկել ես. ոչ  
մեր գէմ անիրաւութիւն գործել և ոչ մինից մի կօշիկ  
ընծայ ես ընդունել. Աստուած և նրա օծեալը թող վը-  
կայ լինեն։»

Սամուէլը շարունակեց. «Յիշեցէք այն բարութիւն-  
ները, որ Աստուած ձեզ և ձեր հայրերին արել է. Աս-  
տուածու երկիւղը սրտներիցդ մի հանէք. ծառալեցէք  
նրան հաւատարմութեամբ, ի բոլոր սրտէ, դուք ինք-  
ներդ տեսաք, թէ ինչպիսի մեծ գործեր կատարեց նա  
ձեր աչքի առաջ։ Այժմ էլ ձեզ մի թագաւոր տուաւ,  
որի մասին խնդրել էիք։ Եթէ դուք ձեր սրտերում  
Աստուածու երկիւղ ունենաք և նրան հաւատարմու-  
թեամբ ծառալէք, այն ժամանակ ձեզ էլ, ձեր թագա-  
ւորին էլ կօհնէ, իսկ եթէ վատ վարուէք, ո՛ւրք էլ  
ձեր թագաւորն էլ կկորչէք։ Իսկ ես, քանի որ շունչ  
ունեմ բերանումս, միշտ կազմթեմ ձեզ համար, միշտ  
կուսուցանեմ Աստուածու ճշմարիտ ճանապարհը։»

Սամուէլն այսպէս հրաժարուեց իւր դատաւորա-  
կան պաշտօնից։

Աստուածալաշտութիւն առ ամենայն ինչ օդտակար է։  
Աստուածալաշտութիւնն ամեն բանի համար օդտակար է։

ՍԱԻՈՒՂԻ ԱՆՀԱՅԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Նոր պատերազմ ծագեց փղտացիների և իսրայէլացիների մէջ։ Սամուէլը զօրք հաւաքեց և եկաւ. Գաղդաղա: Ժողովուրդը հետևում էր նրան ահ ու երկիւղով։ Սամուէլն ասաց թագաւորին. «Սպասիր ինձ Գաղդաղայում, մինչև որ ես կգամ և զոհ կմատուցանեմ»։ Սաւուղը եօթն օր անհամբեր սպասում էր։ Սամուէլը չեկաւ: Ժողովուրդն սկսեց ցրուել: Թագաւորն ասաց. «Բերէք ողջակէզը, որ զոհենք»։ Բայց դեռ զոհը չվերջացած, մարգարէն եկաւ։

Սամուէլը վշտացած ասաց, «Այդ ի՞նչ ես արել». Սաւուղը պատասխանեց. «Ես տեսայ, որ ժողովուրդն ըսկսեց ցրուել. դու ևս որոշած ժամանակին չեկար. Փղշտացիները խմբուած էին մեր դէմ, ուստի համարձակուեցի ողջակէզ մատուցանելու»։

Սամուէլն ասաց Սաւուղին. «Դու անմիտ ես վարուել. դու Աստուծու պատուիրանիցն անցել ես. միթէ կարծում ես, որ Աստուած զոհը հնազանդութիւնից աւելի կսիրէ—լաւ է ունկնդրութիւն քան զզոհ։ Ուրովհետեւ դու Աստուծու պատուիրանն արհամարհեցիր, Աստուած էլ քեզ կարհամարհէ, որ դու այլ ևս թագաւոր չլինիս իսրայէլի վրայ»։

Սամուէլը հեռացաւ Սաւուղից և մինչև իւր մահը՝ նրա երեսը չտեսաւ։ Թէև այս այսպէս էր բայց և այնպէս նա միշտ ցաւում էր Սաւուղի վրայ։

«Քակեաց զհզօրս յաթոռոց»։

Զօրաւորներին աթոռներից իջեցրեց։

Բ. ՍԱԻՈՒՂԻ ԵՒ ԴԱԿԻ ԹԱՐԱԿԱՆ  
ԴԱԻՄՈՒԹԻՒՆ ԸՆԴՐՈՒԹԻՒՆ

Աստուած ասաց Սամուէլին. «Մինչև երբ տիրես Սաւուղի համար. ես նրան արգէն աչքից ձգեցի: Լցրո՛ւ եղջիւրդ իւղով և գնա Բեթղեհէմ՝ Յեսսէի որդիներից մինին թագաւոր եմ ընտրել»։ Սամուէլը գնաց Բեթղեհէմ. Հրաւիրեց Յեսսէին և իւր որդւոց զոհ մատուցանելու։

Որդիքը տուն եկան. Սամուէլը նայեց մեծին. կարծում էր, թէ սա պիտի լինի ընտրեալը։ Բայց Աստուած ասաց. «Դու ոչ նրա մեծ հասակին նայիր և ոչ տեսքին. ես մեծ հասակ ունեցողին անարգեցի։ Բանն արտաքին տեսքը չէ, այլ՝ ներքինը—մարզս տեսնում է աչքի առաջինը, իսկ Աստուած սրտին է նայում»։

Յետոյ Յեսսէն իւր եօթը որդւոցը ևս Սամուէլի առաջով անցկացրեց։ Մարգարէն պատասխանեց. «Աստուած սրանցից ոչ մինին էլ չէ ընտրել. ուրիշ որդի չունիս»։

Յեսսէն պատասխանեց. «Մի փոքրն ևս ունեմ, նա խաչներ է արածացնում»։ Սամուէլն ասաց. «Մարդ ուղարկիր և կանչել տուր»։

Դաւիթն եկաւ—նա կարմրաերես էր, գեղեցիկ աչքեր ունէր և սիրուն հասակ։ Աստուած ասաց. «Անը կաց և օծիր սրան, սա է ընտրեալը»։ Սամուէլն առաւ եղջիւրը և օծեց նրան թագաւոր իւր եղբայրների մէջ։

Այդ օրից սկսած Աստուծու հոգին Դաւիթի վըրայ իջաւ։

«Քակեաց գհզօրս յաթուոց եւ քարձրացոյց զխոնարհա»:  
Զօրաւորներին աթուներից իջեցրեց, իսկ խոնարհներին  
բարձրացըլեց:

«Մարդ հայի յերեսս եւ Աստուած հայի ի սիրտա».  
Մարդս տեսնում է աչքի առաջինը, իսկ Աստուած սըր-  
տին է նայում:

53.

ԴԱԼԻԹԸ ԴԱԼԻՍ Է ՍԵՒՈՒՂԻ ԱՐՔՈՒՆԻՔԸ

Աստուծու հոգին վերացաւ Սաւուղից – չար ոգին  
տանջում էր նրան: Ծառաներն ասացին թագաւորին.  
«Քնարի վրայ ածող մի մարդ գտնենք, որ երբ չար ո-  
գին գալու լինի, նուագէ և հանգստացնէ քեզ»:

Սաւուղը պատասխանեց. «Եթէ ճանաչում էք այդ-  
պիսի մարդ, ինձ մօտ բերէ՛ք»: Ծառաներից մինը պա-  
տասխանեց. «Ես ճանաչում եմ Բեթղեհէմցի Յեսսէի  
որդուն. նա մի իմաստուն և քաջ երիտասարդ է, գիտէ  
քնարի վրայ ածել, և Աստուած էլ նրա հետն է»: Սա-  
ւուղը դեսպաններ ուղարկեց Յեսսէի մօտ և պատուի-  
լեց ասելու. «Քո որդի Դաւթին ինձ մօտ ուղարկի՛ր»:

Այսպէս Դաւիթը Սաւուղի մօտ եկաւ և ծառայում  
էր նրան: Սաւուղը նրան շտտ սիրեց և իւր կապարճա-  
կիրը դարձրեց: Հէնց որ չար ոգին Սաւուղի վրայ էր  
գալիս, Դաւիթն առնում էր քնարը և սկսում էր եր-  
գել: Սաւուղը հանգստանում էր և չար ոգին հեռա-  
նում նրանից՝ հէնց որ Դաւիթն սկսում էր երգել քնա-  
րի ձայնակցութեամբ:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք»:  
Նրանի սուրբ սիրտ ունեցողներին:

Աստուծու խորհուրդը սքանչելի է, իսկ նրա իմաստու-  
թիւնը գերազանց:

54.

ԴԱԼԻԹԸ ԵԻ ԳՈՂԻԱԹ

Փղտացիները զօրք հաւաքեցին և եկան Յուղալի  
երկիրը: Սաւուղը նոյնպէս զօրք հաւաքեց և բանակ  
ձգեց վղջտացիների հանդէպ՝ այնպէս որ մի հովիտով  
էին բաժանւում իրարից: Փղտացիների բանակից դուրս  
եկաւ մի հսկայ՝ Գողիաթ անունով, որի հասակի երկայ-  
նութիւնը վեց կանգուն և մի թիզ էր: Նրա գլխին  
պղնձէ սաղաւարտ կար դբած. Հագել էր հիւսած զբահ.  
առերին պղնձէ սոնապաններ, իսկ ուսերի մէջ պղնձէ  
վահան: Նրա նիզակի բունը ոստայնանկների գլանի նը-  
ման էր: Վահանակիրն առաջովն էր գնում:

Գողիաթը դուրս եկաւ բանակից և ձայն տուաւ  
խրայէլացիներին. «Ընտրեցէ՛ք մէկին ձեզնից. Թող  
դուրս գայ իմ դէմ մենամարտելու. Եթէ նա յաղթէ,  
մենք ձեր ծառաները լինենք, իսկ եթէ ես յաղթեմ,  
դուք մեր ծառաներն եղեք»: Սաւուղը և խրայէլացի-  
ները զարհուրեցան և խիստ վախեցան:

Դաւթի երեք մեծ եղբայրները Սաւուղի հետ բա-  
նակումն էին, իսկ ինքը տուն էր գնացել հօր ոչխար-  
ներն արածացնելու: Մի անգամ Յեսսէն ասաց Դաւթին.  
«Առ այս տասն նկաները, տար եղբայրներիդ և տես,  
ինչպէս է նրանց առողջութիւնը»: Երբ Դաւթը եղ-  
բայրների մօտ եկաւ, հսկայ Գողիաթը դուրս եկաւ բա-  
նակից և սկսաւ նոյն ձեզով նախատել խրայէլացիներին:  
Ոչ ոք չէր վստահանում նրա դէմ դուրս գալ. նրա  
ձայնը լսելուն պէս, ամենքն էլ փախչում էին: Դաւթ-

թը, երբ այս բանը տեսաւ, ասաց իւր մօտ կանգնողներին. «Այս փղտացին նախատում է կենդանի Աստուծուծու ժողովրդին, միթէ մէկը չկայ, որ նրան սպանէ և խրայէլի նախատինքը վերացնէ»: Ժողովուրդն ասաց. «Ով սպանէ նրան, թագաւորը կվարձատրէ և իւր աղջկը նրան կտայ»: Դաւթի այս խօսքերը Սաւուղին յայտնեցին. նա էլ Դաւթին իրա մօտ կանչեց:

Դաւթին ասաց Սաւուղին. «Մի վախենար, թագաւոր, ես կդնամ և կմենամարտեմ նրա հետ»: Սաւուղը պատասխանեց. «Դու մանուկ ես, փղտացու հետ չես կարող պատերազմել. նա մանկութիւնից վարժուած է այս բանին»: Դաւթը պատասխանեց. «Հօրս խաշներն արածացնելիս՝ երբ առիւծ կամ արջ էր գալիս և յափշտակում ոչխարներս, ընկնում էի նրանց յետելից, ոչխարը կորզում էի գազանների բերանից և իրանց էլ սպանում: Այն Աստուծը, որ ինձ առիւծից և արջից ազատեց, կազատէ և այս փղտացուց»:

Սաւուղն ասաց Դաւթին. «Գնա, Աստուծ քեդ հետ»: Թագաւորը իւր հանդերձները Դաւթին հագցրեց—գլխին պղնձէ սաղաւարտ դրաւ. զրահաւորեց և սուրը մէջքին կապեց: Դաւթին անսովոր էր այդ բանին, ուստի ասաց. «Երանով ես չեմ կարող կռուել, այս բանին վարժուած չեմ»: Զրահները հանեց. ցուպը ձեռն առաւ. հինգ ողորկ քար դրաւ հովուական մաղախի մէջ, պարսը վերցրեց և դիմեց դէպի փղտացին»:

Երբ այլազգին Դաւթին տեսաւ, արհամարհեց նըրան և ասաց. «Միթէ ես շուն եմ, որ դու ցուսով և քարով ես ինձ վրայ գալիս. մօտ արի, ես քո մարմինը երկնքի թուզուններին և երկրիս գազաններին կերակուր գարձնեմ»: Դաւթը պատասխանեց. «Դու գալիս ես ինձ

վրայ սրով, նիզակով և վահանով, իսկ ես՝ Սաբաւովթի խրայէլի Աստուծու անունով, որին դու նախատեցիր: Աստուծ քեզ այսօր. իմ ձեռը կյանձնէ, որ ամենքդ ճանաչէք նրան—թո՞ղ իմանան որ փրկութիւնը սրով և գեղարդով չէ լինում»: Փղտացին տեղից վեր կացաւ և դիմեց դէպի Դաւթիթը: Սա էլ նրան դիմաւորեց. մաղախից մի քար հանեց. դրաւ պարսի մէջ և ձգեց դէպի այլազգին: Քարը ճակատին դիպաւ և հսկան գետին փռուեց երեսի վրայ: Բայց որովհետեւ Դաւթը սուրը չունէր, վազեց դէպի փղտացին. հանեց նրա սուրը պատենից և գլուխը կտրեց: Երբ փղտացիները տեսան, որ իրանց հերոսն ընկաւ, փախան, իսկ խրայէլացիները հալածեցին նրանց մինչև իրանց քաղաքի դռները:

«Զի Աստուծ ամբարտաւանից հակառակ կայ, տայ չնորդը խոնարհաց»:

Աստուծ ամբարտաւան մարդկանց հակառակ է, իսկ խոնարհներին չնորհ է տալիս»:

«Զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»:

55.

ՍԱԻՈՒՂՆ ԱՏՈՒՄ, ԻՄԿ ՅՈՎՆԱԹԱՆԸ ՍԻՐՈՒՄ է  
ԴԱԼԻԹԻՆ

Ա. Երբ Դաւթը Գողիաթի գլուխը կտրեց և յաղթութեամբ յետ դարձաւ, թագաւորի զօրապետ Աբենները նրան Սաւուղի մօտ տարաւ: Սաւուղը հարցրեց Դաւթին. «Ո՞ւմ որդին ես»: Դաւթը պատասխանեց. «Քո ծառայ իեթղեհեմցի Յեսուէի»: Այս դէպքից յետոյ Յովնաթանը Դաւթին սրտով միրեց և ընկերական դաշը կապեց՝ տալով նրան իւր լոտիկը, վարապանակը, սուրը,

աղեղն ու գօտին։ Սաւուղը չթողեց Դաւթին, որ տուն գառնալ, այլ՝ իրա մօտ պահեց և զօրքի վրայ համառնատար նշանակեց։ Փողովուրդը սիրում էր. Դաւթին։ Գողիաթին սպանելուց յետոյ՝ երբ Դաւթը վերադառնում էր փղտացւոց պատերազմից՝ քաղաքներից կանալք գուրս էին գալիս Դաւթի առաջ թմբուկներով, ծնծղաներով, պարում, երգում և ասում էին. «Սաւուղը հազարին սպանեց, իսկ Դաւթիթը՝ բիւրին»։ Այս խօսքերը գուր չեկան թագաւորին. նա բարկացաւ և ասաց. «Ելինչ է պոկաս նրան՝ բացի իմ թագաւորութիւնից»։ Ալդ օրից սկսած Սաւուղը ծուռ աչքով էր նայում Դաւթին։

Հետևեալ օրը չար ոգին նորից եկաւ Սաւուղի վրայ, իսկ Դաւթին սկսաւ քնարն ածել։ Սաւուղը վեր առաւ գեղարդը և ձգեց Դաւթի յետեկից՝ այն մտքով, որ նրան պատին մեխէ։ Բայց նա խոլս տուաւ և գեղարդը պատի մէջ ցցուեց։ Սաւուղը վախենում էր և Դաւթին իրանից հեռացնելու համար, հազար մարդու գլխաւոր նշանակեց։ Դաւթին զգոյշ էր վարւում ամեն մի հանգամանքում. Աստուած նրա հետն էր. ժողովուրդը յարգում էր նրան։

Սաւուղի աղջիկը սիրում էր Դաւթին։ Եւ որովհետեւ թագաւորը խոստացել էր նրան իրան վեսայ գարձնել, ասաց. «Պոպէն շատ յաջող է—Դաւթին ոչնչացնելու համար, փեսայ կդարձնեմ և փղտացւոց դէմ պատերազմի կուղարկեմ»։ Սաւուղը պատուիրեց իւր ծառաներին, որ ծածուկ Դաւթի հետ այսպէս խօսեն. «Թագաւորը և նրա բոլոր մարդիկը քեզ շատ են սիրում, եկ և նրան վեսայ դարձիր»։ Ալդպէս էլ արին ծառաները։ Դաւթին ասաց. «Ես մի աղքատ, աննշան մարդ

եմ»։ Ծառաները պատասխանեցին. «Թագաւորը քեզնից ոչ մի վարձ չէ պահանջում, բացի հարիւր փղտացու գլխից»։ Նրա միտքն այն էր, որ Դաւթիթը թշնամու հետ պատերազմելիս՝ սպանուի։ Դաւթին իսկոյն վեր կացաւ, փղտացւոց դէմ գնաց և երկու հարիւր մարդ սպանեց։ Թագաւորը իւր Մեղքող աղջկան Դաւթին տուաւ։ Սաւուղը նկատեց, որ Աստուած Դաւթի հետն էր, աւելի ևս վախեցաւ և ցմահ թշնամացաւ նրա հետ։ Դաւթիթը թագաւորի բոլոր մարդկանցից էլ խելացի և իմաստուն էր. նրա անունը ժողովրդի մէջ յարգուած էր։

Բ. Սաւուղը բաց և արձակ խօսեց իւր որդի Յովնաթանի և բոլոր ծառաների հետ, որ Դաւթին սպանեն։ Յովնաթանն այս բանը յայտնեց Դաւթին և նա էլ թաքկացաւ։ Սրանից յետոյ Յովնաթանը յօգուտ Դաւթի խօսեց հօր հետ՝ և ասաց. «Յանցանք մի գործիր, հայր, Դաւթին արդար է քո առաջ. նա քեզ համար շատ է աշխատել—իւր անձը վտանգի ենթարկեց և սպանեց փղտացուն. Աստուած նրանով մեծ փրկութիւն արաւ բոլոր իսրայէլին»։ Սաւուղը լսեց իւր որդուն, երդուեց, որ Դաւթի մահն այլ ևս չի ցանկալ. Յովնաթանը յայտնեց Դաւթին այս բանը և նրան հոր մօտ բերաւ։ Դաւթիթը գարձեալ այնպէս էր թագաւորի հետ ինչպէս առաջ։

Նոր պատերազմ։ Դաւթիթը դուրս եկաւ փղտացւոց դէմ և մեծ հարուած տալով նրանց, փախցրեց։ Բայց երբ կրկին Սաւուղի մօտ եկաւ և քնար էր ածում, չար ոգին դարձեալ յայտնուեց թագաւորին—վեր առաւ գեղարդը և կամենում էր Դաւթին պատի հետ մեխել։ Նա դարձեալ խոլս տուաւ և գեղարդը մտաւ պատի մէջ։ Դաւթիթը միենոյն գիշերը փախաւ պալատից։ Սաւ

ւուղը մարդիկ ուղարկեց, որ գիշերով նրա տունը շրջապատեն և առաւօտեան սպանեն:

Մեղքողը լայտնեց Դաւթին եղելութիւնը և ասաց. «Եթէ դու այս գիշեր քո կեանքը չագատես, առաւօտեան կենդանի չես մնայ»: Կինը մարդուն պատուհանից վայր թողեց՝ Դաւթին անյայտացաւ: Յետոյ Մեղքողը պաճուճապատան շինեց. դրաւ անկողնում. գլուխը այծի մորթով պատեց և ծածկեց շորերով: Սաւուղը գեսպաններ ուղարկեց, որ Դաւթին բռնեն: Մեղքողը պատասխանեց. «Հիւանդ է»: Սաւուղը կըկին անգամ մարդ ուղարկեց և ասաց. «Մահճով ինձ մօտ բերէք, որ նրան սպանեմ»: Երբ գեսպաններն եկան, պաճուճապատանը անկողնում դրած էր: Դրողութիւնը թագաւորին յայտնեցին: Սաւուղն ասաց իւր աղջկան. «Ինչո՞ւ ինձ խաբեցիր և իմ թշնամուն փախցրիր»: Մեղքողը պատասխանեց. «Նա ինձ ասաց, եթէ չես թոյլ տալ, կսպանեմ»:

**Գ.** Դաւթիթը մի տեղից միւսը թափառելով՝ վերջապէս եկաւ Յովնաթանի մօտ և ասաց. «Ի՞նչ յանցանք եմ գործել քո հօր դէմ. ինչո՞ւ է իմ յետելիցն ընկել. իմ և մահուանս մէջ մի քայլ միայն հեռաւորութիւն կար»: Յովնաթանը պատասխանեց. «Դու չես մեռնի. ես այն կանեմ, ինչ որ քո՞ սիրտն է ուղում. ես կիսուեմ հօրս հետ և կհամոզեմ նրան: Դու թաք կացիր դաշտում մի քարի տակ. երեք օրից յետոյ քեզ իմաց կտամ, թէ բանը ինչպէս է վերջացել»:

Հետեւալ օրը Սաւուղը Յովնաթանի և Սքենների հետ սեղան էին նստած: Դաւթի մասին խօսք եղաւ: Յովնաթանը յօգուտ նրա խօսեց: Սաւուղը բարկացաւ և ասաց. «Խարդախ, ես գիտեմ, որ դու Յեսսէի որդու

հետ գաշնակից ես, ամօթ քեզ. քանի որ նա ապրում է երկրիս վրայ, քո թագաւորութիւնը հաստատ չէ, ուստի մարդ ուղարկիր նրա ետեւից և բերել տուր. նա պէտք է մեռնիս: Յովնաթանը պատասխանեց. «Ինչո՞ւ պիտի նա մեռնի, ի՞նչ է արել: Սաւուղը բարկացաւ և այս անգամ գեղարդը Յովնաթանի վրայ ձգեց՝ նրան սպանելու մտքով: Յովնաթանը նկատեց, որ հայրը վըճռել է Դաւթին սպանել, վեր կացաւ սեղանից. դուրս եկաւ և ամբողջ օրը ոչինչ չկերաւ ու մտածում էր միայն Դաւթի վրայ:

Առաւօտեան Յովնաթանը գաշտ գնաց և յալտնեց Դաւթին ամենը: Երկուսն ևս գրկեցին իրար և լաց էին լինում. Դաւթին աւելի էր արտասւում: Նրանք երդուեցին հաւատարիմ լինել թէ միմեանց և թէ իրանց յետագաներին: Յովնաթանն ասաց. «Դնա՛ խաղաղութեամբ, ինչ որ մենք Տիրոջ անունով երդուեցինք, թո՞ղ յաւիտեան անխախտ մնայ: Յովնաթանը յետ գարձաւ քաղաք, իսկ Դաւթը փախաւ, հեռացաւ:

«Յամենայն ժամանակի բարեկամք եղիցին քո, բայց եղբարք՝ ի վիշտս եղիցին քեզ պիտոյ»:

Բարեկամը ամենայն ժամանակ սիրող է, բայց եղբայրը նեղ օրուան համար է ծնուած:

«Որ առնէ մեղս, ծառայ է մեղաց»:

Ով որ մեղք է գործում, մեղքի ծառան է դառնում:

«Արթուն կացէք եւ աղօթս արարէք՝ զի մի անկանիցիք ի փորձութիւն»:

Արթուն կացէք և աղօթք արէք, որ փորձութեան մէջ չընկնէք»:

«Եթէ որոց սիրենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս»:

56.

ԳԱԼԻԹԻ ՄԵԾԱՀՈԴՈՒԹԻՒՆԸ ԴԵԳԻ ՍԱԼՈՒՂ

Ա. Սաւուղն իմացաւ, որ Դաւիթը Գագդայի անապատումն է: Առաւ երեք հազար զօրք ու զնաց Դաւթին և նրա մարդկերանցը փնտուելու: Այն անապատում մի այր կար: Սաւուղը ներս մտաւ այնտեղ, իսկ Դաւիթը իւր մարդկանց հետ արդէն այրի ներսումն էր: Դաւթի մարդկին ասացին. «Ահա, այս այն օրն է, երբ Աստուած թշնամուն քո ձեռն է մատնում»: Դաւիթը ծածուկ կտրեց Սաւուղի լոգիկի ծալը, բայց շուտով զղաց և ասաց իւր մարդկանցը. «Աստուած մի արասցէ, որ ես իմ ձեռը Տիրոջ օծեալի վրայ բարձրացնեմ»: Դաւիթն իւր մարդկանցը թոյլ չտուաւ թագաւորին սպանելու:

Սաւուղը երբ զարթեց, գուրս եկաւ այրից և սկըսաւ իւր ճանապարհը շարունակել: Նրանից յետոյ գուրս եկաւ Դաւիթն ու սկսաւ Սաւուղի յետեկից ձայն տալ. «Իմ տէր թագաւոր»: Սաւուղը յետ նայեց: Դաւիթն ասաց. «Այսօր Աստուած քեզ իմ ձեռը մատնեց այրի մէջ, բայց ես քո կեանքը խնայեցի. ես ասում էի ինքս ինձ—նա իմ տէրն է և Աստուծու օծեալը. տես, հայր իմ, ահա քո լոգիկի ծալըն իմ ձեռումն է: Թո՞ղ Աստուած դատաւոր լինի իմ և քո մէջ և ազատէ ինձ, բայց ես իմ ձեռը քեզ վրայ չեմ բարձրացնի»:

Սաւուղն սկսաւ բարձր ձայնով լաց լինել և ասել. «Դու ինձանից արդար ես. դու ինձ բարի հատուցիր, իսկ ես քեզ՝ չար. ինչ որ դու այսօր իմ դէմ ցոյց տուիր, Աստուած քեզ դրա փոխարէն բարի կհատուցանէ. ես

գիտեմ դու մի օր իսրայէլի թագաւորը պիտի դառնաս»: Սաւուղը տուն դարձաւ, իսկ Դաւիթը իւր մարդկանց հետ մնաց անապատում:

Բ. Լուր հասաւ Սաւուղին, որ Դաւիթը Զիփայի անապատումն է: Թագաւորը վերկացաւ, առաւ իւր հետ երեք հազար մարդ և սկսաւ Դաւթին որոնել ու բանակ ձգեց մի բլրի վրայ: Դաւիթն այս բանն իմանալուն պէս, եկաւ Սաւուղի բանակը: Նա ասաց իւր ընլուներին. «Ո՞վ կգայ ինձ հետ Սաւուղի բանակը մըտկերներին. «Ո՞վ կգայ ինձ հետ Սաւուղի բանակը մըտնելու»: Արեսսան պատասխանեց. «Ես»: Այսպէս Դաւիթը և Արեսսան գիշերով Սաւուղի բանակը մտան: Սաւուղը քնած էր պազպաջունի մէջ, նրա գեղարդը գլխի վերևում գետնի մէջն էր ցցած, իսկ Արենները և բոլոր զօրքը նրա շուրջը քնած էին: Արեսսան ասաց Դաւթին. «Աստուած այսօր թշնամուն քո ձեռն է մատնել, թո՞ղ ես գեղարդով այնպէս խփեմ, որ գետին մըտնի»: Իսկ Դաւիթը պատասխանեց Արեսսալին. «Մի խը փիր, ո՞վ է այն մարդը, որ Տիրոջ օծեալին խփէ և անպատիժ մնալ»: Դաւիթն ասաց. «Աստուած կենդանի է, նրա դատաստանը նա կլտրէ—կամ նրա վերջին օրը կը գայ և կմեռնի, կամ պատերազմի մէջ կմտնի և կստանուի: Վեր առ նրա գլխի վերևից գեղարդը, ջրի կուժը և գնանք»: Դաւիթը վեր առաւ գեղարդը և ջրի կուժը ու գնաց: Մէկը չեղաւ, որ տեսնէր կամ նկատէր—ամենքն էլ քնած էին:

Դաւիթը բարձրացաւ բլրի գագաթը և այնտեղից ձայն տուաւ զօրքին, Արեններին ու ասաց. «Չես լսում, Արեններ»: Արենները հարցրեց. «Ո՞վ ես դու»: Դաւիթը պատասխանեց. «Ինչո՞ւ քո թագաւորին չպաշտպանեցիր, գիշերով մէկը բանակը մտաւ և թագաւորի

գեղարդն ու ջրի կուժը տարաւ. թող ձեզնից մէկը գայ և տանէ»: Սաւուզը Դաւթի ձայնը ճանաչեց և ասաց. «Այդ քո՞ ձայնն է, որդի Դաւթի»: Դաւթի պատասխանեց. «Այն, իմ ձայնն է, իմ Տէր, ինչու ես քո ծառայի լետեիցն ընկել. ինչ վատ բան է արել քեզ»: Սաւուզը պատասխանեց. «Արի ինձ մօտ, որդեակ իմ Դաւթ, ես յանցաւոր եմ. ես քեզ այլ ևս չեմ հալածի, որովհետեւ դու այսօր իմ կեանքը թանկ ես գնահատել»: Դաւթի պատասխանեց. «Սատուած ամենին էլ իւր արդարութեան և հաւատարմութեան համար կվարձատրէ: Սատուած քեզ ալսօր իմ ձեռը մատնեց, բայց ես իմ սուրը նրա օծեալի վրայ չբարձրացրի: Եւ ինչպէս որ ալսօր քո անձը ես թանկ գնահատեցի, ալգուէս էլ Սատուած իմ անձը թանկ կգնահատէ—նա ինձ այս նեղութիւնից կազատէ»: Սաւուզն ասաց Դաւթին. «Օրհնեալ լինես, որդեակ իմ Դաւթ, գիտեմ, որ դու այդ բանը կանես և գլուխ կըերես»: Դրանից լետոյ Դաւթի իւր ճանապարհով գնաց, իսկ Սաւուզը տուն դարձաւ:

«Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բամի արարէք ատելեաց ձերոց, եւ աղօթս արարէք ի վերայ այնոցիկ, որ Ակեն զձեզ եւ հալածեն»:

Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարի արէք ձեզ ատողներին, աղօթք արէք ձեզ չարչարողների և հալածողների համար:

«Մի զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. քանզի գրեալ է. իմ է վրէժխնդրութիւն, ես հատուցից, ասէ Տէր».

Ձեր անձերի համար վրէժխնդրութիւն մի անէք, սիրելինէք, այլ թողէք բարկութիւնը, որովհետեւ գրած է. վրէժխնդրութեան իրաւունքն իմն է, ես պիտի հատուցանեմ:

Ինքն իւր հետ պատերազմելը ամենադժուար պատե-

րազմն է, ինքն իրան յաղթելը ամենապեղեցիկ յաղթութիւնն է: Այլ յաղթիր ի չարէ. այլ յաղթեա բարեաւն չարին: Մի յաղթութիր չարից, այլ բարութիւնով յաղթիր չարին:

57.

### ՍԱԻՈՒՂԻ ՄԱՀԸ

Սամուէլը մեռաւ: Բոլոր իսրայէլացիները սուզ արին նրա վրայ և թաղեցին Սրիմաթեմում:

Փղտացիները կրկին անգամ պատերազմ յայտնեցին իսրայէլացիներին: Իսրայէլացիները փախան և Գեղբուալերան մօտ մեծ ջարդ ստացան: Թշնամին շրջապատեց Սաւուզին և նրա որդւոց: Պատերազմը խիստ էր: Սաւուզը ծանր կերպով վիրաւորուեց:

Այն ժամանակ թագաւորն ասաց իւր կապարճակ-ըին. «Հան քո սուրը և սպանիր ինձ, որ փղտացիները չխոցուեն և չծաղրեն ինձ»: Կապարճակիրը հրաժարուեց: Սաւուզն ինքն առաւ իւր սուրը և ընկաւ նրա վրայ: Երբ կապարճակիրը տեսաւ, որ Սաւուզը մեռաւ, ինքն էլ իւր սրի վրայ ընկաւ և ինքնասպան եղաւ: Յովնամինը իւր երկու եղբայրները և հետն եղած բոլոր մարդիկն ընկան պատերազմի մէջ: Հետեւեալ օրը թշնամին եկաւ, որ անկեալներին մերկացնէ: Սաւուզի և նրա երեք որդոց գիտկները միասին գտան. կտրեցին թագաւորի գլուխը. հանեցին վրայից զէնքերը և իրանց երկիրն ուղարկեցին աւետիք տալու, իսկ Սաւուզի մարմինը նեթսանալի պարիսպներից կախ արին:

Երբ Յաքիսի ընակիչները լսեցին թագաւորի մահը, բոլոր պատերազմող մարդիկը վեր կացան. ամբողջ գիշեր ճանապարհ գնացին և թագաւորի ու նրա որ-

դու Յովնաթանի գիտակները Բեթսահնայի պարիսպներից հանելով քաղաք բերին և ալրեցին: Յետոյ վեր առան նրանց ոսկորները. մի ծառի տակ թաղեցին և եօթն օր պահք պահէեցին:

Սաւուղի մահուանից երեք օր յետոյ՝ մի ամաղեկացի հանդերձները պատառելով և գլխին հող ածելով Դաւթի մօտ եկաւ ու ասաց. «Փորայէլի բանակիցն եմ ազատուել. ժողովուրդը փախաւ. մեծ մասը պատերազմում ընկան. Սաւուղը և Յովնաթանը նմանապէս»: Դաւթիթն ասաց. «Ո՞րտեղից գիտես որ Սաւուղը և Յովնաթանն ընկան»: Ամաղեկացին պատասխանեց. «Գեղքուալի լեռների վրայ էի. Սաւուղը կոթնած էր նիզակին. թշնամու հեծելազօրը դիմում էր գէպի նա. Սաւուղն ասաց. սպանիր ինձ, ամեն կողմից վտանգով շըրջապատուած եմ: Մօտ գնացի. սպանեցի նրան. վեր առայ թագն ու ազարանջանը և ահա իմ տիրոջն եմ բերել»: Դաւթիթն ասաց. «Դու ի՞նչպէս վստահացար Տիրոջ օծեալի վրայ ձեռք բարձրացնել»: Այս ասաց և նշան արաւ իւր մարդկանց, որ սպանեն ամաղեկացուն և սպանեցին:

Դաւթիթն սկսաւ պատառել իւր զգեստը և սուգանել Սաւուղի, Յովնաթանի և բոլոր իսրայէլի ժողովրդի վրայ: Դաւթիթը ողբ յօրինեց իւր սիրելի Յովնաթանի վրայ և ասում էր. «Արձանացիր, իսրայէլ, ի վերայ բլրոցն ի բարձունս քո վիրաւորաց. զիարդանիկան զօրաւորքն: Մի պատմէք ի Գէթ, և մի տալք զայս աւետիս յելս Ասկաղոնի. զի մի երբէք ուրախ լիցին դստերք այլազգեացն, եւ մի յնծասցեն դստերք անթլփատիցն: Լերինք Գեղբուայ, մի իջցէ ի ձեզ յօղ, եւ մի եկեսցէ ի վերայ ձեր անձ-

ըեւ. Յովնաթան ի վերայ բարձանց քոց վիրաւոր: Յաւէ ինձ ի վերայ քո, եղբայր իմ Յովնաթան, գեղեցկացար ինձ յոյժ, զարմանալի եղեւ սէր քո ինձ քան զսէր կանանց»:

«Զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն հնձեսցէ»:

«Անօրէնք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»,

«Որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի»:

Ով որ կարծում է, թէ հաստատ կանգնած է, թող զգոյշ վնի, որ վայր չընկնի:

Գ. Դ Ա. Ի Ի Թ.

## 58.

ԴԱՒԹԻԹԸ ԴԱՌՆՈՒԽ Է ԹԱԳԱՀՈՐ

Դաւթիթը իւր մարդկանց հետ գնաց Քեբրոն քաղաքը: Յուղալի տան մարդիկը նրան թագաւոր օծեցին Յուղալի տան վրայ: Իսկ Սաւուղի զօրավար Աբենները նրա որդի Յերուսթէին թագաւորեցը միւս ցեղերի վրայ: Արա համար Դաւթի և Սաւուղի տան մէջ երկար ժամանակ պատերազմներ եղան: Դաւթի տունը քանի գնում, զօրանում էր, իսկ Սաւուղինը՝ տկարանում էր: Յերուսթէին քնած ժամանակ սպանեցին և գլուխը կտրելով Դաւթի մօտ բերին Քեբրոն քաղաքը: Դաւթիթը բարկացաւ և ասաց. «Դուք արդար մարդ էք սպանել» և հրամայեց մարդասպաններին մահու պատիժ տալ:

Իսրայէլի բոլոր ցեղերը Քեբրոն եկան և Դաւթին թագաւոր օծեցին ամբողջ իսրայէլի վրայ: Դաւթիթը ե-

բեսուն տարեկան էր, երբ թագաւոր եղաւ։ Նա կառավարեց 7<sup>1</sup> /, տարի Յուդայի ժողովուրդը, իսկ երեսուն տարի՝ ամբողջ իսրայէլը։

Թագաւորը գնաց դէպի Երուսաղէմ երուսացոց դէմ, որոնք Յուդայի երկրումն էին կենում։ Նրանք ասացին Դաւթին. «Դու չես կարող քաղաք մտնել, կոյրերը և կաղերը կարգելեն քեզ»։ Բայց Դաւթին առաւ քաղաքը, Սիօն լեառն ու նրա վրայի աշտարակը, ուր և բնակուեց։ Աշտարակն անուանեց Դաւթի քաղաք և այնտեղ մի փառաւոր տուն չինեց։

Սրանից յետոյ Սելով գնաց, մեծ հանդէսով—տապանակ ուխտին Սիօնի աշտարակը տեղափոխեցին և դըրին այն վրանի տակ, որ Դաւթին էր խփել տուել։ Թագաւորը ղետացինելից մի քանիսին պաշտօնեալ նըշանակեց ուխտի տապանակին ծառայելու, որոնք երգով և քնարով օրհնում էին և փառաբանում Աստուծուն։ Նմանապէս քահանաներ նշանակեց Ահարոնի ցեղից, որոնք ամենայն օր ողջակէզ էին մատուցանում։ Այսպէս նա աստուածալաշտութեան կարգը սահմանեց և ինքն էլ մի քանի երգեր՝ սաղմոսներ հեղինակեց։

Այս բանից յետոյ Դաւթիթը փղտացիների դէմ պատերազմի դուրս եկաւ և հալածեց նրանց։ Նոյնպէս մովաքացիների դէմ գնաց. յաղթեց և հարկատու դարձրեց. այլև ասորւոց և եղոմացոց յաղթեց։ Նրա թագաւորութիւնը ընդարձակուեց ծովից մինչև Եփրատ և Դամասկոսից մինչև Եգիպտոս։ Դաւթի անունը Հոչակուեց բոլոր երկրներում—Հեթանոսները դողում էին նրա անունը լսելիս։ Նա դատաւորներ և պաշտօնեանել նշանակեց երկրի մէջ. իւր բոլոր հպատակների համար իրաւունք և արդարութիւն ձեռք բերաւ։

Յետոյ Դաւթիթը հարցրեց. «Արդեօք Սաւուղի տանից որ և է ժառանգ չէ մնացել, որ ես Յովնաթանի սիրու համար ողորմութիւն անեմ նրան»։ «Յովնաթանից մի կաղ որդի է մնացել», ասեց նրա ծառաներից մինը։ Իսկուն Դաւթիթը մարդ ուղարկեց նրա յետեից և բերել տուաւ իւր մօտ։ Երբ Յովնաթանի որդի Մեմֆիթութէն Դաւթի առաջն եկաւ, երեսի վրայ ընկաւ։ Դաւթիթն ասաց նրան. «Մի վախիր, ես ուզում եմ քեզ ողորմութիւն անել՝ քո հայր Յովնաթանի սիրու համար. քեզ կտամ Սաւուղի բոլոր արտերը. դու ամեն օր իմ սեղանիցը կճաշես»։ Այսպէս չմոռացաւ Դաւթիթը իւր սիրելի Յովնաթանին։

«Թագաւոր հանձարեղ՝ իմաստութիւն ժողովրդոց»;  
Խելօք թագաւորը ժողովրդի համար բաղդաւորութիւն է։  
«Երանի քեզ, երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է»։

## 59.

## ԴԱՒԹԻԹԸ ՄԵՂԱՆՉՈՒՄ է

Մի անգամ Դաւթիթը իւր Յովաբ զօրավարին և ծառաներին ամոնացոց դէմ ուղարկեց, որ նրանց գըլխաւոր քաղաքը՝ Մաքաթաւը պաշարեն, իսկ ինքը մընաց Երուսաղէմում։ Մի օր թագաւորն անկողնից վերկացաւ և կտրի վրայ ման էր գալիս. յանկարծ տեսաւ մի գեղեցիկ կին՝ Բերսաբէ անունով, որը Ուրիալի կինն էր։ Ուրիան Յովաբի յետ պատերազմ էր գնացել։ Դաւթիթը Յովաբին մի նամակ գրեց, որով պատուիրում էր նրան և ասում. «Ուրիալին պատերազմի վտանգաւոր տեղն ուղարկիր. դու յետ դարձիր. թող նա սպանուի»։ Յովաբն էլ այդպէս արաւ։ Թշնամիները քաղաքից դուրս

եկան և սկսեցին Յովաբի դէմ պատերազմել։ Դաւթի ծառաներից ոմանք մահ ստացան. մեռաւ նմանապէս և Ուրիան։ Յովաբը մարդ ուղարկեց Դաւթի մօտ այդ լուրը նրան հաղորդելու։ Երբ Ուրիայի կինը ամուսնու մահուան բօթն առաւ, սկսաւ սուգ անել։ Սգի օրերն անցնելուց յետոյ, Դաւթիթը մարդ ուղարկեց կնոջ մօտ. տուն բերել տուաւ և իւր կինը դարձրեց։

Այս բանը Աստուծուն դուր չեկաւ, ուստի Նախան մարգարէին նրա մօտ ուղարկեց։ Սա թագաւորի մօտ եկաւ և հետևեալ առակը պատմեց։ «Մի քաղաքում կենում էին երկու մարդիկ—մինը հարուստ, իսկ միւսը՝ աղքատ։ Հարուստն ունէր շատ հտօնը և անդէաներ, իսկ աղքատը՝ միմիայն մի գառը։ Աղքատը շատ էր սիրում գառանը—իւր հետն էր ուտացնում, խմացնում և իրա գոգումն էլ քնացնում էր որդու նման։ Մի օր հարստի մօտ հիւր եկաւ։ Սա խնայեց իւր ոչխարներից կամ տաւարներից մինը մորթելու, այլ աղքատից նրա գառը խլեց և նրանով հիւրին պատուեց։ Դաւթիթը բարկացաւ այդ արարմունքի վրայ և ասաց Նախանին. «Այդ մարդը մահու պատժի արժանի է։» Այն ժամանակ Նախանն ասաց Դաւթին. «Այդ մարդը գու ես—դու խլեցիր Ուրիայի կնոջը, իրան էլ ամովնացւոց սրով սպանել տուիր։ Դրա համար Աստուած այսպէս է ասում — ես քեզ Սաւուղի ձեռից ազատեցի. Յուղայի և Խորայէլի տան վրայ թագաւոր նշանակեցի. ինչու դու իմ խօսքը արհամարհեցիր և այսպիսի չարութիւն գործեցիր։ Քո տանից քո դէմ անբաղտութիւն կհանեմ. գու ծածուկ չարութիւն գործեցիր, իսկ ես քեզ յալտնի կերպով կպատժեմ ամբողջ իսրայէլի և արեգական առաջ։»

Դաւթիթն ասաց Նախանին. «Ես մեղաւոր եմ Աստուծու առաջ։» ասաց ու գետնի վրայ ընկաւ և աղօթում էր. «Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, ըստ բազում գթութեան քում քաւեա գանօրէնութիւնս իմ։ Սիրտ սուրբ հաստատեա լիս, Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։ Մի ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց և գնոգի քո սուրբ մի հաներ լինէն։» Նախանն ասաց. «Վեր կաց. Աստուած ներեց քո յանցանքը, դու չես մեռնի։» Մարգարէն տուն գնաց. Դրանից յետոյ Բերսարէն մի որդի ունեցաւ, որին Սողոմոն անուանեց. Աստուած նրան սիրում էր. Դաւթիթը Նախանին յանձնեց Սողոմոնի կըրթութիւնը և սա էլ նրա անունը Յեղեգի դրաւ։

«Որ ծածկէ գամբարշտութիւն իւր՝ ոչ յաջողեսցի՝ իսկ որպատմէ եւ յանդիմանէ, սիրելի եղիցի։»

## 60.

## ԱԲԻՍՈՂՈՄ

Ա. Խորայէլացւոց ազդի մէջ Դաւթի որդի Աքիսողոմի նման գեղեցիկ մարդ չկար—ոտքից մինչև գուխը ոչ մի պակասութիւն չունէր։ Աքիսողոմի ամենագեղեցիկ զարդարանքը նրա գլխի մազերն էին։ Սա ձեռք բերաւ կառքեր և ձիեր—իսուն հատ սուրհանդակ ունէր։ Առաւոտները վաղ վեր էր կենում և կանգնում էր քաղաքի գրանը։ Թագաւորի մօտ գանգատի եկողներին առում էր Աքիսողոմը. «Դու արդար ես, բայց ով կայ այնտեղ, որ քեզ պաշտպանէ։ Երանի ինձ դատաւոր նշանակէին այս երկրի վրայ, ես գիտէի թէ ինչպէս կպաշտառացի։»

պանէի ամենքի իրաւունքը»: Եթէ մինը խոնարհում էր նրան երկրպագութիւն տալու, ձեռից բռնում, բարձրացնում էր և համբուրում: Այս ձեռվ Աբիսողոմը գըրաւեց իսրայէլացիների որդւոց սիրտը:

Մի անգամ Աբիսողոմն ասաց Դաւթին. «Թոյլ տաւը ինձ, հայր, որ Քերը ուխտ գնամ և Տիրոջը խոստացած զոհս մատուցանեմ»: Թագաւորն ասաց. «Գնա՛ խաղողութեամբ»: Աբիսողոմն առաջուց մարդ էր ուղարկել իսրայէլի բոլոր քաղաքներն ասելու. «Երբ փողի ձայնը լսէք, ասացէք Աբիսողոմը Քերը ութմ թագաւոր է դաքանել»: Աբիսողոմը Քերը ու գնաց. դաւաճանութիւնը քանի գնում, գօրանում էր. մեծ բազմութիւն էր հետեւում նրան:

Երբ այս բանը Դաւթին իմաց տուին, Երուսաղէմում եղող ծառաներին ասաց. «Ա, եր կացէք փախչենք Աբիսողոմի երեսից. շտապեցէք, մի գուցէ մեզ հասնի և կոտորէ ու քաղաքն էլ որի կերակուր դարձնէ»: Թագաւորը քաղաքից ոտով փախաւ իւր ծառաների հետնրան հետեւում էր մեծ բազմութիւն և զառն կերպով բարձրածայն լաց էին լինում: Դաւթին անցաւ Կեդրոնի վտակն և լալով բարձրանում էր Ձիթենեաց լեռորչ նա գնում էր զլուխը ծածկած և ոտաբորիկ: Սաւուղեանից մի մարդ՝ Սեմէի անունով Դաւթին պատահեց. անիծում էր. քարեր էր արձակում վրան և ասում. «Թո՛ւրագութիւն էր արիւնահեղ. Սաւուղի տան արիւնը Աստուածածքն է զարձրել. քո թագաւորութիւնը յանձնեց քո որդի Աբիսողոմին. այժմ գու ես անբաղտութեան մէջ»: Արեսսան բարկացաւ և ասաց. «Ի՞նչպէս է վատահանում նա իմ տէր թագաւորին այսպէս անարգել, իրաւունք տաւը, նրա զլուխը կտրեմ»: Թագաւորն ասաց. «Թո՛ղ, ալդ Տիրով

վամքն է: Ահա հարազատ որդիս իմ յետեկիցն է ընկել, որոնում է իմ անձը, ինչ զարմանալու բան կայ, որ օտար Սեմէին ալդպէս է վարւում, գուցէ Աստուած այսպիսով տեսնէ իմ նեղութիւնը»: Այսպէս էր շարունակում Դաւթին իւր ճանապարհը: Աբիսողոմը մտաւ Երուսաղէմ և առաւ այն բոլորն, ինչ որ իւր հօրն էր պատկանում:

Բ. Սրանից յետոյ Աբիսողոմն իւր մարդկանց հետ Յարդանանն անցաւ՝ հօրը հալածելու համար: Դաւթիթը իւր մօտ եղած ժողովուրդը կարգադրեց և ասաց. «Ես ես ձեզ հետ կամենում եմ թշնամու առաջ գուրս գալ»: Ժողովուրդը պատասխանեց. «Դու մի արի. քո կեանքը մեզ համար տասն հազար մարդու հաւասար է»: Ժողովուրդը գնաց, իսկ Դաւթիթը Յովաբին, Աբեսսամին և բոլոր գլխաւորներին պատուիրեց ու ասաց. «Իմ սիրու համար խնայեցէք Աբիսողոմին»: Երբ պատերազմի դաշտը գուրս եկան, Եփրեմի անտառում իրար հանդիպեցին: Պատերազմն արիւնահեղ էր – իսրայէլի ժողովուրդը մեծ հարուած ստացաւ Դաւթի ծառաներից: Աբիսողոմը ջորու վրայ նստած փախաւ և երբ մի մեծ կաղնու թու ոստերի տակովն անցնում էր, մազերը ճիւղելի մէջ խճառեցան, մնաց կախ ընկած ու ճօճւում էր երկնքի ու երկրի մէջ, իսկ ջորին անցաւ, գնաց: Երբ այս բանը Յովաբին իմաց տուին, վեր առաւ երեք գեղարդ և խրեց Աբիսողոմի սիրտը: Յովաբի գինակիրները շըջապատեցին նրան. սպանեցին. ձգեցին մի փոսի մէջ և վրան քարակոյտ կազմեցին:

Աւետաբեր եկաւ Դաւթի մօտ պատերազմի դաշտից և յայտնեց նրան յաղթութեան լուրը: Դաւթիթը հարցըց. «Աբիսողոմ պատահին մղջ է»: Երբ տեղեկացաւ, ախրեց, լաց էր լինում և ասում. «Որդեակ իմ Աբիսո-

դոմ, Արքասողոմ որդեակ իմ, Երանի թէ ես մեռնէի քո  
փոխարէն, ով որդեակ իմ Արքասողոմ»:

Յուղայի տան մարդկեց Դաւթի մօտ ուղարկեցին  
և ասացին. «Յետ արի վերստին դու էլ, քո ծա-  
ռաներն էլ»: Նրանք Դաւթին դիմաւորելու համար մին-  
չև Յորդանան գնացին: Սեմէին ևս եկաւ դրանց հետ-  
թագաւորի ոտներն էր ընկնում և ասում. «Մի լիշիր իմ  
յանցանքը, ես խոստովանում եմ սխալս»: Արեսսան ա-  
սաց. «Նա պէտքէ մեռնի, Աստուծու օծեալին անիծել  
է»: Դաւիթը պատասխանեց. «Այսօր ոչ ոք չպիտի մեռ-  
նի, երբ ես իսրայէլի վրայ թագաւոր եմ»: Դաւիթը եր-  
գուեց Սեմէին և ասաց: «Դու չես մեռնի»: Դաւիթը  
դարձաւ Երուսաղէմ:

«Արդեամք եւ բանիւք պատուեամ զհայր քո, զի եկեսցէ ի  
վերայ քո օրհնութիւն ի նմանէ: Զի օրհնութիւն հօր հաստա-  
տէ զտունս որդւոյ, եւ անէծք մօր՝ լիեն զհմունս»:

Պատուիր քո հօրը՝ թէ գործով և թէ խօսքով, որ նրա օրհ-  
նութիւնը քո վրայ դայ: Որովհետեւ հօր օրհնութիւնը հաստա-  
տումէ որդւոց տունը, իսկ մօր անէծքը՝ հիմքից կործանումէ:

«Որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից լինի՝ ի  
բարիս»:

«Անօրէնք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պա-  
կասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»:

### ԴԱՎԻԹԻ ՄԱՀԻ

Երբ Դաւիթը ծերացաւ, Երուսաղէմ ժողովեց բո-  
լոր իշխաններին, դատաւորներին և զինուորականներին  
ու ասաց. «Ժողովներդ, ինձ լսիր, ես մտադիր էի Աս-  
տուծու համար մի տուն շինել, որպէսզի ուխտի տա-

պանակն այնտեղ դնեմ: Բայց Աստուած իւր ծառայ  
Նաթանի ձեռով ասաց—ինձ համար գու չես կարող  
տուն շինել. զինուոր մարդ ես. շատերի արիւնն ես  
թափել: Երբ կմեռնես, քո որդի Սողոմոնը քեզ կւաջոր-  
դէ. նա պիտի ինձ համար մի տուն կառուցանէ. ես նը-  
րա թագաւորութիւնը յաւիտեան պիտի հաստատեմ: Ուրեմն Աստուած բոլոր որդւոցս միջից Սողոմոնին ընտ-  
րեց իմ գահին ժառանգ: Աստուծու պատուիրանները  
պահեցէք, որ այս գեղեցիկ երկիրը ժառանգէք և ձեր որդ-  
ւոց ժառանգել տաք: Իսկ դու, որդեակ իմ Սողոմոն,  
ճանաչիր քո հօր Աստուծուն և ծառայիր նրան կատա-  
րեալ սրտով և յօժար կամքով. եթէ նրան որոնես, կը-  
գըտնես, իսկ եթէ մոռանաս, նա էլ քեզ կմոռանալ:  
Աստուած քեզ ընտրեց իւր համար տուն կառուցանող:  
Ես գնում եմ այնտեղ, ուր ամենքն են գնում, բայց  
դու միխիթարուիր, մի վախենար, իմ Աստուածը քեզ  
հետ կլինի:

Դաւիթ թագաւորը ցոյց տուաւ իւր որդի Սողո-  
մոնին տաճարի նախագիծը՝ թէ ինչ ձեռվ պիտի շինէ  
և յետոյ շարունակեց ժողովրդեան հետ խօսել. «Աս-  
տուծու տուն կառուցաննելը շատ մեծ գործ է, ես իմ  
կարողութեան չափ ոսկի, արծաթ, թանկագին քարեր,  
երկաթ, փայտ և մարմար եմ ժողովել: Բայց դրանից  
տալիս եմ 3,000 տաղանդ ոսկի և 7,000 տաղանդ արծաթ.  
իսկ ձեզնաից ով է յօժար Աստուծու տան համար կամա-  
ւոր նուէր տալու»: Իշխանները, գատաւորները, ժողո-  
վուրդը ամենքն էլ իրանց կարողութեան չափ նուէր-  
ներ արին Աստուծու տան համար: Ամենքն էլ ազատ  
կամքով նուիրեցին: Դաւիթը շատ ուրախացաւ. նա  
փառաբանում էր Աստուծուն և ասում. «Օք հնեցէք

ձեր Տէր Աստուծու անունը»: Բոլոր ժողովուրդն էլ օրհնեց Աստուծու անունն և խոնարհելով երկրպագութիւն էին տալիս, աղօթում և ողջակէզ մատուցանում: Քահանան էլ վեր առաւ իւղի եղջիւրը, Սողոմոնին թագաւոր օծեց. փողերը փչում էին. իսկ ժողովուրդն աղաղակում էր. «Յաջողութիւն Սողոմոն թագաւորին»:

Նատ չանցաւ որ հին թագաւորը մեռաւ և թաղւեց Դաւթի քաղաքում: Նա թագաւորեց իսրայէլի վրայ քառասուն տարի. նրան յաջորդեց իւր որդի Սողոմոնը:

«Երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն դործք իւրեանց չոքան զհետ նոցա»:

Երանի... որովհետև նրանք իրանց աշխատանքից հանգստացան. նրանց դործերն իրանց հետեւում են:

## Ի. ՍՈՂՈՄՈՆ

62.

### ՍՈՂՈՄՈՆ ԹԱԴԱՒՈՐԸ

Ա. Սողոմոնը սիրում էր Աստուծուն և իւր հայր Դանապարհովն էր գնում: Երբ թագաւորը Գաբաւոնում զոհ էր մատուցանում, Աստուած գիշերով երացում երեւաց և ասաց. «Խնդրիր ինձնից ինչ որ կամենում ես»: Սողոմոնը պատասխանեց. «Իմ Տէր Աստուած, դու թագաւորեցրիր քո ծառային իմ հայր Դաւթի տեղը. նա քո ճանապարհով կեանք վարեց. ես մի փոքր տղայ եմ, չգիտեմ ոչ բարին և ոչ չարը. տո՛ւր քո ծառային իմաստուն սիրտ՝ քո ժողովուրդը դատելու

և կարողութիւն՝ լաւը վատից որոշելու»: Աստուած այս խօսքերը հաւանեց: Նա ասաց. «Որովհետև դու այդ խնդրեցիր և ոչ երկար կեանք և հարստութիւն, ահա տալիս եմ քեզ այնպիսի իմաստուն սիրտ, որ ոչ քեզնից առաջ եղել է և ոչ քեզնից յետոյ կլինի: Բայց դրանից ես տալիս եմ քեզ այն, ինչ որ չխնդրեցիր, այն է հարստութիւն և փառք: Եթէ դու իմ ճանապարհով գնաս և իմ պատուիրանները պահես, ինչպէս քո հայր Դաւթիթը, քեզ երկար կեանք ևս կտամ»:

Բ. Այդ օրերում երկու կանայք թագաւորի մօտ գանգատի եկան: Կանանցից մինն ասաց. «Ո՛չ, տէր իմ, ես և այս կինը մի տան մէջ ենք կենում: Ես մի որդի ծնայ: Երեք օրից յետոյ նա ևս մի որդի ունեցաւ: Մենք միայնակ էինք – բացի մեզնից ոչ ոք չկար այն տան մէջ: Այս կնոջ որդին գիշերը մեռաւ, որովհետև վրան պառկեց ու խեզզեց: Կէս գիշերին վեր կացաւ, առաւ իմ որդուն գրկեցս և իւր խեզզուած որդուն իմ ծոցը դրաւ: Առաւօտը վեր կացալ տղային ծիծ տալու, տեսայ որ մեռած էր և ցերեկն ուշագրութեամբ նայելով՝ գտայ որ իմ որդին չէր»: Իսկ միւս կինն ասաց. «Այդպէս չէ, կենդանին իմ տղան է, մեռածը քոնն »: Առաջինը պատասխանեց. «Ո՛չ, մեռածը քո տղան է, իսկ կենդանին իմն է»: Այսպէս էին խօսում նրանք թագաւորի առաջ:

Այն ժամանակ թագաւորն ասաց. «Սուր բերէք ինձ մօտ»: Եւ երբ սուրը բերին, Սողոմոնն ասաց. «Կէս արէք կենդանի երեխալին – կէսը տուէք մինին, կէսը՝ միւսին»: Կանանցից մինն ասաց թագաւորին. «Մի սպանէք»: Իսկ միւսն ասում էր. «Ո՛չ ինձ լինի, ոչ քեզ, թո՛ղ կտրեն»: Թագաւորն ասաց. «Առաջին կնոջը տու-

Էք կենդանի երեխալին, որովհետև նա է հարազատ մայրը։ Այս դատաստանը յայտնի եղաւ բոլոր իսրայէլի մէջ, նրա մէջ դատաստան անելու աստուածալին իմաստութիւն նկատեցին։

Գ. Սողոմոնը թագաւորում էր այն բոլոր երկրների վրայ, որ իւր հայրն էր նուաճել։ Նրան ընծաներ էին բերում և ծառայում էին որպէս հասարակ մարդիկ՝ մինչեւ իրանց մահը։

Սողոմոնն ունէր 40,000 կառքի ձի և 12,000 ձիաւոր։ Նրա գործակալներն ամենայն բան հոգում էին, ոչինչ թերութիւն չկար։ Պալատում իւրաքանչիւր օր գործ էր ածւում 90 քոռ ալիւր, 30 տաւար և 100 ոչխար։

Երկրի մէջ խաղաղութիւն էր տիրապետում Սողոմոնի կենդանութեան ժամանակ—Յուգալի և Խորայէլի տները հանգիստ կեանք էին վարում։ իւրաքանչիւրն իրենց որթի և թգենու տակ։

Աստուած Սողոմոնին մեծ իմաստութիւն տուաւ։ Նա բոլոր մարդկանցից էլ իմաստուն էր։ Նրա անունը Հեթանոսների մէջ տարածուած էր։ Սողոմոնը 3,000 առակ ասաց, իսկ նրա երգած երգերի թիւը 1,005 է։ Երկրիս բոլոր ծալըերից մարդիկ գալիս էին Սողոմոնի իմաստութիւնը լսելու։

«Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լու մեզ»։

Սա մի համարձակութիւն (ուրախութիւն) է մեզ համար, որովհետեւ ինչ որ նրա կամքի համաձայն խնդրելու լինենք, կը լու մեզ։

«Սկիզբն զգօնութեան երկիւղ Տեառն։

Իմաստութեան սկիզբը Աստուածու երկիւղն է։

63.

ՍՈՂՈՄՈՆԻ ՏԱճԱՐԻ ՃԻՆՈՒԹԻՒՆԸ

Ա. Սողոմոնը մարդ ուղարկեց Տիւրոսի Քիրամ թագաւորին ասելու. «Դու գիտես, որ իմ հայր Դաւիթը պատերազմների պատճառով չկարողացաւ իւր Տէր Աստուածու համար՝ նրա անուան վայել մի տուն շինել։ Այժմ իմ Տէր Աստուածն ինձ խաղաղութիւն է պարգևել և ահա մտադիր եմ մի տուն շինել նրա համար։ Արդ՝ հրաման տո՛ւր իմ ծառաներին Լիբանանու անտառներից եղակններ կտրել. դրա վոխարէն ես կվճարեմ ցորեն, զինի և իւղ։ Քիրամը շատ ուրախացաւ և մարդ ուղարկեց Սողոմոնին՝ ասելով. «Ամենայն բան քոցանկութեան համաձայն կկատարեմ»։ Երկու թագաւորները դաշը կտպեցին իրար հետ։ Սողոմոնը 30,000 մարդ ուղարկեց Լիբանան յաջորդաբար՝ ամիսը 10,000։ Նա 70,000 մշակ, 80,000 քարհատ էր բանեցնում, իսկ 3,500 իշխաններ և վերակացուներ էին նշանակուած գործի վըրայ։ Սոքա բոլորն էլ տաշում, պատրաստում էին քարերը Աստուածու տան շինութեան համար։

Սողոմոնի թագաւորութեան չորրորդ տարումը Մորէա լերան վրայ տաճարի հիմքը դրուեց—60 ոտնաչափ երկայնութիւն, 20 ոտնաչափ լայնութիւն և 30 ոտնաչափ բարձրութիւն ունէր։ Տունը ներսից շինուած էր եղենու փայտով, իսկ յատակը՝ կաղնու տախտակով։ Տախտակած տունը ներսից մաքուր ոսկեով պատեց, յատակը ոսկեալ թիթեղով—ամբողջ տունը ոսկեով էր պատած։

Տաճարը բաժանուած էր երկուսի—սրբութիւն և սրբութիւն սրբոց։ Տապանակ ուխտին այստեղ պէտք է

գնէին։ Տաճարի շուրջը Սողոմոնը երկու գաւիթ շինեց—  
արտաքինը ժողովրդի համար, իսկ ներքինը՝ քահանա-  
ների։ Այստեղ էր դրած զոհի սեղանը և պղնձէ ծովը  
քահանալից լուացուելու համար։ Եօթն տարուց յետոյ  
տաճարի շինութիւնն աւարտուեց։

Բ. Երբ շինութիւնը վերջացրեց Սողոմոնը, Երու-  
սաղէմ կանչեց երկրի ծերերին, իշխաններին և ժողովը-  
դին։ Քահանաներն ուխտի տապանակը և սրբազն ա-  
նօթները Սիօնի վրայից տաճարը տեղափոխեցին։

Սողոմոնը և ժողովուրդը հետեւում էին քահանանե-  
րին։ Երբ ուխտի տապանակը սրբութիւն սրբոցում դրին,  
Ժագաւորն օրհնեց իսրայէլի ժողովրդին։ Հոքեց Տիրոջ  
սեղանի առաջ. ձեռները երկինք բարձրացրեց և ասաց.  
«Տէր, իսրայէլի Աստուած, երկինքը և երկնից երկինքը  
բաւական չեն քեզ պարունակելու, ուր մնաց այս տու-  
նը, որ ես քո անուան համար կառուցի։ Լսիր քո ծա-  
ռայի աղօթքը։ Լսիր այստեղ աղօթող քո իսրայէլ ժո-  
ղովրդի աղօթքը։ ողորմած եղիր դէպի նա նեղութեան  
ժամանակ, որպէսզի նրանք միշտ երկիւղած լինին և  
բնակուեն այն երկրում, որ դու մեր պապերին ես  
տուել։ Եթէ մի այլազգի՝ հեռու երկրից գայ այս տա-  
ճարում աղօթելու, նրան ես լսիր, Տէր Աստուած, որ-  
պէսզի ամենքը ճանաչեն քեզ և երկիւղ ունենան քեզ-  
նից՝ քո իսրայէլ ժողովրդի նման։ Եթէ քո ժողովուրդը  
քո դէմ մեղանչի և ուղղուած սրտով քեզ գառնայ, նը-  
րա խնդրուածը մի մերժիր»։

Աղօթքը վերջացնելուց յետոյ՝ Սողոմոնը վեր կա-  
ցաւ սեղանի առաջից և օրհնեց ժողովրդին։ Թագաւո-  
րըն ժողովրդի հետ միասին շնորհակալութեան զոհ բե-  
րին Աստուծուն։ Սողոմոնը եօթն օր և եօթը գիշեր

տօն կատարեց, իսկ ութերորդ օրը արձակեց ժողովրդին։  
Ամենքն օրհնում էին թագաւորին և տուն գարձան  
ուրախ սրտով՝ փառաբանելով Աստուծուն անունը, որ  
իսրայէլի ժողովրդին այդպիսի մեծ բարութիւն է արել։

Տէր սիրեցի զվայելութիւն տան քո, եւ զտեղի յարկի  
փառաց քոց։

Աստուած, ես սիրեցի քո տան գեղեցկութիւնը և քո փառ-  
քի բնակուելու տեղը։

«Ճնկը ցիս, որդեակ, զսիրտ քո, եւ աչք քո ճանապարհաց  
իմոց սպասեցեն։»

Սիրտգ ինձ տնկը, որդեակ, թող քո աչքերն իմ ճանա-  
պարհին սպասեն։

#### 64.

ՍՈՂՈՄՈՆԻ ՓԱՌԻՔԸ, ԸՆԿՆԻԼԸ ԵՒ ՄԱՀԸ

Ա. Սողոմոնը եղենու փայտից իւր համար մի տուն  
շինեց, որի երկարութիւնը 100, լայնութիւնը 50 և  
բարձրութիւնը 30 կանգուն էր։ Այս տան շինութիւնը  
30 տարի քաշեց. նրա շուրջը եղենու փայտից սրահ-  
ներ շինեց։ Ամուսնացաւ Փարաւոնի աղջկայ հետ. նրա  
համար ևս մի հոյակալ տուն շինել տուաւ քարից և  
եղենու փայտից։ Եինեց նաև մի սրահ, ուր գատում  
էր ժողովրդին։ Բացի դրանցից շինել տուաւ իւր հա-  
մար մի փղոսկրեայ գահ՝ պատած աղնիւ ոսկեով։ Թա-  
գաւորի խմելու բաժակները, ամանեղէնները ոսկուց  
էին. արծաթը լարգի չէր։ Սողոմոնը նաւեր ևս շինել  
տուաւ. Քիրամը նրա համար լաւ նաւաստիներ ուղարկեց,  
որոնք Սողոմոնի ծառաների հետ հեռի երկիրներ էին նա-  
ւում և նրա համար ոսկի, արծաթ, փղոսկր, կապիկ և սիրա-

մարգներ էին բերում: Բացի սրանցից բերում էին թագաւորի համար, իբրև ընծալ, ոսկեալ և արծաթեալ ամաններ, հանդերձներ, զէնքեր, նժոյգներ և ջորիներ: Այսպէս Սողոմոնն իւր հարստութիւնով և իմաստութիւնով առաջին թագաւորը դարձաւ աշխարհիս մէջ, այնպէս որ ամենքը ցանկանում էին նրան տեսնել և նրա իմաստութիւնը լսել:

Սարալի թագուհին, որ Արաբիայումն էր բնակում, բազմաթիւ հետևորդներով Սողոմոնի տեսութեան եկաւ՝ ուղտերը բարձած խնկով, ոսկեով և ազնիւ քարերով: Թագուհին առաջարկեց այն բոլոր հարցումները, որոնք նա իւր սրտումն ունէր և բոլորի մեկնութիւնն էլ ստացաւ. մութն՝ էլ ոչինչ չմնաց նրա համար: Երբ թագուհին լսեց Սողոմոնի իմաստութիւնը և տեսաւ նրա կառուցած տունը, ծառաները և բոլոր փառահեղութիւնները, այլ ևս չկարողացաւ համբերել, ուստի ասաց. «Ինչ որ ես իմ երկրի մէջ լըսել էի քո իմաստութեան մասին՝ բոլորն էլ ուղիղ են: Այս բաներին ես չէի կամենում հաւատալ, դրա համար էլ եկալ աչքովս տեսնելու. այժմ նկատում եմ, որ իմ տեսածի կէսն էլ չեն պատմել ինձ. բազդաւոր են քո ծառաները, որոնք միշտ քո առաջն են կանգնում և քո իմաստութիւնը լսում: Յետոյ տուաւ Սողոմոնին 110 տաղանդ ոսկի, նմանապէս խունկ և պատուական քարեր: Սողոմոնն էլ տուաւ թագուհուն այն բաները. ինչ որ նա ցանկանում էր և բացի դրանից ուրիշ շատ ընծաներ: Թագուհին դարձաւ իւր երկիրը:

Բ. Սողոմոն թագաւորն ունէր 700 օտարազգի կանալք: Ծերութեան ժամանակ կանալքը Սողոմոնի սիրտը դէպի օտար աստուածները դարձրին, այնպէս որ

նրա սիրտն ամբողջապէս ճշմարիտ Աստուծուն չէր նըւկրուած: Իւր օտարազգի կանանց համար Երուսաղէմում տաճարներ շինել տուաւ, ուր կուռքերին զոհեր էին մատուցանում և խունկ ծխում: Այս բանը դուք չեկաւ Աստուծուն, նա յայտնեց Սողոմոնին ասելով. «Որովհետեւ դու իմ ուխտը և իմ պատուիրաները չպահցիր, ուստի քո թագաւորսւթիւնը կխլեմ քեզնից, ոչ թէ կենդանութեանդ ժամանակ, այլ՝ քո որդու և նըրանից չեմ խլի ամբողջ թագաւորսւթիւնը, այլ մի մասը քո հայր Դաւթի սիրու համար կթողնեմ»:

Սողոմոնի ծառաներից մինը՝ Յերոբովսւմ անունով, ապատամբուեց թագաւորի գէմ: Սա մի քաջ և պատերազմող մարդ էր: Սողոմոնը հրամալեց, որ սպանեն նրան, բայց Եգիպտոս փախաւ: Սողոմոնը 40 տարի թագաւորեց իսրայէլի ժողովրդի վրայ և յետոյ մեռաւ ու թագուեց Դաւթի քաղաքում: Նրա որդի Ոռբովամը թագաւորեց հօր տեղը:

«Աշխարհս անցանէ՝ եւ ցանկութիւն. իսկ որ առնէ զկամը Աստուծոյ՝ մնայ ի յաւիտեան»

Աշխարհս իւր ցանկութիւններով անցուորական է, իսկ ու որ Աստուծու կամքովն է շարժուում, նա յաւիտեանական է մոռւմ:

Ե. ԹԱԳԱԻՌՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՒ ՎԵՐՋԸ

65.

ՅԵՐՈԲՈՎԱՄ ԵՒ ՌՈԲՈՎԱՄ

Ա. Ոռբովամը Սիւքէմ գնաց, ամբողջ իսրայէլն այնտեղ էր հաւաքուել—կամենում էին նրան թագաւոր օծել: Ոմանք էլ մարդ էին ուղարկել Յերոբովամին կան-

չելու։ Յերօբովամը և ամբողջ իսրայէլն ասացին Ռոբովամին. «Քո հայրը մեր լուծը շատ ծանրացրեց. մենք այն պայմանով քեզ հպատակ կմնանք, եթէ մեր լուծը թեթևացնես»։ Որովամը խորհուրդ արաւ ծերերի հետ, որոնք նրա հօր խորհրդականներն էին և ասաց. «Դնչ խորհուրդ էք տալիս»։ Նրանք պատասխանեցին. «Եթէ դու այժմ այս ժողովրդին լսես, բարի խոստումներ անես, քանի որ կենդանի ես՝ քեզ հաւատարմութեամբ կը ծառայեն»։ Որովամը մերժեց ծերերի խորհուրդը և իւր հասակակից ընկերների հետ խորհուրդ կազմեց։ Նրանք այսպէս խորհուրդ տուին. «Դու ժողովրդին ալպէս պատասխանիր՝ իմ հայրը ձեզ խարազանով էր պատժում, իսկ ես՝ մտրակով և կարիճով պէտք է պատժեմ»։

Ինչպէս իւր երիտասարդ ընկերներն էին խորհուրդ տուել, այնպէս էլ պատասխան տուաւ Յերօբովամին։ Երբ ժողովուրդը նկատեց, որ թագաւորն իրան չի ուզում լսել, ասաց. «Մենք ինչ գործ ունենք Դաւթի տան հետ. թող իսրայէլը իւր վրանները դառնար։ Նրանք տուն դարձան և Յերօբովամին թագաւոր օծեցին։ Այսպէս իսրայէլը բաժանուեց Որովամից։ Սյլ ևս ոչ ոք չէր լսում Դաւթի տան թագաւորին՝ բացի Բենիամինի ցեղից»։

Բ. Յերօբովամն ամբացրեց Սիւքէմը և իրան մայրաքաղաքը դարձրեց։ Նա ասում էր. «Եթէ իմ ժողորդը Երուսաղէմ գնայ զոհ մատուցանելու, նրա սիրտը կհակուի դէպի Որովամը՝ Յուղալի տան թագաւորը և ինձնից կհեռանայ»։ Թագաւորը Երկու հաս ոսկէ հորթեր շինել տուաւ ու ասաց ժողովրդին. «Բաւական է ինչքան Երուսաղէմ գնացիք, ահա ձեր աստու-

ածները, որոնք ձեզ Եղիպտոսից ազատեցին»։ Հորթերից մինը Բեթէլում, իսկ միւսը Դանում նշանակեց։ Ժողովուրդը յաճախում էր թէ մինի և թէ միւսի մօտ։ Թագաւորը մի բլի վրայ մեհեան շինեց և քրմեր նշանակեց ապահոն մատուցանելու, բայց ոչ Ղեկի ցեղից։ Տօն կատարել տուաւ Բեթէլում, ինչպէս սովոր էին Յուղալի Երկրում։ Ժողովուրդը պահէր էր պահում և ծխում հորթի առաջ։ Սրա համար ևս Աստուած մարգարէի բերանով յայտնեց նրան՝ ասելով. «Քո տունը կանբազզացնեմ և քո թագաւորութիւնը կջնջեմ իսպառ»։

Յուղալի տունը ևս սկսեց Աստուծու դէմ չարութիւններ գործել—նրանք բարձրաւանդակների վրա աստուածներ և անտառի կուռքեր շինեցին. բարձր բըլուրների վրայ և կանաչ ծառերի տակ գործումէին հեթանոսների բոլոր չարութիւնները։ Եղիպտոսի թագաւորը Երուսաղէմի վրայ եկաւ և Աստուծու տան բոլոր գանձերը տարաւ, նոյնպէս և Որովամ թագաւորի տան հարստութիւններն և այն ամենը՝ ինչ որ գին ունէր։ Որովամը և Յերօբովամն իրանց ամբողջ կեանքում պարապած էին ներքին պատերազմներով։

Միութիւնը գորութիւն է։

«Արդարութիւն զազդ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազդս մեղք»։

Ա. Իսրայէլի թագաւորներից մէկի անունն էր Աքաաբ։ Սա ամուսնացաւ Սիդոն քաղաքի թագաւորի

Յեզաբել աղջկայ հետ. նրանց Բահաղ կուռքին Երկըրպագութեան էր տալիս և Սամարիայում էլ մի կատուն շինել տուաւ—սա իւր վատ գործերով իրանից առաջ եղած խրայէլի բոլոր թագաւորներից առաւել բարկացրեց Աստուծուն։ Յեզաբելը խեղդել տուաւ բոլոր մարդարէներին։ Այն ժամանակ Եղիան եկաւ Աքատարի մօտ և ասաց. «Այս տարի ոչ անձրև և ոչ ցող կիջնի Երկնքից»։

Բ. Աստուած ասաց Եղիալին. «Գնա և ընակուիր Քուաթի հեղեղատի մօտ—ջուրն այնտեղից կխմես, իսկ կերակուրդ ագուաւները կբերեն»։ Նա լսեց տիրոջ խօսքին և գնաց—ագուաւները նրա համար հաց և միս էին բերում, իսկ ջուրը հեղեղատիցն էր խմում։ Մի քանի օրից յետոյ հեղեղատի ջուրը ցամաքեց, որովհետև անձրև չէր գալիս; Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «Վեր կաց և գնա Սարեպտա, այնտեղ մի որբեալի կը նոջ հրամայել եմ, որ քեզ կերակրէ»։

Եղիան երբ քաղաքի դրանը հասաւ, տեսաւ մի որբեալրի կին, որ փայտ էր հաւաքում։ Մարգարէն ասաց. «Խնդրեմ ինձ համար փոքր ինչ ջուր և մի պատառ հաց բեր»։ Կինը պատասխանեց. «Աստուծու անունը վկայ լինի, որ մի բուռը ալիւրից և մի քիչ իւղից աւելի ոչինչ չունիմ. ահա այս փայտերը տանում եմ որ հաց թխեմ, ես և իմ միակ որդին ուտենք և սովից չմեռնենք»։ Եղիան ասաց նրան. «Գնա, մի վախենար. պատրաստիր քեզ համար էլ, ինձ համար էլ, որովհետև քո տաշտից ալիւրը և ամանից իւղը չպիտի պակասէ մինչև այն օրը, երբ Աստուած անձրև կուղարիէ»։ Կինը գնաց և այնպէս էլ արաւ. Տիրոջ ասածին համաձայն՝ տաշտից ալիւրը և ամանից իւղը երբէք չպակասեց։

Պ. Սովի երրորդ տարին Աստուած ասաց Եղիալին. «Գնա Աքատարի մօտ և ասա, որ անձրև պիտի թափեմ Երկըիս վրայ»։ Եղիան գնաց. Երբ Աքատարը Եղիալին տեսաւ, հարցրեց. «Այդ գո՞ւ ես, իսրայէլի խանգարիչ»։ Եղիան պատասխանեց. «Ես չեմ իսրայէլի խանգարիչը, այլ գո՞ւ և քո տունը, դուք Աստուծու պատուիրանները բարձի թողի էք արել և Բահաղին էք լսում։ Մարդ ուղարկիր և ժողովրդին հաւաքել տուր Կարմելոս լերան վրայ. նոյնպէս Բահաղի չորս հարիւր լիսուն մարդարէներին»։ Այդպէս էլ արաւ Աքատարը. Եղիան զուրս եկաւ ժողովրդեան առաջ և ասաց. «Մինչև Երբ պիտի կաղաք երկու կողմի վրայ, եթէ Աստուածը Եհովան է, նրան հետևեցէք, իսկ եթէ Բահաղն է՝ դրան լսեցէք»։ Ժողովուրդը ոչինչ չպատասխանեց. Եղիան շարունակեց. «Եհովալի մարդարէներից միայն ես եմ կենդանի մնացել, իսկ Բահաղինը չորս հարիւր լիսուն են։ Թող մեզ երկու եզր տան, մէկը սրանք վերցնեն, կոտորեն, գնեն փայտերի վրայ՝ առանց կրակի, իսկ միւսն էլ ես կվերցնեմ և նոյնպէս կվարուեմ։ Յետոյ զուք ձեր Աստուծու անունը տուէք, իսկ ես՝ Եհովալինը։ Այն Աստուածը, որ կըակով պատասխան կտայ, ահա նու է ճշմարիտը»։ Բոլոր ժողովուրդը պատասխանեց. «Նատ իրաւացի խօսք է»։

Բահաղի քուրմերը վեր առան մի եզր և այնպէս արին, ինչպէս ասած էր ու սկսեցին առաւօտից մինչև կէս օր Բահաղի անունը տալ և ասել. «Ո՛վ Բահաղ, պատասխան տուր»։ Բայց ոչ մի պատասխան չկար. Եղիան ծաղրում էր նրանց և ասում. «Բարձր ձայնով կանչեցէք. գուցէ նա զբաղուած է կամ ճանապարհոր-

դութիւն է անում. շատ կարելի է քնած է»։ Նրանք սկսեցին և՛ս աւելի բարձրաձայն աղաղակել. մարմինները սրով կտրատել, բայց ոչ մի պատասխան չէին ստանում։ Եղիան ասաց բոլոր ժողովրդին. «Եկէք ինձ մօտ»։ Նա սեղան կազմեց. շուրջը փոս փորեց. սեղանի վրայ փայտեր դարսեց. եզը կտրատեց, և դարսեց փայտերի վրայ։ Երեք անգամ ողջակիզի փայտի վրայ ջուր ածել տուաւ, այնպէս որ փոսը ծովի պէս ջրով լցուեց։ Այս ամենից յետոյ եկաւ Եղիան և ասաց. «Ո՛վ Աքրահամի, Իսահակի և իսրայէլի Աստուած, ցոյց տուր ալսօր, որ դու ես իսրայէլի Աստուածը, իսկ ես՝ քո ծառան. լսիր Աստուած, լսիր ինձ. թող այս ժողովուրդն իմանալ, թէ դու ես տէր Աստուածը և լետ դառնալ»։ Իսկոյն երկնքից կրակ ընկաւ և այրեց ողջակէզը։ Բոլոր ժողովուրդը երեսի վրայ ընկաւ և ասաց. «Եհովան է ճըշմարիտ Աստուածը»։ Եղիան պատասխանեց. «Բահաղի մարգարէներին բռնեցէք, որ չփախչեն»։ Բռնեցին և կիսոն հեղեղատի մօտ սպանեցին։ Եղիան ասաց Աքատրին. «Լծիր կառքդ և փայր իջիր, որ անձրեւ քեզ չըթրըցէ»։ Իսկոյն քամի փչեց. երկինքը ծածկուեց սեամպով և յորդ անձրեւ եկաւ։

Գ. Աքատրը պատմեց Յեղաբելին այս ամենը։ Յեղաբելը գեսպան ուղարկեց Եղիալի մօտ և պատուիրեց ասել. «Թո՞ղ Աստուածներն ինձ պատժեն, եթէ քեզ էլ այնպէս սպանել չտամ, ինչպէս դու Բահաղի քուրմերին սպանել տուիր»։ Եղիան փախաւ Յուդայի անապատը. նստեց մի ծառի տակ և ասաց. «Բաւական է, տէր Աստուած, առ իմ հոգին. ես իմ հայրերից լաւը չեմ»։ Նա պառկեց այնտեղ և քնեց։ Յետոյ վեր կացաւ քա-

ռասուն օր ճանապարհ գնաց՝ մինչև Աստուծու լեառը՝ Քորէլ և այնտեղ մի ալրի մէջ ապրում էր։ Աստուած ասաց նրան. «Լ՞ոչ ես անում ալստեղ, Եղիա»։ Նա պատասխանեց. «Ես նախանձախնդիր եղայ քո անուանը. իսրայէլի որդիքը քո ուխտը մոռացան. կործանեցին քո անսունով շինած սեղանները. քո մարգարէներին սրով կոտորեցին. ես միայն ազատուեցալ. իմ կեանքիս յետեւիցն էլ են ընկեր»։ Աստուած ասաց. «Դո՞ւրս արի, բարձրացիր լեառը։ Եւ ահա Աստուած անցաւ նրա մօտովը — մեծ փոթորիկ բարձրացաւ. լեռները և ապառաժները քիչ մնայ խորտակէր, բայց Աստուած հողմի մէջը չէր։ Հողմից յետոյ Երկրաշարժ եղաւ։ Աստուած Երկրաշարժի մէջն էլ չէր։ Երկրաշարժից յետոյ կրակ եղաւ, բայց Աստուած կրակի մէջն էլ չէր. իսկ կրակից յետոյ՝ մեղմ և բարակ ձայն լսուեց։ Այն ժամանակ Եղիան ծածկեց երեսը։ Աստուած ասաց նրան. «Դարձիր և Յէուին իսրայէլի վրայ թագաւոր օծիր, իսկ Եղիսէին՝ մարգարէ քո փոխարէն։ Իսրայէլի մէջ դեռ եօթը հազար հոգի ունիմ, որոնք Բահաղի առաջ ծունը չեն դնում։

Եղիան գնաց և Եղիսէին գտաւ վար անելիս։ Մարգարէն իւր վերաբկուն նրա վրայ ձգեց։ Եղիսէն թողէց եղները. համբուրեց հօրն ու մօրը. գնաց Եղիալի յետեից և ծառալում էր նրան։

«Երանի՛ հեղոց՝ զի նոքա ժառանգեսցին զերկիր»։  
«Զի զոր սիրէ Տէր, խրատէ»։  
«Առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր»։  
«Աստուծու մօտ ամեն բան կարելի է»։

67.

ԱՔԱԾԲՀ ՄԵՂԱՆՉՈՒՄԻ ՆԱԲՈՎԹԻ ԴԻՄ ԵՒ  
ԵՂԻԾՅԻ ՄԱՀԻ

Ա. Եզրայէլացի Նաբովթը Աքատեի պալատի մօտ մի այգի ունէր: Մի անգամ Աքատեի ասաց Նաբովթին: «Ճախիր ինձ քո այգին, ես կամենում եմ պարտէզ շինել, իմ պալատին մօտիկ է, իսկ դրա փոխարէն ես քեզ կամ մի ուրիշ աւելի լաւ այգի կտամ և կամ ինչ արժէ, կվճարեմ»: Նաբովթը պատասխանեց. «Աստուած մի արասցէ, որ ես իմ հայրենի ժառանգութիւնը ծախեմ»: Աքատե բարկացած տուն վերադարձաւ. անկողին մտաւ և ոչինչ չէր ուտում: Յեզարելը հարցրեց նրա տիրութեան պաաճառը և նա պատմեց: Յեզարելն ասաց. «Այդպէս ես իսրայէլի վրայ թագաւորում. վեր կաց և կեր. Եզրայէլացի Նաբովթի այգին քոնն է»: Կինն իսկոյն նամակ գրեց Աքատեի անունով և կնքով Եզրայէլի մեծամեծներին, ծերերին և պատուիրումէր նրանց ասելով. «Երկու անօրէն մարգու հրամայեցէք, որ վկայութիւն տան, թէ Նաբովթն Աստուծուն և թագաւորին հայուումէր. յետոյ նրան քաղաքից դուրս տարէք և քարկոծեցէք»: Քաղաքի մեծամեծները և ծերերն այգպէս էլ արին: Երբ Յեզարելը Նաբովթի քարկոծուելը լսեց, ասաց Աքատեին. «Վեր կաց, ժառանգիր Եզրայէլացի Նաբովթի այգին. նա այլ ևս կենդանի չէ»: Աքատեն այգին իջաւ և ժառանգեց:

Աստուած ասաց Եղիային. «Վեր կաց, գնա Աքատեի մօտ և ասա. «Որովհետև գու Նաբովթին սպանել տուիր և նրա այգին ժառանգեցիր, դրա փոխարէնն այնտեղ՝ ուր շները Նաբովթի արիւնը լիզեցին, քո ա-

րիւնն էլ կլիզեն, իսկ Յեզարելի մարմինը քաղաքի պարիսպների վրայ կուտեն»:

Այս բանից երեք տարի յետոյ՝ Աքատե պատերազմ ունեցաւ ասորւոց հետ: Մի մարդ լարեց աղեղը. խփեց թագաւորին. նետը զրահիցն անցաւ և արիւնն ոկսեց հոսել կրծքից: Կառքն արիւնով լցուեց: Թագաւորը մեռաւ Երեկոյեան դէմ. նրա մարմինը Սամարիա ըերին: Երբ կառքն աւազանի մօտ լուանում էին՝ շները լիզում էին նրա արիւնը: Այսպէս կատարուեց Տիրոջ խօսքը:

Մի տարուց յետոյ Յեռւն թագաւորեց Իսրայէլի վրայ և իւր բանակով տեղափոխուեց Եզրայէլ քաղաքը: Յեզարելը զարդարուած՝ պատուհանից գուրս էր նայում: Յէռւն ասաց ծառաներին. «Վայր ձգէք դրան»: Երկու մարդ թագուհուն վայր գլորեցին—նրա արիւնով ներկուեց պատը: Զիերը ոտի տակ առան, իսկ շները կերան նրա մարմինը: Յէռւն ջնջէլ տուաւ Աքատեի տան բոլոր ժառանգներին:

Բ. Եղիան զգաց իւր մահուան օրը, նա ասաց Եղիսէին: «Մնա այսաեղ, Աստուած ինձ Յորդանան է ուղարկում»: Եղիսէն ասաց. «Վկայ լինի կենդանի Աստուածը, որ քեզնից չեմ բաժանուիր»: Երկուսն էլ գնացին Յորդանան: Եղիան ասաց Եղիսէին: «Մահուանիցս առաջ խնդրիր, ինչ որ կամենում ես»: Եղիսէն պատասխանեց. «Թո՛ղ քո հոգին կրկնապատիկ իջնի իմ վրայ», Եւ Երբ նրանք միասին գնում էին, Երկնքից հրեղէն կառք իշաւ՝ հրեղէն ձիաներ լծած. Եղիան մէջը նստեց և մըրորիկը նրան Երկինք բարձրացրեց: Եղիսէն նայում էր նրա յետելից և աղաղակում, «Հայր, հայր, կառքդ իսրայէլի եւ հեծեալք նորա»: Նրան այլ ևս չտեսան:

«Որ զրադարտէ զտնանկն, բարկացուցանէ զարարիչն նորաս։  
Աղքատին նեղողը՝ նրա արարչին է անարգում։  
Մի խաբիք, Աստուած ոչ արհամարի. զի զոր ինչ սերմանէ  
մարդ, զնոյն եւ հնձեցէ»։

Մի խաբուիք, Աստուած թոյլ չի տայ որ արհամարեն, որով-  
հետև։

68.

ԻՍՐԱՅԵԼԻ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱԼԻՈՐՈՒԹԵԱՆ  
ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ա. Խորայէլի որդիքը յաճախ մեղանչում էին Աս-  
տուծու դէմ և հեթանոս կեանք էին վարում։ Բոլոր քա-  
ղաքներում կռատուններ էին շինել. Բահաղին երկրպա-  
գութիւն էին տալիս. Հաւատում էին վհուկներին և  
կախարդներին ու նրանց հետ ամեն տեսակ չարութիւն-  
ներ գործում։ Աստուած մարգարէի բերանով յայտնում  
է նրանց ասելով. «Թողէք ձեր չարութիւնները. հետե-  
ւեցէք իմ պատուիրաններին»։ Նրանք երբէք ուշք չէին  
դարձնում այս խօսքերին, արհամարհում էին նրա պա-  
տուիրանները և մոռանում այն դաշը, որ Աստուած  
նրանց պապերի հետ կապել էր։ Դրա համար էլ Աս-  
տուած աչքից ձգեց նրանց, ինչպէս և յայտնել էր մար-  
գարէի բերանով,

Խորայէլի վերջին թագաւորն եղաւ Ովսէն։ Սա ևս  
Աստուծու ճանապարհով չգնաց. Ասորեստանի Սաղմա-  
նասար թագաւորը սրա դէմ պատերազմ գուրս եկաւ։  
Ովսէն յաղթուեց, հպատակ դարձաւ և հարկ էր վճա-  
րում։ Բայց որովհետև նա եգիպտոսի թագաւորի հեա  
դաշն էր կապել և տարեկան հարկը կանոնաւոր կեր-  
պով չէր ուղարկում Ասորեստան, ուստի Սաղմանասարը

Խորայէլի թագաւորութեան վրայ եկաւ և Սամարիան  
երեք տարի շարունակ պաշարեց։ Յետոյ քաղաքն առաւ  
և խորայէլացւոց գերի տարաւ Ասորեստան։ Նա իւր  
երկրից բազմաթիւ հեթանոսներ բերել տուաւ և Սա-  
մարիայի քաղաքներում բնակեցրեց։ Երկրի մէջ խորայէ-  
լացիք ևս մնացել էին, որոնք Տիրոջը հաւատում էին։  
Հեթանոսները խառնուեցան այս մնացորդ խորայէլացի-  
ների հետ և սրանցից յուռաջացաւ Սամ արացի կո-  
չուած ժողովուրդը, որը թէև աղօթում էր Տիրոջը,  
բայց միւնոյն ժամանակ պաշտում էին և օտար աս-  
տուածներ։

Բ. Երբ Սաղմանասարն խորայէլի թագաւորութիւ-  
նը կործանեց, Յուդայի երկրում թագաւորում էր Եղե-  
կիան։ Սա Աստուծու ճանապարհովն էր գնում. կործա-  
նեց կռքերի սեղանները. բաց արաւ Տիրոջ տան գռնե-  
րը, որ իւր հայրը կռպան էր տուել և պատուիրեց Աս-  
տուծու տունը մաքրել։ Դեսպաններ ուղարկեց Խորայէ-  
լի և Յուդայի երկրները և Հրաւերում էր ամենքին  
Երուսաղէմ Պասէքի տօնը միասին կատարելու։ Դես-  
պանների բերանով յայտնեց ամենքին. «Ով Խորայէլացի-  
ներ, գարձէք դէպի ձեր Աստուածը. նա ողորմած է.  
բարի է. նա իւր երեսը ձեզնից չի դարձնի, եթէ դուք  
նրան դառնաք»։ Մեծ բազմութիւն հաւաքուեց Երու-  
սաղէմում։ Խորայէլի թագաւորութիւնից ևս մարգիկ  
էին եկել։ Այսաեղ բազմութիւնն ինքը կործանեց Բա-  
հաղի սեղանը. Կեդրոնի ձորակը գլորեց և եօթն օր շա-  
րունակ Պասէքի տօնն էին կատարում։ Սողոմոնի օրից  
մինչև այսօր այսպիսի ուրախութիւն չէր տեսնուած  
Երուսաղէմում։ Այսպէս Եղեկիան Աստուծու ճանապար-  
հովն էր գնում և Աստուած էլ միշտ նրա հետն էր։

Ասորեստանի նոր թագաւոր Սենեքերիմը Յուղալի թագաւորութեան վրայ եկաւ, վերցրեց շատ քաղաքներ և պաշարեց Երուսաղէմը: Դեսպանի բերանով քաղաքի պարիսպների վրայ գտնուող մարդկանցը յայտնեց. «Ասորեստանի մեծ թագաւորի խօսքին լսեցէք. Եզեկիալին մի լսէք, եթէ նրա Աստուածն ազատող լինէր, երկիրը ինչու չազատեց Ասորեստանի թագաւորի ձեռից»: Երբ Եզեկիան այս բանը լսեց, պատառեց հանդերձները, գնաց Տիրոջ տունը և մարդ ուղարկեց Եսայի մարգարէի մօտ ասելու. «Հեթանոսների թագաւորը նախատում է կենդանի Աստուծուն, աղօթիր մեզ համար»: Եսային պատասխան ուղարկեց ասելով. «Մի վախենար, որով հետեւ Աստուած այսպէս է ասում Ասորեստանի հեթանոս թագաւորի մասին—նա քաղաք չի մտնի, այլ կըդառնայ այն ճանապարհով, որով եկել է»: Այդ միենոյն գիշեր Աստուծու հրեշտակն ասորեստանցւոց բանակից 185,000 մարդ կոտորեց: Սենեքերիմը յետ դարձաւ նինուէ:

Եզեկիալի որդի Մանասէն շեղուեց Աստուծու ճանապարհից. սկսեց կուռքերին երկրպագութիւն տալ: Տիրոջ տաճարի մէջ Բահաղի համար սեղաններ շինեց. պահում էր կախարդներ և հմայողներ, որոնք ժողովը դին գալթակղեցնում էին և այսպէս Աստուծուն աւելի էին բարկացնում՝ քան թէ հեթանոսները: Մանասէն շատ անմեղների արիւն ևս թափեց: Մարգարէի բերանով Աստուած ասաց նրան. «Ես այնպիսի չարիք պիտի բերեմ Երուսաղէմի և Յուղալի տան վրայ, որ լսողներին ձայն տան»:

Սրանից յետով Յուղալի տանից շատ վատ թագաւորներ եղան: Յովակիմը, որ Յուղալի թագաւորներից

մինն էր, նմանապէս չար ճանապարհով գնաց: Սրաժամանակ Բաբելոնի Նաբուգոնոսոր թագաւորը պաշարեց Երուսաղէմը. Թագաւորն անձնատուր եղաւ: Նաբուգոնոսորը վեր առաւ թէ տաճարի և թէ պալատի գանձերը. բոլոր Եշուաններին, հիւսներին և դարբիններին գերի տարաւ Բաբելոն, նմանապէս թագաւորին իւր ընտանիքով—մնացին միայն աղքատները: Սեղեկիալին թագաւոր նշանակեց Յովակիմի տեղ:

Սա ևս Աստուծու ճանապարհով չգնաց և ապրատամբուեց Նաբուգոնոսորի դէմ: Բաբելոնի թագաւորը երկրորդ անգամ եկաւ Երուսաղէմի վրայ իւր բոլոր զօրութեամբ—քաղաքի շուրջը պարիսպ կանգնեց և պաշարեց մէկ և կէս տարի: Սովը սաստկացաւ քաղաքում: Սեղեկիան և իւրայինները գիշերով փախան քաղաքից, բայց թշնամիները բռնեցին և Նաբուգոնոսորի մօտ տարան, որ նրա դատաստանը կտրէ: Սեղեկիալի որդւոց իւր աչքի առաջ մորթեցին. իրան էլ կուրացրին և շղթաներով կապեցին ու գերի տարան Բաբելոն:

Միւնոյն գիշերը, երբ Սեղեկիան փախաւ, թշնամիները մտան Երուսաղէմ. կոտորեցին բնակիչներին. կողոպտեցին բոլորին. ալրեցին Տիրոջ տաճարը. թագաւորի պալատը և քաղաքի պարիսպներն էլ կործանեցին, գետնին հաւասարեցրին: Մնացած ժողովուրդը և բոլոր գանձերը Նաբուգոնոսորը Բաբելոն տարաւ: Այսպէս Յուղալի տունը կործանուեցաւ:

«Արդարութիւն զազդ բարձրացուցանէ, նուազեցուցանէն զազդս մեղք»

«Մէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն»:

Յաւիտենական սիրով սիրեցի քեզ, հէնց դրա համար էլ քեզ ինձ մօտ բերեցի:

69.

### ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱԽԱՇՆԸ

Ա. Նաբուգոնոսոր թագաւորը հրամայեց, իսրա-էլացիներից—գեղեցկագէմ և ընդունակ երեխաներ ընտ-րեն, որ թագաւորին ծառայեն և քաղդէացւոց լեզուով գրել և խօսել սովորեն: Սրանց մէջն էր Դանիէլը իւր երեք ընկերներով: Թագաւորը հրամայեց որ իւր սեղա-նից կերակրեն նրանց: Բայց Դանիէլը և երեք ընկեր-ները որոշեցին չուտել թագաւորի սեղանի կերակուր-ներից, որովհետև Մովսէսի օրէնքին հակառակ էր, ուս-տի խնդրեցին ներքինապետին թոյլ տալու իրենց միայն կանաչեղէն ուտել և ջուր խմել: Ներքինապետը տասն օր ժամանակ տուաւ նրանց փորձելու համար և տե-սաւ, որ աւելի գեղեցիկ դարձան՝ քան թէ թագաւորի սեղանից ուտողները: Աստուած իսրայէլի մանուկներին հանճար և իմաստութիւն, իսկ Դանիէլին երազ մեկնե-լու շնորհ պարգևեց: Նաբուգոնոսորը մի քանի ժա-մանակից յետոյ խօսեցրեց և նկատեց, որ նրանք տասն անգամ աւելի հանճարեղ, իմաստուն են ամեն բանում քան թէ իւր ամրող թագաւորութեան մէջ եղող աստե-քան թէ իւր ամրող թագաւորութեան մէջ եղող աստե-քանքետները և մոգերը: Թագաւորը Դանիէլին և նրա ե-րեք ընկերներին մեծ պաշտօններ յանձնեց:

ԴԱՆԻԷԼՆ ԱՌԻՒԾՆԵՐԻ ԳԲՈՒՄ: Բարելոնում մի վիշապ կար, որին ժողովուրդը պաշտօնմ էր: Մի անգամ թագաւորն ասաց Դանիէլին: «Արդեօք սրան ևս պէտք է ասես, թէ պղըն-ձից է, ահա սա ուտում է և խմում. Ակ, երկրպագութիւն տուր

սրան»: Դանիէլը պատասխանեց. «Ես միայն իմ տէր Աստու-ծուն եմ երկրպագութիւն տալիս. նա է միակ կենդանի Աստու-ածը: «Թագաւոր, իրաւոնք տալր, որ այդ վիշապին, որին ժո-ղովուրդը Աստուած է համարում» առանց սրի և գաւազանի սպանեմ: Թագաւորն իրաւոնք տուաւ: Դանիէլը վեր առաւ ձիւթ, ճարպ և մազ. եփեց բոլորը միասին. գունտ արեց և ձգեց վիշապի առաջ: Վիշապը կերաւ և ոլայթեց: Այն ժամանակ Դանիէլն ասաց Ժողովրդին. «Տեսնում էք, թէ ումն էք պաշ-տում»:

Երբ այս եղելութեան համբաւը բարելացիներին հասաւ, խխստ բարկացան, հաւաքուեցան թագաւորի մօտ ու ասում էին. «Մեր թագաւորը հրէա է գառել—նա Բէլի կուռքը կոր-ծանել տուաւ, վիշապին սպանեց և քուրմերին կոտորեց»: Ժո-ղովրդի դժոն մասը թագաւորի մօտ եկաւ և ասաց. «Դանիէ-լին մեզ յանձնիր ապա թէ ոչ քո ընտանիքն էլ կկոտորենք»: Դժոնները թագաւորին նեղը ձգեցին: Թագաւորն ստիպուեց Դանիէլին նրանց ձեռը մատնել: Ժողովուրդը Դանիէլին առիւծ-ների գուրը ձգեց, որտեղ նա վեց օր մնաց: Դրի մէջ եօթն առիւծ կար, որոնցից իւրաքանչիւրն օրական երկու մարդ և երկու զառն էր ուտում: Դանիէլին գուրը ձգելուց յետոյ առիւծներին ոչինչ չտուին, որպէսսի զավանները սոված մը-նան և պատաստուան նրան:

Այդ ժամանակում Հրէաստանի մէջ ապրում էր Ամբակում մարզաբէն: Սա թան էր եփել և տանում էր դաշտը մշակների համար: Աստուծու հրեշտակը երեաց նրան և ասաց. «Այդ ճա-շը տաք Բաբելոն Դանիէլին, նա առիւծների գրումնէ, Ամբա-կումն ասում է. «Ես Բաբելոն չեմ եղած, չգիտեմ թէ առիւծ-ների գուրը որտեղ է»: Աստուծու հրեշտակը բարձրացրեց նրան և տարաւ Բաբելոն: Ամբակումը ճայն տուաւ Դանիէլին և ա-սաց. «Արի և ստացիր Աստուծու ուղարկած ճաշը»: Դանիէլն ասաց. «Ո՛վ Աստուած, զու շմոռացար ինձ, դու չես մոռանում քեզ սիրողներին»: Դանիէլը վեր կացաւ և ճաշը կերաւ, իսկ Ամբակումին հրեշտակը կրկին անգամ տարաւ իւր առաջուան տեղը:

Եօթներորդ օրը թագաւորը գրի մօտ եկաւ, որ Դանիէ-

լին ողբայ՝ սուր անէ նրա վրայ։ Երբ գրին մօտեցաւ, տեսաւ որ Դանիէլը նստած է, իսկոյն բարձր ձայնով աղակակեց և ասաց. «Ո՛վ Դանիէլի Աստուած, դու մեծ ես, բացի քեզնից ուրիշ Աստուած չկայ»։ Սրանից յետոյ իսկոյն հրամայեց, որ Դանիէլին գրից հանեն, իսկ նրա թշնամիներին գուբը ձգեն։ Այդպէս էլ արին։ Սովործները մի ըոպէի մէջ ամենին էլ պատառ պատառ արին։

Փ. Նաբուգոդոնոսորը մի ոսկէ արձան շինել տուաւ։ կանչեց իւր մեծամեծներին և Բարելոնի ժողովրդին ու ասաց. «Երբ դուք փողի ձայնը լսէք, այս ոսկէ արձանի առաջ պէտքէ չոգէք և երկրպագութիւն տաք, իսկ ով չի հնազանդի, իսկոյն կրակով բորբոքած հնոցը կը ձգուի»։ Փողը վիշելուն պէս՝ ամենքն էլ ընկան գետնի վրայ և ոսկէ արձանին երկրպագութիւն տուին։ Մի քանի քաղդէացիներ գանգատուեցին թագաւորին՝ Դանիէլի երեք ընկերներից և ասացին. «Սրանք անպատճում են քո հրամանը և կանգնեցրած ոսկէ արձանիդ երկրպագութիւն չեն տալիս»։ Նաբուգոդոնոսորը բարկացաւ—կանչել տուաւ երեքին էլ և ասաց. «Եթէ դուք այս արձանին երկրպագութիւն չէք տալ, ձեզ իսկոյն կրակը կձգեն, տեսնեմ այն որ Աստուածն է, որ ձեզ իմ ձեռքից պէտքէ ազատէ»։ Նրանք պատասխանեցին։ Մեր Աստուածը մեզ կազատէ և եթէ չկամենալ ազատել, մենք քո արձանին դարձեալ երկրպագութիւն չենք տալ»։

Նաբուգոդոնոսորն աւելի ևս բարկացաւ. հրամայեց հնոցի կրակը սաստկացնել. կտպել տուաւ երեքին էլ և շորերով բորբոքուած հնոցի մէջ ձգեց։ Թագաւորը նայեց, զարհուրեց, հարցրեց իւր խորհրդականին և ասաց. «Չէ որ մենք երեք մարդ ձգեցինք հնոցի մէջ, ես չուրսն եմ տեսնում. Նրանք ազատ ման են գալիս կրակի մէջ և անվնաս են, իսկ չորրորդի կերպարանքն

աստուածների որդւոց կերպարանքին է նման»։ Թագաւորը հնոցին մօտեցաւ և ասաց. «Ո՛վ դուք Աստուածու ծառաներ, դուրս եկէք»։ Դուրս եկան կրակի միջից։ Կրակը նրանց մի մազն էլ չէր այրել և ոչ շորերը խանձել։ Նաբուգոդոնոսորը պատասխանեց. «Օրհնեալ է այն Աստուածը, որ ուղարկեց իւր հրեշտակին և ազատեց իւր վրայ լոյս գնող ծառաներին։ Այսուհետեւ իմ հրամանն այսէ—ով այս մարդկանց Աստուածուն անպատուէ, կտոր—կտոր կլինի»։ Թագաւորը մեծ իշխանութիւն տուաւ երեքին էլ Բարելոնի գաւառումը։

Գ. Մի անգամ Նաբուգոդոնոսորը երազ տեսաւ։ Երբ քնից զարթեց, խիստ վախեցաւ։ Կանչել տուաւ բոլոր մողերին, հմալողներին և կախարդներին, որ երազը մեկնեն։ Նրանք ասացին թագաւորին. «Պատմիր մեզ քո երազը, որ մեկնենք»։ Իսկ թագաւորը պատասխանեց. «Երազը մոռացել եմ, եթէ դուք չէք գտնի և չէք մեկնի, ամենքդ էլ մահու պատիժ կսահնաք»։ Նրանք պատասխանեցին. «Երկրիս վրայ մարդ չկայ, որ թագաւորի պահանջածն իմանայ, այդ անկարելի բան է»։ Թագաւորը խիստ բարկացաւ և հրամայեց Բաբելոնի բոլոր իմաստուններին կոտորել։ Երբ Դանիէլն այս վճիռն իմացաւ, խնդրեց իրեն ժամանակ տալ. տուն գնաց և իւր ընկերների հետ աղօթում էր Աստուածուն։ Գիշերուայ գաղտնիքը տեսիլքում յալտնուեց Դանիէլին։ Նա շտապով գնաց թագաւորի մօտ և ասաց. «Այն գաղտնիքը, որ թագաւորը պահանջում է իմաստուններից, միայն երկնքի Աստուածը կարողէ յայտնել և նա յայտնումէ, թէ ինչ պիտի պատահի ապագայում։ Ո՛վ թագաւոր, դու երազում տեսել ես մի մեծ արձան. Նրա գլուխը մաքուր ոսկուց էր, կուրծքը և բազուկները՝ արձաթից, մէջքն ու ե-

ըանքները՝ պղնձից, սրունքները երկալից, ոտների  
մէկ մասը երկաթից, իսկ միւս մասը՝ կաւից: Մի քար  
պոկուեց՝ առանց ձեռքի, դիմաւ արձանի ոտներին և  
կոտրատեց: Այն ժամանակ փշուեցան երկաթը, կաւը,  
պղնձը, արծաթը, ոսկին և անյայտացան, իսկ գլորուող  
քարը մեծացաւ լերան չափ և լցրեց բոլոր երկիրը: Մա-  
երազն է, այժմ մեկնութիւնը—դու թագաւորների  
թագաւորն ես. դու ես այն ոսկէ գլուխը. քեզանից  
յետոյ ուրիշ թագաւորութիւն կգայ, որ քո թագաւո-  
րութիւնից տկար կլինի. յետոյ երրորդ թագաւորութիւ-  
նը կգայ, որը պղնձիցն է: Զորըորդը երկաթի նման  
խիստ կլինի և ամեն բան կփշէ, կջարդէ—սա էլ մա-  
սամբ զօրեղ և մասամբ թուլ կլինի: Այդ ժամանակնե-  
րումն Աստուած երկնքիցը մէկ թագաւորութիւն կյա-  
րուցանէ, որ կփշէ, եղած բոլոր թագաւորութիւննե-  
րը—այն թագաւորութիւնը յաւիտեան կտեէ»: Նաբու-  
գողոնոսորը երեսի վրայ ընկաւ և ասաց. «Յիրաւի, որ  
ձեր Աստուածը ամենից մէծն է. նա է թագաւորների  
տէրը և գաղտնիքներ յայտնողը».

Թագաւորը Դանիէլի աստիճանը բարձրացրեց, շատ  
պարզեներ տուաւ և իշխան նշանակեց Բաբելոնի ամ-  
բողջ գաւառի վրայ:

**Պ.** Երբ Բաղդասարը Բաբելոնի վրայ թագաւորում-  
էր, պարսից Կիւրոս թագաւորը պաշարեց քաղաքը և  
կամենում էր առնել: Այդ միջոցին Բաղդասարը մեծ  
խնճուք ունէր, ուր հրաւիրուած էին իւր թագաւորու-  
թեան բոլոր մեծամեծները: Ճաշի ժամանակ հրամայեց,  
որ նաբուգողոնոսորի ձեռքով Երուսալէմից գերի բեր-  
ուած ոսկեայ սրբազան անօթները բերեն և նրանցով  
զուարճանան: Բերին, սկսեցին խմել՝ թէ մեծամեծները

և թէ կանալքը: Գինին խմում էին և գոհութիւն մա-  
տուցանում ոսկեայ, արծաթեալ, պղնձեալ, երկաթեալ,  
փայտեալ և քարէ չաստուածներին: Նոյն ժամին երե-  
ւեցան մարդկային ձեռի մատներ, որոնք գրում էին  
արքունի դահլիճի պատի վրայ: Երբ թագաւորը ձեռը  
նկատեց, գոյնը փոխուեց, ոտներն սկսեցին գողգողալ:  
Թագաւորն իսկոյն մոգերին իւր մօտ պահանջեց: Մոգե-  
րը եկան, բայց նրանցից և ոչ մինը կարողացաւ կար-  
դալ և մեկնել: Այս բանից թագաւորն աւելի վախե-  
ցաւ—ահը պատեց մեծամեծներին: Թագուհին պատմեց  
իմաստուն Դանիէլի մասին, որին իսկոյն կանչեցին: Դա-  
նիէլն ասաց թագաւորին. «Որովհետեւ դու մեծամտե-  
ցիր և արհամարհեցիր երկնից Աստուծուն, դրա համար  
ևս նա այդ ձեռը և այդ գիրն է ուղարկել: Դրուածքն  
այս է—մանէ, թեկեղ, փարէս, այսինքն, չափեցի, կըշ-  
ռեցի և բաժանեցի: Քո թագաւորութեան օրերը չա-  
փած են, քեզ կշռեցին և թեթև գտան. քո թագաւո-  
րութիւնը կբաժանուի և պարսիկներին կտրուի:

Այդ միենոյն գիշերում Բաղդասար թագաւորն ըս-  
պանուեց. պարսից Կիւրոսն առաւ քաղաքը և բարե-  
լացւոց թագաւորութեանը տիրեց:

**Ե.** Կիւրոսի թագաւորութեան առաջին տարումն  
Աստուած զարթեցրեց նրա սիրտը, նա հրաման հանեց  
ամենուրեք ասելով. «Երկնքի Աստուածը՝ Եհովան ինձ  
է տուել բոլոր թագաւորութիւնները, նա հրամայեց որ  
Երուսաղէմումն իրա համար մի տուն շինեմ: Այժմ ձե-  
ղանից ով իրան՝ նրա ժողովուրդն է համարում, թող  
Երուսաղէմ գնալ և Աստուծու տունը նորից կառուցա-  
նէ: Այն ժամանակ վեր կացան Յուգալի և Բենիամինի  
տան տոհմապետները, քահանաները և ղետացիները—

առ հասարակ այն անձինքը, որոց հոգին Աստուած զարթեցրեց, իսկ նրանք, որոնք չկարողացան դառնալ, տուեցին գնացողներին արծաթեալ և ուկեալ անօթներ և ուրիշ ստացուածներ: Կիւրոս թագաւորն էլ տուաւ սրբազան անօթներ, որոնք Նաբուգոդոնոսորը աւար էր բերել Երուսաղէմիցը: Հայրենիք դարձողների թիւը 42, 000-ից աւելի էր բացի՝ նրանց ծառաներից և աղախիններից: Զօրաբարէլը առաջնորդումէր նրանց: Յեսուն և քահանայապետը Երուսաղէմ հասնելուն պէս, սեղան կազմեցին և զոհ էին մատուցանում Աստուծուն: Երկրորդ տարին սկսեցին արդէն տաճարը կառուցանել: Հիմքը ձգելիս քահանաներն զգեստաւորուած էին և փողեր ունէին, իսկ դետացիները ծնծղաներով օրհնում և փառանումէին Աստուծուն Դաւթի երգերով: Ամբողջ ժողովուրդը երգումէր նրանց հետ, ամենն էլ գովում և օրհնաբանումէին Տիրոջը, որ նա բարի է, որ նրա ողորմութիւնը յաւիտեան է իսրայէլի վրայ: Իսկ ծերերից շատերը, որոնք հին տաճարը տեսել էին, դառնապէս լաց էին լինում:

Երբ Սամարացիներն իմացան, որ գերութիւնից դարձող հրէաներն սկսել են Աստուծու համար տուն շինել, եկան Զօրաբարէլի և ժողովրդի տոհմապետների մօտ ու ասացին. «Մենք ևս կամենում ենք Աստուծու տան շինութեան մասնակից լինել»: Իսկ նրանք պատասխանեցին. «Չի վայելի ձեզ և մեզ միասին մեր Աստուծու տունը կառուցանել, մենք կամենում ենք միայնակ շինել»: Այդ օրից սկսած Սամարացիները աշխատում էին խանգարել շինութիւնը և ժողովրդին ստուցնել: Բայց Աստուած իսրայէլացոց հետն էր: Նրանք աւար-

տեցին տաճարը և մեծ հանդէսով օծեցին: Սրանից յետոյ Պասէքի տօնը ևս կատարեցին:

Մի քանի տարի անց Եզրասը, որը մի ընդունակ և գիտնական մարդ էր, դարձաւ Երուսաղէմ. սորահետ եկան շատ քահանաներ դետացիներ և մեծ բազմութիւն ժողովրդեան: Նա վերականգնեց աստուածապաշտութեան կարգը Մովսէսի գրած կանոններին համաձայն և հաւաքեց այն բոլոր գրուածները, որոնք Մովսէսից սկսած յարտնի էին: Ժողովրդից ոմանք հեթանոս կանայք ունէին: Եզրասն Աստուծու անունով պատուիրեց նրանց, որ բաժանուեն իրանց կանանցից և բաժանուեցան:

Պարսից թագաւորի տակառապետ Նէեմին Յուդայի տան մի քանի մարդկանցց լսեց, որ Երուսաղէմի պարիսպները գեռ ևս կործանուած են, ուստի զնաց իւր թագաւորի մօտն և ասաց. «Եթէ քեզ հաճելի է, արձակիր ծառակիդ, որ գնամ և իմ հայրենի քաղաքը շինեմ»: Թագաւորը թոյլ տուաւ նրան: Նէեմին վերադարձաւ հայրենիք և խօսեց ժողովրդի տոհմապետների հետ: Այն ժամանակ սկսեց քաղաքի պարիսպները և գոները շինել: Երբ այս բանը սամարացիներն իմացան, հաւաքուեցան, խումբ կազմեցին և սկսեցին պատերազմել հրէաների հետ: Նէեմին ասաց. «Մեր Աստուածը մեր փոխարէն կպատերազմէ» և պահապաններ նշանակեց թշնամիների դէմ, որ գիշեր և ցերեկ հսկեն: Հրէաների կէսը զինուորուած՝ զէնքը ձեռին—սրերով, նիզակներով, աղեղով և նետով պատերազմում էին. իսկ միւս կէսը պարիսպներն էր կառուցանում—ամենայն մի աշխատաւոր սուրը մէջքին ունէր կապած. նրանք մի ձեռով աշխատում էին, իսկ միւսով զէնքն ունէին բռնած: Այս

ձեռվ վերջացրին քաղաքի պարիսպները։ Սրանից լետոյ  
Նէեմին բոլոր ժողովրդին Յուգայի քաղաքներից Երու-  
սաղէմ հաւաքեց։ Եզրասը դուրս բերաւ Մովսէսի օրի-  
նաց գիրքը։ կանգնեց ժողովրդի առաջ և կարդում-  
էր՝ առաւօտից մինչև երեկոյ։ Բոլոր ժողովուրդն ար-  
տասւում էր օրինաց խօսքերը լսելիս։ Եզրածն ասաց.  
«Եկէք Աստուծու Հետ հաստատ դաշը կապենք»։ Նրանք  
խոստովանեցին իրանց յանցանքը և երդուեցին, որ Աս-  
տուծու օրէնքների համաձայն կվարուեն, նրա պա-  
տուիրաններից չեն անցնի»։

«Որ համբերկացն իսովառ, նա կեցցէ»։

Ով որ մինչև վերջը համբերէ, նա կփրկուի,

Ոչ սպառնալեօք իմովք շարժել զերինս, եւ փոփոխել  
զբուրս։ Ոչ ողորմութիւն իմ պակասենցի ի քէն եւ ոչ ուխտ  
խաղաղութեան քո անցցէ»։

Լեռները կշարժուեն և բրոբները կսասանին, բայց իմ  
ողորմութիւնը քեզանից չի պակասի և ոչ իմ խաղաղութեան  
ուխտը կփոխուի»։

---

Երես. 65. իբրև ընդհանուր վերնագիր տպուած է։  
«Թ. Դատաւորների դար».

Պէտք է լինի. «Խորակէլացւոց ազգի պատմութիւնը»։





4n

449

0026833

2013

449



452

